# ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԷ

ԺԵ ՏԱՐԻ

Ապրիլ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Դ

1958

169

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հարության տեսիլը . . . . . 3

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորական հեռագիրը Միացյալ Արաբական Հանրապետության Նախագահ Նորին Գերազանցություն Գամալ Աբդել Նասերին և Վեհափառ Հայրապետի անունով ստացված պատասխանը . . . . 6

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորական հեռագիրը Իրանի Շահինշահ Նորին Վեհմություն Մուհամմեդ Ռիզա Փեհլեվիին Նովրուզի (պարսկական նոր տարվա) առթիվ և Վեհափառ Հայրապետի անունով ստացված շնորհակալական պատասխանը . . 7

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի շնորհավորական գրությունը քույր եկեղեցիների հոգևոր պետերին . . . . . 8

Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի շնորհավորական գրությունը նվիրապետական Աթոռների գահակալներին և բոլոր առաջնորդներին . . . . . 9

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ քարոզը Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ . . . . . 10

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . . . . 14

Շարական Սուրբ Զատկի . . . . . 15

Գովեա՛, Երուսաղէմ, զՏէր... . . . . . 15

Մ Ա Յ Ր   Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ . . . . . 16

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1957 թվականի տարեկան հաշվեկշիռը . 18

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1958 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը . . . . . 22

Հայաստանյայց Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի Թեմական խորհրդի 1956—1957 տարեշրջանի տարեկան տեղեկագիրը . . . . . 24

Լոս-Անջելոսի հայոց Սուրբ Հակոբ եկեղեցու օծումը և հանդեսը . 28

Սան-Ֆրանցիսկոյի հայոց Սուրբ Հովհաննես եկեղեցու օծումը . 30

ԹԱԴԵՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ— Զվարթնոցի շուրջը . . . . 31

Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ— Ներսես Շնորհալին և իր ժամանակաշրջանը . . 39

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ— Մայրավանք . . . . . 45

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ— Գլաձորի դպրոցի մեծ մանրանկարիչ Թորոս Տարոնացին . . . . . 53

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ— Մակար Եկմալյան . . . . . 59



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1958 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԷՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԻԼՔԸ

Զատիկը հայկական ժողովրդական տոներից մեկն է իր լայն առումով և խորհրդով: Քրիստոսի հրաշափառ հարության տոնը, որ քրիստոնյա աշխարհի մեծագույն տոնն է, որպես հոգևոր ցնծության և ուրախության հանդիսակատարություն, մեր լեզվի մեջ կոչվում է նաև ԶԱՏԻԿ:

Զատիկը նախնաբար Հայաստանում նախաքրիստոնեական մի տոն էր, «Հայոց հեթանոսության ժամանակեն մնացած, եղանակներու հատման կամ գիշերահավասարի տոնը, որ քրիստոնեության մեջ Պասեքի քրիստոնեացած հրեական տոնին հետ փոխանակված է, ինչպես եղած է Վարդավառ և Ծաղկազարդ անուններուն և տոներուն համար ալ» (Օրմանյան, «Համապատում», էջ 706):

Զատիկը ուրեմն գարնան նվիրված տոն էր, երբ անցնում էր մահաշունչ ձմեռը և փչում գարնան կենդանարար շունչը, հարություն տալով մեռած բնությանը, և երբ գարնան ջերմ շնչի տակ ծլում, կանաչում էր ծառ ու ծաղիկ, կենդանանում սար ու հանդ, կանաչով ու երփներանգ ծաղիկներով, հայ ժողովուրդը ողջունում էր գարնան գալուստը՝ հանդիսություններով և Զատկի տոնով:

Գարնան վերազարթոնքին նվիրված խորհրդապաշտական տոներ ունեցել են նաև ուրիշ հեթանոս ժողովուրդներ, բայց Զատիկը, որպես գարնան տոն, առանձին շքով ու ջերմությամբ տոնել է միայն հայ ժողովուրդը:

Քրիստոսի Հարության տոնն էլ, այսինքն հայկական նոր Զատիկը, Նիկիայի տիեզերական առաջին ժողովի որոշումով (325 թ.) տոնվել է միայն գարնան գիշերահավասարի լուսնի լրման հաջորդող առաջին կիրակի օրը: Այսպիսով, Զատկվա քրիստոնեական տոնի իմաստի մեջ պահպանվել է մասամբ նաև գարնան տոնի հին իմաստը:

Հին ժամանակներում սովորություն է եղել Զատկի տոնին պատրաստել նաև ԶԱՏԿԱԿԱՆ ՁՈՒ և ԶԱՏԿԱԿԱՆ ԴԱՌ, որպես ձմեռային մեռելությունից վերազարթնող և հարություն առնող բնության խորհրդանշան, որպես գարնան տոն, կյանքի և ուրախության տոն:

Հին ժողովուրդներից հրեաները ևս ունեցել են և ունեն ԶԱՏԿԻ ՏՈՆԸ: Հրեական Զատիկը տոնվում է ի հիշատակ հրեաների եգիպտական գերությունից ազատության և Կարմիր ծովից դեպի Ավետյաց երկիրը անցման, և այդ իմաստով այն եբրայեցերեն լեզվում կոչվում է «ՊԱՍԵՔ», որ թարգմանի անցք կամ ելք, որպէս և ի մեզ ստուգաբանի զատումն, քանզի յայսմ աւուր ելին և զատեցան որդիքն Իսրայէլի յԵգիպտոսէ» («Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի»):

Հրեաները իրենց Պասեքի տոնին մորթում էին զատկական գառ, ինչպես Մովսես հրամայել էր նրանց՝ «առէք ձեզ ոչխար ըստ ազգս ձեր և զենջիք, զի Զատիկ Տեառն է» (Ելք ԺԲ 11, 21):

Նոր Կտակարանի մեջ գործածված է նաև ՈՒՏԵԼ ԶԶԱՏԻԿ բացատրությունը (Մատթ. ԻԶ 17): Հիսուս ևս ցանկություն հայտնեց իր երկրավոր կյանքի վերջին օրերին «ուտել զԶատիկն աշակերտօքն հանդերձ» (Մարկ. ԺԴ 14):

Քրիստոնեական Զատիկը տոնվում է ի հիշատակ Քրիստոսի հարության և ոչ մեկ

նմանություն չունի հրեական Պասեքի ծես. բուն իմաստի և խորհրդի:

«Զատիկ մեր զենաւ Քրիստոս» (Ա Կորնթ. Ե 7): «Եւ իսկ զկենդանարար մարմինն սրբոյ առաքելոցն ի կերակուր և կատարեաց զխորհուրդն որ յաղագս այնր» (Շիրակացի):

Հրեական Զատիկը ստվերն է Քրիստոնեական Զատկի՝ Գողգոթայի վրա մեծագույն զոհի:

Անանիա Շիրակացին (Է դար) իր «Ի Զատիկն Տեառն» գրվածքում գրում է՝ «Հայաստանեայցս առաւել ճշմարտապէս ունելով Զատիկ Տեառն, այսինքն զատուցեալ յամենայն ներհակականաց և հրէական տօնից, սրբեալ և լեալ տօնիցս Տեառն տօն և ժողովոց ժողով», որպէսզի. եզրակացնում է գիտնական վարդապետը. «ի յարութեան Միածնին ուրախ լիցուք, հաղորդեալ մարմնոյ և արեան ճշմարիտ Գառինն, որ է հաց Երկնաւոր»:

Քրիստոսը եղավ ճշմարտապես «Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի»: Նա իր աստվածային կյանքը տվեց աշխարհի փրկության համար: Այդ փրկարար խորհրդի մեջ ընդգրկվեց նաև հայ ժողովուրդը: Քրիստոսի՝ մարդկության համար թափված արյան մեջ գտավ նաև հայ ժողովուրդը իր փրկությունը: «Զատիկն,— գրում է Գրիգոր Տաթևացին,— ԱԶԱՏՈՒԹԻՒՆ թարգմանի»:

Ուրեմն, ԶԱՏԻԿԸ հայության համար նաև ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՆ է, ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏՈՆ է, ՀԱՎԱՏԻ ՏՈՆ է, մահվան վրա կյանքի ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆ է, ՆՈՐ ԿՅԱՆՔԻ, ԳԱՐՆԱՆ ՏՈՆ է:

Ահա այն մեծ ԱՎԵՏԻՔԸ, որ հնչել է միշտ հայ ժողովրդի ականջին, Քրիստոսի հարության լուսապայծառ բոլոր առավոտներին, ահա այն մեծ ՏԵՍԻԼՔԸ, որ միշտ երևացել է Քրիստոսի թափուր գերեզմանի առաջ ծնրադիր և աղոթավոր հայ ժողովրդին, ահա այն ՄԵԾ ԴԱՍԸ, որ նա քաղել է Քրիստոսի հարության դեպքից:

Չարչարված, խաչված, յոթնապատիկ խոցված իր սրտով հայ ժողովուրդը երբեք չի կորցրել իր հույսը, իր անկոտրում հավատը իր հարության, իր վերակենդանության մասին: Իր վերքերից, իր գերեզմանից նա միշտ վերակենդանացել է Քրիստոսի հարության ավետիքով, նոր կյանքի, մեծ պայքարի, նոր գարնան հույսով և երգով:

«Ո՞ւր է, մա՛հ, յաղթութիւն քո, ո՞ւր է, դժո՛խք, խայթոց քո»:

Քրիստոնեական կյանքի, բարոյականի և աստվածաբանության հիմնաքարն է Քրիստոսի հարությունը: Քրիստոսի մահը Գողգոթայի վրա և Նրա հրաշափառ հարությունը գերեզմանից՝ առաքյալների քարոզության ալֆան ու օմեղան են հանդիսացել: Հեթանոսաց մեծ առաքյալ Պողոսը շատ սուր և ճիշտ կերպով է դնում հարցը բոլոր ժամանակների, բոլոր սերունդների առաջ. «ԵԹԷ ՔՐԻՍՏՈՍ ՉԻՑԷ ՅԱՐՈՒՑԵԱԼ, ԸՆԴՈՒՆԱՅՆ Է ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՍ ՄԵՐ, ԸՆԴՈՒՆԱՅՆ ԵՆ ԵՒ ՀԱՒԱՏՔՆ ՁԵՐ»:

Քրիստոնեական գաղափարների և բարոյականի լույսի տակ, Քրիստոսի լուսապայծառ հարությունը մարդկության փրկության հայտարարությունն է:

Քրիստոսի հրաշափառ հարության ամենաջերմ հավատացյալներից մեկն է եղել նաև մեր ժողովուրդը, իր կյանքի փորձով: Իզուր չէ, որ նրան անվանել են ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՏԱԿԸ: Նա՝ մեր ժողովուրդը, անխնայորեն չարչարվել է, խաչվել է իր համոզմունքների համար, առաջադիմության համար, իր հայրենի սրբությունների պահպանման համար: Միշտ սուր են բարձրացրել մեր երկրի ազատության և անկախության վրա, վիրավորել են մեր ժողովրդի ազգային արժանապատվությունը, արհամարհել են մեր լեզուն ու մեր կրոնը, ավերել ու ամայացրել են մեր ծաղկուն քաղաքներն ու ավանները, ոչնչացրել են նրա նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձանները, բայց երբեք նրա հոգում չեն կարողացել մարել հարության տեսիլքը, նրա անմեռ հավատը վերջնական հաղթանակի նկատմամբ: Հայությունը հաճախ անցել է տրտմության ու հուսահատության Գեթսեմանիի պարտեզից, իր խաչը ուսած բարձրացել է իր արյունոտ Գողգոթան, և իր խաչի բարձունքից տեսել և ողջունել է իր հարության, իր Զատկի լուսապայծառ և խոստումնալից այգաբացը:

Ս. Հարության մեր հոգևոր շարականները, երգերը, մեղեդիները հագեցված են այդպիսի սրտառուչ հավատով, ազատության շնչով և փրկության գաղափարով: Հարության նվիրված շատ շարականների մեջ կա ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԻԼՔԸ, մահվան դիմաց՝ ԿՅԱՆՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԳԸ, մահը, չարիքը, մեղքը, դժվարությունը հաղթահարելու վճռականությունը: ՄԱՀՈՎ ՀԱՂԹԵԼ ՄԱՀՎԱՆ, ՄԵՌՆԵԼՈՎ ԱՊՐԵԼ: Սա ճշմարտազանցություն չէ երբեք մեր ժողովրդի համար, այլ՝ աշխարհայացք, կենսափորձ՝ ձեռք բերված դառն ճիգերի և կորուստների գնով: Հայ ժողովուրդը, դաստիարակված քրիստոնեական լույսով, ձգտել է միշտ «առավել կյանքի», հավերժական կյանքի, ապրելու և ստեղծագործելու հավիտյան: ՆԱ ՆՎԱՃԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԸ ԻՐ ՀԱՎԱՏՈՎ ԵՎ ԱՊՐԵԼՈՒ ԿԱՄՔՈՎ, և արժանի է նա ապրելու և միշտ փառավորելու կյանքի զորությունը, հարության, մշտնջենավոր, անմահ կյանքի գաղափարը և տեսիլքը:

Այս իսկ պատճառով, Քրիստոսի հարության նվիրված մեր շարականներից հնչում է,

միշտ ԿՅԱՆՔԻ ՑՆԾՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ, ԱՆՄԵՌ ԿՅԱՆՔԻ ՊԱՏԳԱՄԸ:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ, ՄԱՀՈՒԱՄԲ ԶՄԱՀ ԿՈԽԵԱՑ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՄԲՆ ԻՒՐՈՎ ՄԵԶ ԶԿԵԱՆՍ ՊԱՐԳԵՒԵԱՑ»:

Զատիկը հայ ժողովրդին բերել է միշտ հաղթական կյանքի ցնծություններն ու բարիքները: Ահա թե ինչու մեր եկեղեցիներում տարվա բոլոր կիրակիները նվիրվել են Քրիստոսի հարության հիշատակի փառավորման, որպեսզի հայ հոգիներում առատանան, աղբերանան հարության բարիքները: Կիրակի օրերը կարդացվում են «Իւղաբերից» կոչված Ավետարանները, հավատացյալների հոգում միշտ վառ պահելու համար Քրիստոսի հրաշափառ հարությունն ու նրա իրական նշանակությունը: Բացի այդ, Զատիկից մինչև Հոգեգալուստ երկարող 50 օրերը, որոնք կոչվում են «Յինունք», առավելապես նվիրված են հարության դեպքին և խորհրդին, երբ սաղմոսներով, ավետարանների ընթերցումներով, հարության նվիրված գեղեցիկ շարականների երգեցողությամբ, եկեղեցին հնչեցնում է երկրի վրա Աստուծո թագավորության հաստատության ավետիքը:

Մեր ժողովուրդը տեսիլք ունեցող ժողովուրդ է, հոգու ժողովուրդ է: Չի մահանա երբեք այն ժողովուրդը, որը տեսիլքներ ունի: Մեր ժողովուրդը ունեցել է փառավոր և ստույգ տեսիլքներ: Եվ նրանց մեջ ամենափառավորը՝ իր վերազարթոնքի և փրկության, ազատության տեսիլքը:

Երեկ մեր երկիրը Եզեկիելյան տեսիլքի նման «մի դաշտ էր լի ոսկերոք մարդկանց»: Բայց ահա նորից Քրիստոսի հարություն առավ մեր սիրելի ժողովրդի և Հայրենիքի համար: Մի երջանիկ օր, մի սուրբ առավոտ, հայ ոսկորների վրա հարության կենդանարար շունչը փչեց: ՄԱՀՎԱՆ ԴԱՇՏԸ ՎԵՐԱԾՎԵՑ ԿՅԱՆՔԻ ԴԱՐՏԵԶԻ: Ոսկորներն իրար եկան, միս ու արյուն հագան, կենդանացան, որովհետև Աստուծո «շունչն եմուտ ի նոսա, և եղեն կենդանի և կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց ժողովուրդ բազում, յո՜յժ, յո՜յժ»:

Դա մեր ժողովրդի ԶԱՏԻԿՆ ԷՐ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ:

Հայ արյունով ներկված դաշտ ու հովիտ, լեռ ու ձոր միաբերան աղաղակում են Ս. Հարության այս տոնի առավոտյան՝

«ԶԻ՞ ԽՆԴՐԷՔ ԶԿԵՆԴԱՆԻՆ ԸՆԴ ՄԵՌԵԱԼՍ, ՉԷ ԱՍՏ, ԱՅԼ ՅԱՐԵԱՒ»:

Այո, հարյավ հայ ժողովուրդը իր Հայրենի հողի վրա, իր Փրկչի պես, և դեպի անմահություն է քայլում նա իր Փրկչի նման. Հարության երգը շրթներին.

«ՓԱ՜ՌՔ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՈ, ՏԷՐ...»

Այսօր, երբ հայ ժողովուրդը ցնծությամբ տոնում է ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՏԻԿԸ, նա միաժամանակ տոնախմբում է նաև իր ՀԱՐՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՏԻԿԸ: Եվ ամեն անգամ, երբ մեր եկեղեցիների սուրբ կամարների տակ կհնչի Քրիստոսի հրաշափառ հարության հաղթական օրհներգը, մենք կլսենք նաև հայ ժողովրդի ՍՏՈՒՅԳ, ՃՇՄԱՐԻՏ, ՓԱՌԱՎՈՐ ԵՎ ԼՈՒՍԱՓԱՅԼ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ԵՐԳԸ:

Արդարև հարյա՜վ Ազգն Հայոց:

«ՓԱ՜ՌՔ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՈ», ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ԳԱՄԱԼ ԱԲԴԵԼ ՆԱՍԵՐԻՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

## ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ԳԱՄԱԼ ԱԲԴԵԼ ՆԱՍԵՐԻՆ. ՎՍԵՄԱՇՈՒՔ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՀԻՐԵ

Հայ ժողովրդի հավատի կենտրոն Ս. Էջմիածնից ողջունում ենք Ձեզ, Միացյալ Արաբական Հանրապետության Նախագահ ընտրվելու առթիվ:

Ձեր մեծ Հայրենիքի սահմանների մեջ ապրող բազմահազար մեր հայ հավատացյալների սիրո և հավատարմության զգացումները հանդեպ Ձերդ Վսեմության և Ձեր Հայրենիքին, Մեզ խոր մխիթարություն են պատճառում և Մենք վստահ ենք, որ ինչպես առաջ, նաև այսուհետև Ձեր բարձր հովանավորությունը անպակաս կլինի Հայ Եկեղեցու և հայ հավատացյալների վրայից, համապրն-դումն արաբ և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության, որ Մենք հաստատեցինք Եգիպտոս մեր այցելության առթիվ 1956 թվականին, մանավանդ երբ Մենք բախտ ունեցանք Ձեզ անձամբ ողջունելու:

Կմնանք աղոթող առ Աստված Ձեր քաջառողջության, արևշատության և հայրենաշեն գործոց հաջողության համար:

Արաբական միացյալ ժողովուրդները թող ապրեն ու հառաջադիմեն բարօրությամբ ու խաղաղությամբ:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

11 մարտի 1958 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Միացյալ Արաբական Հանրապետության իմ նախագահ ընտրվելու առիթով Ձեր հղած անկեղծ շնորհավորանքը և ազնիվ զգացումների արտահայտությունը ընդունեցի խորին գնահատանքով:

Մենք հույս ունենք, որ Երիտասարդ Հանրապետությունը կդառնա ուժի մի ամրոց, որը կծառայի բարեկամ հայ ժողովրդի բարեկեցությանն ու բարգավաճմանը:

Մենք ևս բերկրանքով նշում ենք մեր և հայ ժողովրդի միջև գոյություն ունեցող բարեկամական կապերի հետագա զարգացումը:

Երախտագիտական զգացումով ցանկանում եմ Ձեզ երջանկություն և քաջառողջություն, իսկ հայ ժողովրդին՝ փառքի ու վերելքի բարեմաղթություններ:

ԳԱՄԱԼ ԱԲԴԵԼ ՆԱՍԵՐ

ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

17 մարտի 1958 թ.
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏ, ԿԱՀԻՐԵ

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԻՐԱՆԻ ՇԱՀԻՆՇԱՀ ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀԱՄԵԴ ՌԻԶԱ ՓԵՀԼԵՎԻԻՆ ՆՈՎՐՈՒԶԻ (ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐՎԱ) ԱՌԹԻՎ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

## ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀԱՄԵԴ ՌԻԶԱ ՓԵՀԼԵՎԻԻՆ, ՎՍԵՄԱՇՈՒՔ ՇԱՀԻՆՇԱՀԻՆ ԻՐԱՆԻ

ԹԵՀՐԱՆ

Մենք, Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, իբրև նորընտիր Հայրապետ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո, Նովրուզի Ձեր մեծ տոնի առթիվ երջանիկ ենք հղելու Ձերդ Վսեմության Մեր ողջույնը և օրհնությունը հայ ժողովրդի հավատի կենտրոն Սուրբ Էջմիածնից:

Շնորհավորելով Ձերդ Վսեմության Նոր տարին, Մենք աղոթում ենք առ Ամենակարողն Աստված, որ Ձեր փառապանծ երկիրը միշտ մնա խաղաղ ու անվրդով, շեն ու բարգավաճ Ձեր վեհիրավ իշխանության ներքո երկա՜ր-երկա՜ր տարիներ: Թող Ձեր Գահը անսասան մնա և Ձերդ Վսեմությունը քաջառողջ ու երջանիկ մինչև խոր ծերություն:

Երանի՜ լիներ մի օր, երբ Մենք առիթն ունենայինք Մեր ողջույնը և հայրապետական օրհնությունը անձամբ տալու Ձերդ Վսեմությանը և Ձեր արևոտ երկրին՝ հինավուրց բայց վերածնված Իրանին:

Ողորմածությամբ Արարիչն Աստված տա Ձեզ ուժ և կարողություն, առևշատություն և խաղաղություն, ամեն:

Ողջունիվ և օրհնությամբ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

20 մարտի 1958 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձեր բարեմաղթությունները Նովրուզի տոնի առթիվ ինձ խորապես հուզեցին: Հայտնում եմ Ձեզ երջանկության, երկարակեցության և հաջողության իմ մաղթանքները Ձեր նոր աշխատանքում:

Իրանի հայերը ինձ համար բանկացին են. ես նրանց նվիրում եմ իմ ամբողջ հոգածությունը:

**ՄՈՒՀԱՄԵԴ ՌԻԶԱ ՓԵՀԼԵՎԻ**
ՇԱՀԻՆՇԱՀ ԻՐԱՆԻ

20 մարտի 1958 թ.
ԹԵՀՐԱՆ

# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*).

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*).

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՐԻԻՆ (*ԼՈՆԴՈՆ*).

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*).

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*).

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԼԻՆ*).

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*).

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»

Մեր Տիրոջ և Փրկչի Ս. Հարության տոնի ուրախ առիթով կողջունենք Ձեզ սուրբ սրտով և եղբայրական ջերմագին մաղթանքներով. Ձեր Սրբության առողջության և երջանիկ հովվապետության համար:

Ս. Հարության մեծ ավետիսը անգամ մը ևս թող լուսավորե ու ներշնչե մեր հոգիները, որպեսզի նաև այսուհետև նվիրվենք Փրկչի խաղաղության ուխտի ամրապնդման սուրբ գործին, ներդաշնակություն մարդկային կյանքին և ի փառս մեր Սուրբ Եկեղեցիներուն:

Եղբայրական սիրո ողջույնով՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԴԱՀԱԿԱԼՆԵՐԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Այսօր մեծ ավետիս կուտանք Ձեզ մեր Տիրոջ և Փրկչի Իջման Ս. Տաճարեն՝

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Մահուամբ զմահ կոխեաց
Ու յարութեամբն իւրով
Մեզ զկեանս պարգեւեաց»։

Այս սուրբ հարության ուրախությամբ ոգեշնչված, Մեր հայրապետական ողջույնը և օրհնությունը կբերենք Ձեզ, հոգևոր դասուն, ազգային-եկեղեցական Ձեր իշխանություններուն և կազմակերպություններուն և համայն մեր հավատացյալ և սիրեցյալ ժողովուրդին, սրտաբուխ մաղթանքներով, որ հարուցյալ Փրկչի սերն ու խաղաղությունը իջնեն ու հաստատվին Ձեր բոլորի սրտերուն մեջ, ի շինություն մեր Սրբազնասուրբ եկեղեցիին, ի միաբանություն Ազգիս բոլոր զավակներուն անխտիր և ի մխիթարություն հավատքի վեմ Մայր Աթոռիս։

Հրաշափառ հարության շնորհները Ձեր բոլորիդ համար թող հանդիսանան աղբյուր քաջառողջության հոգվո և մարմնո, և առաջնորդ ողի Ձեր ապրումներուն. Ձեր խոհերուն և ձեռաց գործերուն։

«Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց» (Ա Պետր. Ա 3)։

Արդ, «ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան»։ Եվ «սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ ամենեսին, որ էք ի Քրիստոս Յիսուս. ամէն»։

Օրհնությամբ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև պետական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դը Ազերեդո Պերդիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնախմբին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարերարներին և ազգային ծանոթ դեմքերին։

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՒ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ

(6 ապրիլի 1958 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

Ամեն տարի, երբ տիեզերքին ու մեր աշխարհին մեջ, կյանքի նոր լույսեր կսկսին հոսիլ, անծանոթեն դեպի անծանոթ, մենք՝ հոգեղեն արարածներս, տկար, հոգնաբեկ ու տարակուսանքներով լեցուն, բայց միշտ ծարավի մեծ ստուգության, ինչպես Պետրոս և Հովհաննես երկու հազար տարիներ առաջ, սուրբ սպասումին տենդովը համակված, և անմար հույսի երազը մեր սրտին, կդիմենք դեպի փակված գերեզմանը Հիսուսի... Եվ ահա, ո՛վ հրաշք և հաղթություն, այնտեղ բացված կգտնենք ծանրությունը նյութեղեն վեմին, և գերեզմանը՝ դատարկ, ու կլսենք հազար արձագանքը հրեշտակի ձայնին՝

«ԳԻՏԵՄ, ԶԻ ԶՅԻՍՈՒՍ ԶԽԱՉԵԼՈՒԼՆ ԽՆԴՐԷՔ. ՄԻ՛ ԽՐՈՆՋԻՔ. ՉԷ ԱՅՍՏ, ՔԱՆԶԻ ՅԱՐԵԱՒ»:

Այո՛, ո՛վ հավատացյալ ժողովուրդ հայոց, «ՅԱՐԵԱՒ ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԵՌԵԼՈՑ. ՓԵՍԱՅՆ ԱՆՄԱՀ ԵՒ ԵՐԿՆԱՒՈՐ, ՔԵԶ ԱՒԵՏԻՔ ԽՆԴՈՒԹԵԱՆ»:

Անհունին մեջ տիեզերքին, երբ մեր Երկիրով, լույսի առաջին ճառագայթները շողացին ազատ, այդ սահուն ահա ուրիշ աշխարհի մը մեջ,— մարդոց աշխարհին մեջ,— մահվան և կյանքի սահմաններուն վրա, նոր լույս մը ծագեցավ: Քակվեցավ կնիքը նյութին, նյութը դարձավ լույս, մեռյալը՝ կենդանի, մարմինը՝ հոգի. մեռելներեն հարյավ Քրիստոս:

Զատիկ է այսօր, սիրելի՛ զավակներ Մեր: Հույսի տոն է այսօր, լույսի տոն է այսօր, կյանքի տոն է այսօր: Եվ գարուն է այսօր: Արդյոք կարելի՞ է խոսիլ մահվան և կյանքի մասին՝ առանց գարունի, առանց հարության: Մահ և կյանք կմիանան գարունի լույսով, մահ և կյանք կհաշտվին հարության հույսով: Կյանքը մահով կվերածնի հարության փառքով:

Մարդուն մեծագույն տոնն է այսօր, զի հարության և անմահության գաղափարը մեծագույն հաղթանակն է մարդուն, բոլոր ժամանակներու մեջ, բոլոր երկինքներու տակ:

Մարդկային ցեղի տիեզերական սպասումին իբրև պատասխան՝ ծնավ և հայտնվեցավ Հիսուս: Եվ իբրև կատարումն մեծ ու կենարար հույսին՝ «ՅԱՐԵԱՒ ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

«ԶԻ ԵԹԷ ՅԻՍՈՒՍ ՉԻՑԷ ՅԱՐՈՒՑԵԱԼ, ԸՆԴՈՒՆԱՅՆ Է ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ՄԵՐ, ԸՆԴՈՒՆԱՅՆ ԵՆ ԵՒ ՀԱՒԱՏՔՆ ՁԵՐ»:



«ՉԷ ԱՍՏ, ՔԱՆԶԻ ՅԱՐԵԱՒ»

Հսկեցեք և արթուն մնացեք, որ Հարության լույսը չմարի ձեր հոգիներեն ներս։ Հավետ ապրելու տենչով է, որ մարդ կգերազանցե ինքզինքը, կդառնա վեհ, ստեղծագործող, կդառնա արարիչ, կդառնա անմահ։

Մեր բովանդակ հոգեկան աշխարհը, իր բոլոր արժեքներով, կառուցված է Հարության լույսին և հավիտենական կյանքի գաղափարի պատվանդանին վրա։ Այս պատվանդանը նյութեղեն չէ, այդ պատվանդանը նույնիսկ բանական չէ, զի լոկ բանականությամբ՝ լրիվ ճանաչելի և ըմբռնելի չէ ան։ Այդ պատվանդանը շատ ավելին է, ան հոգեղեն գիտակցումն է, ամենատիրական իղձը՝ կյանքի հավիտենն անցած, անդին անհամար սերունդներու երակներեն հոսած, և այժմ հասած մեր մտածումի և սրտի ալեկոծ ափերուն։

Այս կյանքեն հետո, և մահեն հետո, նոր կյանք մը ապրելու տենչը, հրաշալի երազն է մահկանացու մարդուն, հոսած ամեն մեկիս սրտին, մտքին մեջ։ Եվ այդ իսկ է փառքը մարդուն հոգեկան ուժերուն։ Այդ հուր տենչն է, որ կրե ամեն ինչ՝ որ ճշմարիտ է ու արդար, բարի և գեղեցիկ, առաքինի և սուրբ։

Առանց հավետ ապրելու հույսին, մարդ կմեռնի մահեն իսկ առաջ, այդ հույսով, սակայն, ան կապրի մահեն ալ անդին։

Այս է լուսեղեն համբան բոլոր այն մարդոց և ժողովուրդներուն, որոնք Հարության հույսով՝ կապրին, կգործեն, կշինեն ու կստեղծագործեն, և կյանքի սահմանը անցնելեն ետք, կապրին հավիտյան։

«ԵՒ ԱՐԴ, ՁԻ ՈՒՆԻՄՔ ԱՅՍՊԻՍԻ ՅՈՅՍ, ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԵԱՄԲ ՎԱՐԻՄՔ» (Բ Կորնթ. Գ 12)։

Մեր ժողովուրդը, հայ ժողովուրդը, գրեթե իր ծնած օրեն, բայց մանավանդ Քրիստոսի Հարության ավետիսը ընդունելեն վերջ, այսպես ըմբռնեց կյանքը երկրային, այդ հավատքով ապրեցավ ան ու բարձրացավ ժամանակի կատարներեն վեր, այդ հույսով չմեռավ, այդ հույսով պիտի ապրի ան հավետ։

Միայն մահկանացուներ չունին հույսը Հարության և հավիտենական կյանքին։

Հայ ժողովուրդը մահկանացու չէ։ Հարության հույսով՝ Գրիգոր Լուսավորիչ խոր Վիրապ իջավ։ Հարության հույսով թարգմանեցին և զարդարեցին իմաստն Անեղին՝ Սահակ և Մեսրոպ մեծ սուրբեր մեր և աշակերտներ անոնց։

Հարության հույսով ինկան Ավարայրի դաշտին վրա Վարդանք Կարմիր և իր զինվորներ արի։ Հարության հույսով աղոթեց մեծ Վարդապետը Նարեկա վանքին։ Հարության հույսով մտածեց, երգեց Շնորհալին Ներսես։ Հարության հույսով բարձրացան տաճարներ մեր իրենց անճառ ձևերով։ Հարության հույսով տառապեցավ և մարտիրոսացավ ամբողջ Ազգը մեր և հերոսացան ազատատենչ քաջ զավակներ մեր։

Եվ այդ նույն հույսով, և այդ նույն տենչով, արյուն արցունքով, հազար-հազար անմեղ զոհերով, մեր ժողովուրդը վերջապես, վերջապես այս՝ հասավ մեր օրերուն՝ իր նոր կյանքի այս ապահով ափին, և սկսավ վերստին շենել, վերստին ապրիլ, վերստին շինել, կառուցել ու ծաղկեցնել հին Երկիրը մեր, Մայր Երկիրը մեր, աչքի լույսը մեր, Հայաստանը մեր։

Եվ երբ կդիտենք մեր այս փոքրիկ ածուն, Արարատի փեշերուն, շեն ու բարգավաճ, խաղաղ, արևոտ, միշտ դեպի վեր և միշտ դեպի հառաջ իր հաղթական երթով, ինչպե՞ս չհավատանք Հարության հրաշքին, ինչպե՞ս չհավատանք մեր ժողովուրդի կյանքի ուժերուն, հավետ ապրելու միշտ հաղթող տենչին, մեր կյանքի պայծառ, իրավ գարունին։

Մեր կյանքը, ահա ինքը Հարությունն իսկ է մեր խաչված Ազգին։

Ով ճշմարիտ հոգի ունի հայկական՝ ան կտեսնե լույս այսօր և արևը գալիք պայծառ օրերուն։

«ՔԱՋԱԼԵՐԵՑԱՐՈՒՔ, ԵՒ ԶՕՐԱՑԻՆ ՍԻՐՏՔ ՁԵՐ, ԱՄԵՆԵՔԵԱՆ ՈՅՔ ՅՈՒՍԱՑԵԱԼ ԷՔ Ի ՏԷՐ» (Սաղմ. Լ 25)։

Տարակուսողներ մենք գիտենք որ կան, հեռու ափերուն ցրված հայոց մեջ, իրենց սատանայից ու մարդոց հրապեր, կան և այնպիսիներ, ափսո՜ս, որոնց նպատակն է միայն ու նեղել, ուրիշ չինել իրենց հայրենի նոր կյանքի տակ, և նույնիսկ ատել, և նույնիսկ քանդել, և այն ալ երբեմն հոգևոր սքեմի ներքև։

Անոնց ոտքին տակ պատվանդան չկա, անոնց ճամբուն վրա հորիզոն չկա, անոնց սրտին մեջ մեր ժողովուրդի վերածնունդի ուրախությունը չկա։ Կանգնած են անոնք մեր Եկեղեցիի ու Ազգի կյանքի ճանապարհի կեսին, ու քարացած,

մնացած են այնտեղ: Բայց հեռու մեզմե զգացումը վհատության, հոռետեսության: Այս Զատկի օրով, այս հրաշքի օրով, կյանքի ուժերուն, բարիին լույս ուժերուն, հարության օրով. Մենք կհավատանք անոնց զարթոնքին, անոնց հաշտության, անոնց դարձին: Ինչքան ալ փոքր ըլլա համրանքը անոնց. Մեր սիրտը այրող, ջերմագին իղձն է, որ մեր Եկեղեցիի և մեր Ազգի զավակներեն ոչ ոք կորսվի, ոչ ոք ուծանա, ոչ ոք մեռնի: Ոչ թե հեռացում, այլ՝ միաբանություն, ոչ թե բաժանում, այլ՝ մեկտեղում և գործակցություն, սեր, խաղաղություն: Մեր ժողովուրդի արդար խիղճը վկա, մեր մշակույթը, մեր պատմությունը և մեր նոր կյանքը վկա, Մենք, բոլոր հայերս, մեկ Ազգ ենք և մեկ Եկեղեցի՝ անխախտ, անբաժան այժմ և հավիտյան, ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնով և Մայր Հայրենիքով:

Հոգիի աչքերով կտեսնենք Մենք ու կզգանք, թե ա՛յս է ճշմարիտ ապրումը և դավանանքը բոլոր հայերուն, թե՛ Հայրենիքին ներս, թե՛ Հայրենիքեն դուրս: Եվ մխիթարված ենք Մենք:

Արդ, Ս. Հարության ուրախությամբ լեցուն, կողջունենք ձեզ բոլորդ, բոլորդ անխտիր, սիրելի՛ հավատացյալներ, հարազատներ Մեր, և կօրհնենք ձեզ, ձեր կյանքն ու ձեր ձեռաց բարի գործերը: Ողջ մնացե՛ք և քաջառողջ՝ հոգիով ու մարմնով, խաղաղ օրերով, բարի օրերով, շեն ու երջանիկ: Սիրեցե՛ք զիրար, սիրեցե՛ք ձեր Ազգն ու ձեր Մայր Եկեղեցին, սիրեցե՛ք հավատքի ամրոց և հայոց պարծանք Ս. Էջմիածինը մեր հավիտենական, անփոխարինելի, անփոխադրելի ու անկրկնելի:

Հարուցյալ Փրկչի լույս շնորհները թող առատ շողան ձեր հոգիներեն ներս: Նոր կյանք առած, նոր հույսերով վառ, քալեցե՛ք անվրդով, խաղաղ ու համառ միշտ դեպի հառաջ, և տվե՛ք Ազգին, Եկեղեցիին ու Մայր Հայրենիքին՝ լույսը ձեր մտքին, սերը ձեր սրտին և շինարար ուժը ձեր բազուկներուն, ի փառս Աստուծո և հայ ժողովուրդին:

Թող «ԱՍՏՈՒԱԾ ՅՈՒՍՈՅ ԼԻ ԱՐԱՍՑԷ ԶՁԵԶ ԱՄԵՆԱՅՆ ԽՆԴՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ, ԱՌԱՒԵԼՈՒԼ ՁԵԶ ՅՈՒՍՈՎ՝ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ» (Հռոմ. ժե 13):

«Կենարար շնորհք Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսին, զի ճշմարտապէս «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Ամեն:



# ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

## ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Եւ ի միաշաբաթւոջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյսն ի գերեզման անդր, եւ տեսանէ զվէմն բարձեալ ի դրանց գերեզմանին: Ապա ընթանայ եւ գայ առ Սիմովն Պետրոս եւ առ միւս աշակերտն զոր սիրէր Յիսուս. եւ ասէ ցնոսա. Բարձին զՏէր ի գերեզմանէն անտի. եւ ոչ գիտեմք ուր եդին զնա: Ել Պետրոս եւ միւս աշակերտն եւ գային ի գերեզմանն: Ընթանային երկոքին ի միասին. եւ միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղվաղակի քան զՊետրոս եւ եկն նախ ի գերեզմանն: Եւ խոնարհեալ տեսանէ զի կային անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ: Եկն եւ Սիմովն Պետրոս որ գայր զհետ նորա. եւ եմուտ ի գերեզմանն, եւ տեսանէ զկտաւսն զի կային անդ. եւ վարշամակն որ էր ի գլուխ նորա. ոչ ընդ այլ կտաւսն կայր. այլ առանձին ծալեալ ի մի կողմն: Յայնժամ եմուտ եւ միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն ի գերեզմանն, ետես եւ հաւատաց. զի չեւ եւս գիտէին զգիրս թէ պարտ է նմա ի մեռելոց յառնել: Չոգան դարձեալ առ ինքեանս աշակերտքն:

Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին եւ լայր. եւ մինչդեռ լայր, խոնարհեցաւ ի գերեզմանն. եւ տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս. զի նստէին մի ի սնարից եւ մի յոտից ուր կայր մարմինն Յիսուսի: Եւ նոքա ասեն ցնա. Կին դու, զի՞ լաս: Ասէ ցնոսա. Զի բարձին զՏէրն իմ ի գերեզմանէ անտի. եւ ոչ գիտեմ ուր եդին զնա: Զայս իբրեւ ասաց, դարձաւ ի թիկունս կոյս, եւ տեսանէ զՅիսուս զի կայր. եւ ոչ գիտէր թէ Յիսուս իցէ: Ասէ ցնա Յիսուս, Կին դու, զի՞ լաս. զո՞ խնդրես: Նմա այսպէս թուեցաւ թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա. Տէր, եթէ դու բարձեր զնա, ասա ինձ ուր եդիր զնա, զի ես առից զնա: Ասէ ցնա Յիսուս. Մարիամ: Եւ նա դարձաւ եւ ասէ ցնա եբրայեցերէն Ռաբբունի, որ թարգմանի Վարդապետ: Ասէ ցնա Յիսուս. Մի՛ մերձենար յիս, զի չեւ եւս ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբարս իմ. եւ ասա ցնոսա, Ելանեմ ես առ Հայրն իմ եւ առ Հայր ձեր, եւ Աստուածն իմ եւ Աստուած ձեր: Գայ Մարիամ Մագդաղենացի եւ պատմէ աշակերտացն եթէ ետես նա զՏէր, եւ զայս ինչ ասաց ցնա:

(ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ, Ի 1—18)





## ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ

Այսօր յարեաւ ի մեռելոց Փեսայն անմահ և երկնաւոր,
Քեզ աւետիք խնդութեան ի յերկրէ Եկեղեցի.
Օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիովն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո,
Լուսաւորեա՛, Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս.
Օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիովն:

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն,
Եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ի մեռելոց Քրիստոս.
Օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիովն:

Այսօր Զատիկ մեր զենմամբ Քրիստոսի,
Առասցուք տօն ցնծութեան, նորոգեալքս ի հնութենէ մեղաց [illegible].
Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Այսօր հրեշտակն լուսափայլ ի յերկնից իջեալ զարհուրեցոյց զպահապանսն,
Եւ սուրբ կանանցն քարոզէր ասելով.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Այսօր և մեք զուարճացեալք պայծառասցուք տօնիւս,
Ընդ հաշտութեանն Աստուծոյ միմեանց արկցուք զիրկս սիրով.
Եւ միաբան գոչեսցուք՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

## ԳՈՎԵԱ՛, ԵՐՈՒՍԱՂԷՄ, ԶՏԷՐ...

Յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ալէլուիա:
Եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն, ալէլուիա:
Յարուցելոյն ի մեռելոց, ալէլուիա,
Որ զաշխարհս լուսաւորեաց, ալէլուիա:



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՐՏԻ 2-ԻՆ, ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։ Քարոզեց Հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Գետիկյանը՝ «Հայր, մեղայ յերկինս և առաջի քո» բնաբանով։

* * *

ՄԱՐՏԻ 6-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին Հոգևոր Ճեմարանում բանախոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ծանոթ բանաստեղծ և «Նաիրի» շաբաթաթերթի խմբագիր պր. Անդրանիկ Ծառուկյանը՝ «Քաղաքակրթություն և մշակույթ» թեմայի շուրջ։ Դասախոսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և Մայր Աթոռի պաշտոնեությունը։ Բանախոսության վերջում, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ, հարգելի բանախոսը պատասխանեց դասախոսության վերաբերյալ Ճեմարանի ուսանողության մի շարք հարցերին։

* * *

ՄԱՐՏԻ 8-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր Տաճարում քարոզեց Հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետը Հովհան Օձնեցի, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի մեր եռամեծ վարդապետների կյանքի և գործունեության մասին։

* * *

ՄԱՐՏԻ 9-ԻՆ, ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարի փոխ-լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը պատարագեց Մայր Տաճարում։ Քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Հովհաննիսյանը՝ «Տուր զհամար տնտեսութեան քո» բնաբանով։

* * *

ՄԱՐՏԻ 13-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում, Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը ուսանողներին պատմեց Վեհափառ Հայրապետի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահի տեղակալ Անաստաս Իվանովիչ Միկոյանի հետ ունեցած հանդիպման իր տպավորությունների մասին, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

* * *

ՄԱՐՏԻ 16-ԻՆ, ԴԱՏԱՎՈՐԱՑ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Գետիկյանը և քարոզեց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը՝ աղոթքի դերի և կարևորության մասին։

* * *

ՄԱՐՏԻ 16-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, առավոտյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Մոսկվա մեկնեց Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը՝ զատկական տոները Մոսկվայի հայոց եկեղեցում անցկացնելու համար։

Նույն ինքնաթիռով Մոսկվա մեկնեց նաև պր. Անդրանիկ Ծառուկյանը, մոտ մեկ ամիս Ս. Էջմիածնում որպես ուխտավոր մնալուց հետո։

* * *

ՄԱՐՏԻ 16-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, ի գլուխ միաբանության, Էջմիածնի ընտրական տեղամասում մասնակցեց ՍՍՌՄ Գերագույն Սովետի և Ազգությունների Սովետի ընտրություններին։

* * *

ՄԱՐՏԻ 17-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վլադիմիր Կերոյանը, հրաժարվելով Հոգևոր Ճեմարանից և սարկավագությունից, մեկնեց վանքից և վերադարձավ աշխարհական կյանքի։

***

ՄԱՐՏԻ 18-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Ադրբեջանի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, որը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, զատկական տոների կապակցությամբ մարտի 27-ին մեկնելու է Ռումինիա և Բուլղարիա, երկու ամիս ժամանակով։

***

ՄԱՐՏԻ 21-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմի մասնակցությամբ և վերատեսուչ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի առաջնորդությամբ ուխտագնացության մեկնեց դեպի Խոր Վիրապ, Ս. Գրիգոր Լուսավորչի վանքը։

Ժամը 11-ին խումբը հասավ Էջմիածնից Խոր Վիրապ և Ս. Գրիգոր Լուսավորչի «սոսկալի չարչարանացն և մտին ի վիրապն» տոնին նվիրված «Այսօր զուարճացեալ» շարականի երգեցողությամբ ուսանողությունը և դասախոսական կազմը իջան Խոր Վիրապ, որտեղ և կատարվեց նախատոնակ, հաջորդ օրվա տոնի կապակցությամբ։ Ապա ուսանողությունը հանգամանորեն ծանոթացավ վանքի շրջապատին և եկեղեցուն։ Հոգևոր Ճեմարանի Հայ ժողովրդի պատմության դասախոս Համո Հարությունյանը տվեց պատմական տեղեկություններ Խոր Վիրապի և վանքի շինության մասին։

Ժամը 2-ին ուսանողությունը մեկնեց դեպի Դվին։ Դասախոս Հ. Հարությունյանը այստեղ ևս տվեց բացատրություններ Դվինի Մայր եկեղեցու շինության, պատմության, Դվինի միջնաբերդի և քաղաքի հիմնադրության և պատմության մասին։

Երեկոյան ժամը 6-ին ուսանողությունը միօրյա այդ ուխտագնացությունից վերադարձավ Մայր Աթոռ լավագույն տպավորություններով։

***

ՄԱՐՏԻ 22-ԻՆ, ՇԱԲԱԹ, տոնն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի վիրապն։ Մեծ տոնի առիթով Ճեմարանը փակ է այսօր։ Մայր Տաճարում, Ս. Գրիգոր Լուսավորչի սեղանի վրա, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, որպես բնաբան վերցնելով Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված շարականի «Որ ի վիրապն անդնդային, ջախջախեր նովաւ զգլուխ վիշապին, ի գիր ներքնումն իջմամբ նորին, բարձրացուցեր զմեզ ի յերկինս» տողերը, ծանրանալով մեր մեծ Լուսավորչի ի Հայաստան աշխարհ բերած փրկարար լույսի պատմական նշանակության վրա։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 23-ԻՆ, ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻՆ, պատարագեց Հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը և քարոզեց Գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Սահակյանը՝ «Ո՞վ իցէ մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ» բնաբանով։

***

ՄԱՐՏԻ 27-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի ուսանողության դասախոսեց բիոլոգիական գիտությունների դոկտոր պրոֆ. Գևորգ Սվաճյանը՝ մարդու բնախոսական կազմվածքի մասին։

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 195

## Ա) ԲԱԼԱՆՍ ԱՌ 31-

### Ա Կ Տ Ի Վ

Ա

| | Ռուբլի կոպ. | Ռուբլի կոպ. | Ռուբլի կոպ. |
|---|---|---|---|
| **ԱՆՇԱՐԺԱՑԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | |
| Բարձրարժեք գույք | 307652—61 | | |
| Ցածրարժեք » | 233611—14 | | |
| Գեղարդա տնտեսության փեթակներ և մանր եղջերավոր անասուններ | 100270—00 | 641533—75 | |
| **ԻՐԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | |
| Նյութեր. ապրանքներ պահեստում | 402393—11 | | |
| Անդամթերքներ » | 116777—39 | 519170—50 | |
| **ՏՐԱՄԱԴՐԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | |
| Դրամարկղ | 12042—14 | | |
| Ընթացիկ հաշիվ Պետբանկում | 205806—89 | | |
| Վալյուտային հաշիվ | 34525—81 | | |
| Ավանդ խնայդրամարկղում | 103261—97 | | |
| Արժեթղթեր | 8475—00 | 364111—81 | |
| **ՀԱՇՎԱՐԿՆԵՐ** | | | |
| ա) Առհաշիվ անձինք | 6439—09 | | |
| Կանխավճարներ աշխատակիցներին | 103853—13 | | |
| Զանազան պարտապաններ | 29374—64 | | |
| Անհուսալի պահանջներ | 42139—21 | 181806—07 | |
| բ) Փոխադարձ հաշիվներ ներքին թեմերի և եկեղեցիների հետ | 371437—87 | | |
| Անավարտ հրատարակությունների վրա կատարված ծախսեր | 11122—00 | | |
| Օժանդակ տնտեսություններ (կարի արհեստանոցի և մոմաձուլարանի մնացորդներ) | 4872—50 | 387432—37 | 2093054—52 |

Բ

| | Ռուբլի կոպ. | Ռուբլի կոպ. | Ռուբլի կոպ. |
|---|---|---|---|
| **ՏՐԱՄԱԴՐԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | |
| Ընթացիկ հաշիվ Պետբանկում | | 1250456—62 | |
| **ԻՐԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | |
| Ապրանքներ Ա պահեստում | 200933—44 | | |
| » Բ » | 347822—96 | | |
| » Գ » | 156890—00 | 705646—40 | |
| **ՀԱՇՎԱՐԿՆԵՐ** | | | |
| Մասնավճար 2-րդ շինվարչության. Նոր Վեհարանի պարսպապատման և Ս. Հռիփսիմեի բակի սալահատակման աշխատանքների դիմաց | | 164176—36 | 2170279—40 |
| Ընդամենը | | | 4263333—92 |

# ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ
## ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1957 Թ.

**Պ Ա Ս Ս Ի Վ**

| Ա | Ռուբլի կոպ. | Ռուբլի կոպ. | Ռուբլի կոպ. |
|---|---|---|---|
| **ՖՈՆԴԵՐ** | | | |
| Անշարժացած միջոցներ . . . . . . . . | 641538—75 | | |
| Շրջանառու միջոցներ . . . . . . . . . | 1426775—61 | | |
| | | 2068309—36 | |
| **ՀԱՇՎԱՐԿՆԵՐ** | | | |
| Պահանջատերեր . . . . . . . . . . | 17813—62 | | |
| Դեպոնենտներ (ի պահ ընդունված գումարներ) . . . | 6420—05 | | |
| Բաժանորդներ . . . . . . . . . . . | 511—50 | | |
| | | 24745—17 | 2093054—53 |
| **Բ** | | | |
| **ՀԱՏՈՒԿ ՖՈՆԴԵՐ** | | | |
| Արտասահմանից ստացված միջոցներ, հիմնական վերանորոգումների ֆինանսավորման համար, մնացորդ առ 1-ը հունվարի 1957 թ. . . . . | 1612047—63 | | |
| Ստացված արտասահմանից 1957 թվականի ընթացքում . | 1546252—07 | | |
| Ստացված ներքին աղբյուրներից 1957 թվականի ընթացքում | 350000—00 | | |
| | | 3508299—70 | |
| Օգտագործված 1957 թվականի ընթացիկ գործունեության դեֆիցիտը փակելու համար . . . . | 49467—70 | | |
| Օգտագործված 1957 թվականին ավարտած շինարարական աշխատանքների ֆինանսավորման համար . . . . | 1288552—60 | | |
| | | 1338020—30 | 2170279—40 |
| Ընդամենը . . . | | | 4263333—93 |

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 1957

### Բ) 1957 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒ

ա) ԸՆԹԱՑԻ

| ԾԱԽՍԵՐ | Ռուբլի կոպ. | Ռուբլի կոպ. | Ռուբլի կոպ. |
|---|---|---|---|
| Ա) ՎԱՆՔԻ ԾԱԽՍԵՐ | | | |
| 1. ա. Աշխատավարձ միաբանության անդամներին, Վեհարանի ծառայողներին, Մայր Տաճարին սպասարկող անձնակազմին, երգեցիկ խմբին և վանքի աշխատավորական պաշտոնեության | 733510—53 | | |
| բ. Կենսաթոշակներ | 17970—00 | 751480—53 | |
| 2. Ավտոտնտեսություն (բենզին, ավտոդողեր, նորոգումներ) | | 41033—09 | |
| 3. Կոմունալ ծախսեր (ջուր, լույս, ջեռուցում, պետապ) | | 85979—25 | |
| 4. Միաբանության սնունդ | | 100725—64 | |
| 5ա. Գործուղում, դիվանական, գրասենյակային, փոստ-հեռագրական | 121040—29 | | |
| բ. Նյութ. օժանդակություն | 43496—00 | | |
| գ. Գույքի և շենքերի ընթացիկ նորոգումներ | 44591—00 | | |
| դ. Արտասահմանյան պատվիրակների, եկեղեցական և աշխարհական հյուրերի ընդունելություն, երթևեկություններ և այլ բացառիկ ու չնախատեսված ծախսեր | 271570—00 | 480697—29 | |
| 6. Մայր Տաճարի և Թանգարանի առօրյա մանր ծախսեր | | 10893—96 | |
| 7. Վեհարանի պահպանման ծախսեր | | 69156—05 | |
| 8. Նոր գույքի ձեռք բերում (արհեստանոցների համար հաստոցներ, սննդամթերքի պահեստի համար սառցարան, մեկ ավտոկցորդ և այլն) | 22349—12 | | |
| Նոր գույքի ձեռք բերում (ցածրարժեք) | 26905—73 | 49254—85 | 1569210—56 |
| Բ) ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐ | | | 620—00 |
| Գ) ԶԱՆԱԶԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ | | | 6655—61 |
| Դ) ՃԵՄԱՐԱՆԻ ԾԱԽՍԵՐ | | | |
| 1. Աշխատավարձ վարչական և դասախոսական անձնակազմի | | 134027—50 | |
| 2. Ուսանողության սնունդ | | 160565—07 | |
| 3. Ուսանողության հանդերձանք | | 109410—99 | |
| 4. Կուլտուր-կենցաղային և այլ ընթացիկ ծախսեր | | 49786—46 | |
| 5. Նոր գույքի և գրականության ձեռք բերում | | 26587—99 | 480378—01 |
| Ե) ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ | | | |
| «Էջմիածին» ամսագրի հրատարակության ծախսեր | | 188541—83 | |
| Օրացույցի | | 36893—02 | |
| Այլ հրատարակություններ | | 95430—95 | 320865—80 |
| | | Ընդամենը | 2377829—98 |

բ) ՀԻՄՆԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ | | |
| Հատակի մարմարապատում | 271360—00 | |
| ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԸՐԶԱՓԱՏՈՒՄ | | |
| Բակի սալահատակում, մայթերի և ծառուղիների ասֆալտապատում | 756425—00 | |
| ԱՅԼ ՎԱՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ | | |
| Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցու և Ս. Հռիփսիմեի վանահոր բնակարանի վերանորոգում | 244687—60 | |
| Նախագծային և նախահաշվային աշխատանքներ | 16080—00 | 1288552—60 |
| Ընդամենը | | 1288552—60 |

# ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ
## ՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր

| | Ռուբլի կոպ. | Ռուբլի կոպ. |
|---|---|---|
| Ա) ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՋՈՒՏ ՀԱՍՈՒՅԹԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՑ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻՑ (գոյացած քանկալից, գանձանակից, Թանգարանի մուտքից, «Էջմիածին» ամսագրի, օրացույցի և գրքերի վաճառքից) | | 2277901—44 |
| Այդ թվում ըստ առանձին թեմերի և եկեղեցիների | | |
| Մայր Տաճարից | 733700—00 | |
| Արարատյան թեմից | 429600—00 | |
| Շիրակի թեմից | 443600—00 | |
| Գնդևրդա վանքից | 56000—00 | |
| Այլ վանքերից և ուխտատեղիներից | 54600—00 | |
| Վրաստանի թեմից | 320000—00 | |
| Բաքվի և Թուրքեստանի թեմից | 201500—00 | |
| Հյուսիսային Կովկասի թեմից | 36900—00 | |
| Ը ն դ ա մ ե ն ը | 2277800—00 | |
| Բ) Օժանդակ տնտեսության եկամուտներ | | 44447—10 |
| Գ) Այլ եկամուտներ (Պետբանկի տոկոսներ և այլն) | | 6013—74 |
| Դ) Արտասահմանյան հատկացումներ՝ ընթացիկ ծախսերի բացը փակելու համար: | | 49467—70 |
| Ը ն դ ա մ ե ն ը . . | | 2377829—98 |

## ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| Արտասահմանյան հատկացումներ և նվիրատվություններ (հիմնական վերանորոգումների ֆինանսավորում) | 1288552—60 |
| Ը ն դ ա մ ե ն ը . . | 1288552—60 |

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 1958 ԹՎԱԿԱՆԻ

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| | Ռուբլի | Ռուբլի | Ռուբլի |
|---|---|---|---|
| Ա) ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԶՈՒՏ ՀԱՍՈՒՅԹԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՑ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻՑ (գոյացած բանկալից, գանձանակից, թանգարանի մուտքից, «Էջմիածին» ամսագրի, օրացույցի վաճառքից՝ իբրև Մայր Աթոռին հասանելիք) | | | 2389000 |
| ՀԱՍՈՒՅԹԸ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԹԵՄԵՐԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ | | | |
| ա. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԹԵՄԵՐԻՑ | | | |
| Էջմիածնի Մայր Տաճարից | 750000 | | |
| Արարատյան թեմից | 511900 | | |
| Շիրակի թեմից | 375000 | | |
| Ս. Գեղարդա վանքից | 51600 | 1688500 | |
| բ. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ԹԵՄԵՐԻՑ | | | |
| Վրաստանի թեմից | 372000 | | |
| Բաքվի և Թուրքեստանի թեմից | 152200 | | |
| Հյուսիսային Կովկասի թեմից | 66300 | 590500 | |
| գ. ԱՅԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻՑ (որը չի մտել թեմերի և եկեղեցիների նախահաշիվների մեջ) | | 110000 | |
| | | 2389000 | |
| Բ) ԴԱՐԲԱՍ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՑ | | | 150000 |
| Գ) ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻՑ | | | 742100 |
| Ընդամենը | | | 3281100 |

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ

*ԾԱԽՍԵՐ*

| | Ռուբլի | Ռուբլի | Ռուբլի |
|---|---|---|---|
| **Ա) ՎԱՆՔԻ ԾԱԽՍԵՐ** | | | |
| Աշխատավարձ միաբանության անդամներին, Մայր Տաճարին սպասարկող անձնակազմին, երգեցիկ խմբին և վանքի աշխարհական պաշտոնության | 779000 | | |
| Կենսաթոշակներ | 62400 | | |
| | | 841400 | |
| Ավտոտնտեսություն (բենզին, ավտոդողեր, մասեր և այլն) | | 58100 | |
| Կոմունալ ծախսեր (ջուր, լույս, ջեռուցում, պետապ) | | 82400 | |
| Միաբանության սնունդ | | 108000 | |
| Գործուղում, դիվանական, գրասենյակային, փոստ-հեռագրական | | 94000 | |
| Նպաստ, օժանդակություն | 50000 | | |
| Գույքի և շենքերի ընթացիկ նորոգումներ | 36000 | | |
| Բակի բարեզարդում, կանաչապատում | 20000 | | |
| Բացառիկ ծախսեր | 100000 | | |
| | | 206000 | |
| Արտասահմանյան հյուրերի և ուխտավորների ընդունելություն | | 142000 | |
| Եպիսկոպոսական ժողով | | 150000 | |
| Մայր Տաճարի և Թանգարանի առօրյա մանր ծախսեր | | 12000 | |
| Վեհարանի պահպանման ծախսեր | | 110000 | |
| Նոր գույքի ձեռք բերում | | 150000 | |
| Եկեղեցու մոմերի և խունկի ձեռք բերում | | 61000 | |
| **Բ) ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԾԱԽՍԵՐ** | | | 2014900 |
| Աշխատավարձ վարչական և դասախոսական անձնակազմին | | 208500 | |
| Ուսանողության սնունդ | | 298800 | |
| Ուսանողության զգեստավորում | | 263800 | |
| Կուլտուր-կենցաղային ծախսեր | | 53500 | |
| Գիրք, գրենական պիտույք | | 6500 | |
| Ջեռուցում | | 10500 | |
| Ընթացիկ առօրյա ծախսեր | | 26800 | |
| Նոր գույքի ձեռք բերում (դասարանային, ուսանողական) | | 35300 | |
| Գրադարանի համար նոր գրքեր | | 8000 | |
| **Գ) ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ** | | | 911700 |
| ա. «Էջմիածին» ամսագիր (3500 օրինակ) | | | |
| Աշխատավարձ | 52500 | | |
| Հոնորարներ | 54000 | | |
| Թուղթ, տպագրություն | 83400 | | |
| Առաքման և այլ ծախսեր | 18100 | | |
| | | 208000 | |
| բ. Օրացույց 1959 թվականի (15000 օրինակ) | | 36000 | |
| գ. Այլ հրատարակություններ | | 110500 | |
| | | | 354500 |
| Ընդամենը | | | 3281100 |

**ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ**



# ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 1956—1957 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

**Թեմական խորհուրդի կազմը.**— Թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե սրբազան արքեպիսկոպոս Գալֆայանի նախագահության տակ Թեմական խորհուրդիս կազմը նախորդ տարվան նման կը բաղկանար ըստ հետևյալին.

Դր. Տատուր Տատուրյան՝ ատենապետ, արժանապատիվ Տ. Լևոն քահանա Առաքելյան՝ փոխ-ատենապետ, պր. Լևոն Արսլանյան՝ ատենադպիր, պր. Տիգրան Ամասրյան՝ գանձապահ, արժանապատիվ Տ. Վրթանես ավագ քահանա Փափազյան, արժանապատիվ Տ. Արտեն քահանա Աշճյան, արժանապատիվ Տ. Բարգեն քահանա Մագսուտյան, պր. Ռիչարդ Գրեգորի և պր. Նշան Ճանիկյան՝ խորհրդականներ:

Թեմական խորհուրդս տարվան շրջանին գումարած է 12 հերթական և մեկ բացառիկ նիստ՝ առաջնորդ սրբազանի կամ իր փոխանորդի նախագահությամբ:

Այս տարի կլրանա Թեմական խորհուրդի անդամներեն հինգին պաշտոնաշրջանը, և Թեմական պատգամավորական ժողովը պիտի կատարե նոր ընտրություն:

**Առաջնորդ սրբազանի Ս. Էջմիածին մեկնումը.**— Առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե սրբազան արքեպիսկոպոս Գալֆայան, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ, գնաց Էջմիածին՝ մասնակցելու այդ առթիվ տեղի ունեցած հանդիսությանց: Սրբազան Հայրը մեկնեցավ նոյեմբեր 10-ին և վերադարձավ դեկտեմբեր 4-ին:

**Փոխանորդություն.**— Անցնող տարեշրջանին, առաջնորդարանի պաշտոնեությունը մնաց նույնը: Արժանաշնորհ Տ. Վարդան քահանա Ակրյան՝ առաջնորդական փոխանորդ, պր. Սարեն Սանվելյան՝ դիվանապետ, տիկին Ջասլի Նալբանդյան և տիկին Նորա Այվազյան՝ քարտուղարներ, և ուսանող Անդրանիկ Հայրաբեդյան՝ մասնակի ժամերով:

**Թեմական կազմակերպություն.**— Ընթացիկ տարվան մեջ մեր թեմական կազմակերպությունը կը բաղկանար 42 ծխական համայնքներե, որոնցմե 39 համայնքներ ունին իրենց սեփական եկեղեցական շենքերը, իսկ 3 համայնքներ կծրագրեն ունենալ իրենց եկեղեցիները:

**Հոգևորական դաս.**— Մինչև Թեմական պատգամավորական ժողովի գումարումը, բացի առաջնորդ սրբազանեն, 25 եկեղեցականներ կպաշտոնավարեին թեմիս մեջ:

**Առաջնորդարանի պաշտոնաթերթը.**— «Հայաստանյայց Եկեղեցի» պաշտոնաթերթի հրատարակությունը կանոնավոր շարունակվեցավ, խմբագրությամբ բարեշնորհ Գրիգոր ավագ սարկավագ Գալուստյանի:

Անցյալ տարվա Թեմական պատգամավորական ժողովի որոշման համաձայն խորհուրդս կազմեց «Հայաստանյայց Եկեղեցի»-ի խմբագրական մարմին մը. իսկ կարգ մը հովիվներու և ծխական խորհուրդներու,

ինչպես նաև գրասենյակի ծախսերով կարելի եղած է շուրջ հարյուր նոր բաժանորդներ ապահովել։ Թերթի տնտեսական վիճակը բարվոքելու համար հանձնախումբ մը կազմվեցավ, սակայն կարելի չեղավ ընթացք տալ։

**Մայր Եկեղեցվո և Մշակութային տան հանձնաժողով.—** Մայր Եկեղեցվո և Մշակութային տան հանձնաժողովի տնօրեն և գանձապահն է պր. Հայկ Գավուգճյան, իսկ հանգանակիչ հանձնախումբի ատենապետն է պր. Ջոզեֆ Ցորպաճյան։

Հանձնաժողովը ծրագրած է շուտով սկսիլ առաջնորդարանի և Մշակութային տան շենքերու շինության։ Ծանոթ է, որ այս շենքերեն առաջինը պիտի կառուցվի Սարգիս և Հովհաննես Տիարպեքիրյան եղբարց կողմե եղած 200 000 դոլլարի նվիրատվությամբ, իսկ երկրորդը՝ Կյուլպենկյան Հիմնադրամի մարմնույն կողմե եղած 250 000 դոլլարի նվիրատվությամբ։

Հանձնաժողովը նաև պատրաստած և քաղաքապետարան ներկայացուցած է կառուցելի շենքերուն հատակագծերը, որոնք վավերացված են արդեն և ներկայիս տուներուն մեջ բնակող վարձակալներուն օրինական պայմանաժամ տրված է, որ պարպեն հարկաբաժինները ու խանութները, որպեսզի շենքերը վար առնվին ու շինությանց ձեռնարկվի։

Հանձնաժողովը բացած է թեմի ժողովուրդին անձ գլուխ տարեկան 25 դոլլարի (երկու տարվան համար) նվիրատվության արշավը։ Դիտելի է, որ ցարդ վիճակիս համայնքները հարկ եղած կարևորությամբ չեն օժանդակած այդ արշավին։ Պարտականությունն կիյնա թեմի հոգևոր հովիվներուն, ծխական խորհուրդներուն և թեմական պատգամավորներուն վրա ուժ տալ հանձնաժողովին, որպեսզի կարելի ըլլա արդյունավոր ընծայել բացված արշավը և գլուխ հանել Մայր Եկեղեցվո շինության ծրագիրը։

**Առաջնորդարանի Օժանդակ միություն.—** Առաջնորդարանի Օժանդակ միությունը, որուն ատենապետուհին է տիկին Սոֆի Թովմասյան և գանձապահը պր. Հարություն Թադոսյան, ունի ներկայիս 15 մասնաճյուղեր թեմի համայնքներուն մեջ։ Հոկտեմբերին մեջ, հայ մշակույթի տոնին առթիվ, թե՛ Օժանդակի կեդրոնական խորհուրդը Նյու-Յորքի մեջ, և թե՛ մասնաճյուղերեն ոմանք հայ մշակույթին նվիրված որակավոր հանդեսներ կազմակերպեցին։

Օժանդակ միության կեդրոնական խորհուրդը տարվույս ապրիլին սկսավ հրատարակել «Արձագանք» անունով թերթիկ մը՝ 5 000 օրինակով։ Նպատակն է այս թերթիկով հանրության ծանոթացնել Օժանդակի գործունեությունը։ Դժբախտաբար ցարդ միայն մեկ թիվ լույս տեսած է։

**Առաջնորդարանի Ուսումնական խորհուրդ.—** Առաջնորդարանի Ուսումնական խորհուրդը, որուն ատենապետուհին է տիկին Վերժին Էքսերճյան և ատենադպիրը՝ պր. Սուրեն Մանվելյան, անցյալ տարեշրջանին թղթակցություններով և մասնակի այցելություններով կապ պահեց թեմի դպրոցներու խնամակալությանց հետ։

Ուրախալի է, որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կրթական հանձնախումբը կգործակցի Ուսումնական խորհուրդին հետ, և պատրաստ է իր լավագույնը ընելու թեմի դպրոցներուն ներկայի անգոհացուցիչ վիճակը բարելավելու բարոյապես և նյութապես։

Վերջացող տարվան մեջ Բարեգործականը երեք տարբեր առիթներով 800 դոլլարի օգնություն ըրավ Նյու-Յորքի շրջանի Հայկազյան, Արամյան և Դուրյան դպրոցներուն, որոնք թաղային վարժարաններ ըլլալով չեն վայելեր եկեղեցիներու օժանդակությունը։ Իսկ առաջնորդարանը իր գանձեն 200 դոլլար հատկացուցած է Հայկազյան և Արամյան դպրոցներու ուսուցչի հետնյալ թոշակներուն։

**Կիրակնօրյա դպրոցներու կեդրոնական խորհուրդ.—** Թեմի Կիրակնօրյա դպրոցներու կեդրոնական խորհուրդը, որուն ատենապետն է արժանապատիվ Տ. Վարդան քահանա Մկրյան, վերջացող տարեշրջանին նկատելի արդյունք ձեռք բերած է։ Թեմական խորհուրդը 5 000 դոլլարի բյուջե հատկացուցած է 1957 մայիս 1-են մինչև 1958 մայիս 1-ի տևողության՝ Կիրակնօրյա դպրոցներու դասագրքերու պատրաստության, ուսումնասիրություններ կատարելու և տեսչության հայտագրեր կազմելու համար։ Այս գումարեն վերջերս Կիրակնօրյա դպրոցներու կեդրոնական խորհուրդին վճարված է 1 800 դոլլար։

Կիրակնօրյա դպրոցներու կեդրոնական խորհուրդը ցարդ պատրաստած է վիճակագրություն մը թեմի Կիրակնօրյա դպրոցներու աշակերտության, ուսուցիչներու և ուսմանց ծրագրերու և դասագրքերու վերաբերյալ։ Կազմակերպած է Կիրակնօրյա դպրոցներու տնօրեններու համագումար մը։

**Դպրաց դասերու միություն.—** Վիճակիս Դպրաց դասերու միությունը 11 տարվան կյանք ունի։ Միության դիվանի անդամներն էին նախորդ շրջանին՝ Ջան Քոչյան, ատենապետ, Հովհաննես սարկավագ Գասպարյան՝ փոխ-ատենապետ, որիորդ Սիլվիա

Փարդադյան՝ ատենադպիր, Եդվարդ Օհանյան՝ գանձապահ։

Միությունը անցնող տարեշրջանին նաև սարքած է շարք մը լսարանական ժողովներ։

**Անշարժ կալվածոց գնումներ և եկեղեցական ձեռնարկներ.—** Վերջացող տարեշրջանի ընթացքին թեմի կարգ մը համայնքներու կողմե անշարժ կալվածներ գնելու կամ եկեղեցիներ շինելու ջանքեր եղան։

Լոնգ Այլենդի մեր համայնքը ավարտեց շինությունը եկեղեցվո, որ իր տեսակին մեջ տեսարժան կառույց մըն է։ Այս եկեղեցվո շինությունը արժեց շուրջ 300 000 դոլար։ Եկեղեցվո օծումը կկատարվի շուտով։

Իսկ Ս. Լուիզի նորակազմ համայնքը ավարտեց եկեղեցվո շինությունը և օծումը կատարվեցավ 1956 դեկտեմբեր 23-ին։ Եկեղեցին կկոչվի Ս. Շողակաթ։

Ուեստ Պուլմենի մեր փոքրիկ համայնքը ծախու առավ կալված մը առաջնորդարանի անունով։ Ներկայիս նորոգություններ կկատարվին։ Ներքին հանգանակությամբ 10 000 դոլար գոյացուցած են արդեն և մնացյալ 5 000 դոլարը պիտի կարենան մեջտեղ բերել հառաջիկային։

Սպրինգֆիլդի մեր համայնքը վերջերս գնեց եկեղեցի մը, որուն վրա նորոգություններ կկատարվին։ Իրենց միջոցներով այդ նպատակին համար գոյացուցած են շուրջ 10 000 դոլար։

Նորթ Ֆիլադելֆիայի համայնքը 12 էյքեր տարածությամբ գետին մը գնեց 25 000 դոլար արժեքով։ Հետամուտ են ի մոտո այդ գետնին վրա շինել նոր եկեղեցի մը և մշակութային տուն մը։

Վոկիգոնի մեր շատ փոքր համայնքը գետին մը գնեց դեռ վերջերս լավ թաղի մը մեջ։ Ծրագիր ունին եկեղեցի մը և սրահ մը շինել մոտավոր ապագային։

Իվենստոնի համայնքը շինեց սրահ մը, որուն համար ծախսեց շուրջ 45 000 դոլար։

Դիտրոյտի համայնքը պիտի շինե նոր եկեղեցի մը և մշակութային տուն մը։ Կնախատեսվի այդ շինության համար ծախսել շուրջ 500 000 դոլար։

Բոստոնի համայնքը պիտի շինե նոր եկեղեցի մը և մշակութային տուն մը։ Կնախատեսվի այդ շինության համար ծախսել 500 000 դոլար։

**Ուսանողներ.—** Անցնող տարեշրջանին ես առաջնորդարանը սատարեց աստվածաբանական 14 ուսանողներու, որոնք կփափագին եկեղեցական ըլլալ։

**Հայաստանյայց եկեղեցվո երիտասարդաց կազմակերպություն.—** Հայաստանյայց եկեղեցվո երիտասարդաց կազմակերպությունը, որ 11 տարվան կյանք ունի, 1956—1957 տարեշրջանին, իր 33 մասնաճյուղերով և 1 000 անդամներով, ունեցած է արդյունավոր գործունեություն։

Կազմակերպության դիվանի անձնակազմն էր՝ Նուպար Տորյան՝ ատենապետ, Նշան Էսկիճյան՝ փոխ-ատենապետ, օրիորդ Արփինե Դավիթյան՝ ատենադպիր, Ալեքս Տատուրյան՝ գանձապահ։

Կազմակերպությունը անցնող տարեշրջանին երկու անգամ սարքած է Կիրակնօրյա դպրոցներու ուսուցչաց համաժողովներ, գումարած է նաև շրջանային ժողովներ՝ Ուոթըրթաունի, Նյու-Յորքի, Չիկագոյի և Դիտրոյտի մեջ։ Հրատարակած է կազմակերպության կանոնադրությունը 3 000 օրինակով։ Ջանքեր ըրած է սպառելու իրենց հրատարակած Նարպեյի «Քրիստոնեական Հավատքը» և «Հայ Եկեղեցվո աղոթքներ» անունով գրքույկը։ Զարկ տված է թեմին մեջ հիմնվելիք Հոգևոր Ճեմարանի կրթաթոշակի հիմնադրամի մը հաստատման։ Կանոնավոր և ճոխ բովանդակությամբ շարունակած է հրատարակությունը պաշտոնաթերթ «Արմինիըն Գարդիըն»-ի։ Հետամուտ եղած է թեմի մանուկներու ամառնային քեմփի մը հաստատման համար նյութական ապահովել։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս կոնդակ մը տված կազմակերպության 10-րդ տարեդարձի առթիվ։ Կազմակերպության կեդրոնական խորհուրդը այդ կոնդակը անգլերեն թարգմանեց և առաջնորդ սրբազանի հրահանգով թեմիս մեջ հաստատված «Կազմակերպության օր»-վան առթիվ կարդացվեցավ եկեղեցիներու բեմեն քարոզի տեղ։ Իսկ կազմակերպությունը, իբրև երախտագիտություն Վեհափառի շնորհարեր կոնդակին, որոշած է գոյացնել գումար մը, որ պիտի հանձնվի Ս. Էջմիածնի Մայր Տաճարի ավագ խորանի նորոգության։

**Էջմիածնի տպարանի հանձնախումբ —** Ս. Էջմիածնի տպարանի հանձնախումբը, որ կազմված էր շուրջ տարի մը առաջ, դեռ վերջերս փակեց բացված հանգանակությունը։ Եղած նվիրատվություններեն արդեն գոյացած է 143 000 դոլար։ Ներկայիս բանակցություններ կկատարվին հանձնախումբի կողմե՝ Վեհափառ Հայրապետի ցուցմունքին և հանձնարարության համաձայն կատարելու տպարանի մեքենաներու գնումը։ Այդ մեքենաներու համար կնախատեսվի ծախսել շուրջ 150 000 դոլար։ Տպարա-

նի սարվածքը պիտի առաքվի Էջմիածին, Վեհափառ Հայրապետի հրահանգով, իր հառաջիկային պատրաստ ըլլա պատրանի շենքը, որուն վրա այժմ նորոգություններ կկատարվին։

Էջմիածնի տպարանի հանձնախումբի դիվանի անդամներն են՝ պարոնայք Երվանդ Աղաճանյան՝ ատենապետ, Զարեհ Գարաքյոզյան՝ գանձապահ, Տիգրան Սմսարյան՝ ատենադպիր։ Պր. Աղաճանյան գնահատելի գործ կատարած է տպարանի հանգանակությունը արդյունավոր ընծայելու համար։

«Նեշընըլ գաունսիլ ավ չըրչըզ ավ Քրայստ» մարմնո անդամակցությունն.— Անցյալ տարվան Թեմական պատգամավորական ժողովի կողմե տրված որոշումը գործադրելով, Թեմական խորհուրդը նախ Ազգիս Վեհափառ Հայրապետի արտոնությունը ապահովեց և ապա բանակցություն վարեց անդամակցելու «Նեշընըլ գաունսիլ ավ չըրչըզ ավ Քրայստ» մարմնույն, որուն տարեկան ընդհանուր ժողովին մեջ պիտի վավերացվեր առաջնորդարանիս դիմումնագիրը և հաստատվեր անդամակցությունը։

Առաջնորդարանիս հիշյալ մարմնույն անդամակցության հաստատագիրը ցարդ չէ ստացված։ Հարկ է այս ուղղությամբ դարձյալ փորձեր ընել։

Երուսաղեմի Պատրիարքության նվիրակը.— Երուսաղեմի Առաքելական Աթոռո Նորին Ամենապատվության Տ. Տիրան պատրիարք սրբազանի կարգադրությամբ՝ գերապատիվ Տ. Հմայակ ծայրագույն վարդապետ Ինտոյան, որ Վեհափառ Հայրապետի հրահանգով վիճակիս մեկնած էր մասնավոր առաքելական գործով, իբրև նվիրակ վերադարձավ՝ թեմիս մեջ կատարելու նվիրահավաքումի գործ հօգուտ Հայ Երուսաղեմի։

Առաջնորդ սրբազան հոր հետ Թեմական խորհուրդս ամեն կերպով աջակից եղավ նվիրակ հայր սուրբին, անոր առաքելության գործը արդյունավոր ընծայելու։ Առաջնորդ սրբազանի նախագահության տակ կազմըված է «Հայ Երուսաղեմի օգնության կեդրոնական հանձնաժողով» մը, որուն դիվանի անդամներն են՝ պարոնայք Ռիչարտ Գրեգորի՝ ատենապետ, Լևոն Արսլանյան՝ գանձապահ, տիկին Վերժին Էքսերճյան՝ ատենադպիր։

Իսկ առաջնորդ սրբազան հայրը, խորհուրդիս գիտությամբ մասնավոր շրջաբերականով մը խաչվերացի տոնը թեմիս մեջ նշանակած է իբրև մնայուն Երուսաղեմի օր, և այդ օրվան առթիվ թեմի եկեղեցիներուն մեջ գոյացած գումարները պիտի հատկացվին Երուսաղեմի Պատրիարքության՝ առաջնորդարանի միջոցով։

Եզրափակում.— Թեմական խորհուրդս, առաջնորդ սրբազան հոր նախագահության տակ, շնորհիվ վիճակիս հոգևոր դասուն, ծխական խորհուրդներուն, ենթակա մարմիններուն և հավատացյալ ժողովուրդին նվիրումին և գործակցության, իր ծառայության տարեշրջանը բոլորեց, կատարելով, ըստ կարելվույն, իր պարտականությունը հօգուտ Հայաստանյայց Ս. Եկեղեցվո պայծառության։

Իբրև մեկ թեմը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, առաջնորդարանս կմնա հավատարիմ նվիրապետական Ս. Էջմիածնի Մայր Աթոռին և անոր արժանավոր Գահակալին՝ Նորին Ս. Օծության Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին։

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝ նախագահ
ԼԵՎՈՆ ԱՐՍԼԱՆՅԱՆ՝ ատենադպիր
ՏԱՏՈՒՐ ՏԱՏՈՒՐՅԱՆ՝ ատենապետ

(Արտատպված որոշ կրճատումներով Ամերիկայի հայոց առաջնորդարանի պաշտոնաթերթ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ» ամսագրի 1958 թ. № 2-ից)

## ԼՈՍ-ԱՆՋԵԼՈՍԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՆԴԵՍԸ

*1957 դեկտեմբերի 15-ը անմոռանալի թվական մը պիտի ըլլա կալիֆոռնիահայության համար և նոր էջ մը պիտի բանա Հայ Եկեղեցիի պատմության մեջ։ Արդարև, Հայ Ազգին զոհողություններով կառուցված Լոս-Անջելոսի Ս. Հակոբ Հայաստանյայց Եկեղեցիի նորակերտ հոյակապ տաճարին օծումը տեղի ունեցավ այդ օր, մասնակցությամբ Կալիֆոռնիո բոլոր հայ եկեղեցական հայրերու, ինչպես նաև Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի։*

*Շաբաթ երեկո, դռներու և պատկերներու օծումը կատարեց գերաշնորհ Տ. Վարդան արքեպիսկոպոս Գասպարյան, իսկ կիրակի օր Մամբրե սրբազան օծեց եկեղեցին, պատարագեց և քարոզեց։ Պատարագեն առաջ քարոզեց արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Գալֆայան (Հովիվ Օդեմի)։ Կալիֆոռնիո մյուս քահանա հայրերը — արժանապատիվ Տ. Թաթուլ քահանա Քեչիշյան (Պեսեդինայեն), արժանապատիվ Տ. Նա[illegible] քահանա Սեմերջյան (Ֆաուլերեն), արժանապատիվ Տ. Վարդան քահանա Տյուկերյան (Ֆրեզնոյեն), արժանապատիվ Տ. Արթուն քահանա Ամբատյան (Սան-Ֆրանցիսկոյեն), ինչպես նաև Ս. Հակոբի հովիվ գերաշնորհ Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյան օժանդակեցին սուրբ օծումին։*

*Քառաձայն երգչախումբին կողքին, Մետրոպոլիտեն օպերայի նախկին երգիչ պր.*



ԼՈՍ-ԱՆՋԵԼՈՍԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՆ

Արման Թոքաթյան մեներգներով մասնակցեց սուրբ պատարագին։

Կիրակի երեկո, Լոս-Անջելոսի առաջնակարգ պանդոկներեն Պիլթմոռի մեջ տեղի ունեցավ ճաշկերույթ-հանդես, որուն ներկա էին հազարե ավելի հանդիսականներ։ Ճաշեն ետք սկսավ հայտագիրը։ Եկեղեցիի հոգաբարձության ատենապետ պր. Ջան Քյուրտյանի բացման խոսքեն ետք, պր. Հենրի Ջաքյան ներկայացուց հոգաբարձության անդամները և զանազան հանձնախումբերուն և մարմիններուն մասնակցող անհատները։ Ներկայացվեցան նաև հյուրերը, առաքական եկեղեցիի հովիվը՝ Հայր Մինա, բողոքական համայնքեն պատվելիներ Մելիտոնյան, Սյուլյուհյան և Մինասյան, կաթողիկե համայնքեն՝ Մխիթարյան ուխտեն Հայր Միքայել Աքըյան։ Խոսք առավ Մամբրե սրբազան, որ Ս. Էջմիածնեն նոր եկած էր և նոր խաբրիկներ տվավ։ Սան-Ֆրանցիսկոյի հովիվը՝ արժանապատիվ Տ. Արթուն քահանա Սմբատյան անգլերեն հակիրճ պատմությունը ուրվագծեց Հայ Ազգին և Եկեղեցիին։ Խոսք առին նաև Վարդան սրբազան, Կարապետ ավագ քահանա Գալֆայան և Ս. Հակոբի հովիվ Տիրայր վարդապետ Տերվիշյան, որ կարդաց նաև Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի շնորհավորական հետևյալ հեռագիրը.

«Ս. Հակոբ եկեղեցվո խորհրդի հովիվ Տիրայր վարդապետին և ատենապետ Քյուրքճյանին.

Փրկչի Իջման Ս. Սեղանեն ողջույն և օրհնություն ձեր նորոգ եկեղեցիին: Ձեր բոլորիդ համար թող անիկա ըլլա ճշմարիտ տուն աղոթքի, մխիթարիչ հոգիներու և շնորհատու բարյաց և աղբյուր սիրո և հոգևոր ուրախությանց:

Սուրբ սրտով կաղոթենք առ Աստված հոգևոր դասուդ, եկեղեցական խորհրդին, երիտասարդաց, տիկնանց և օրիորդաց միությանց և համայն ձեր հավատացյալներու քաջառողջության, արևշատության և գործոց հաջողության համար:

«Ողջ լերուք, յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն»:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

6 դեկտեմբեր 1957

Ս. Էջմիածին

Կալիֆոռնիո բողոքական բոլոր եկեղեցիներու կողմե խոսեցավ պատվելի Մելիտոնյան։ Շնորհավորական ուղերձներ ըրին նաև հայր Աքըյան և հայր Մինա՝ առաքական եկեղեցիի հովիվը։

Պր. Օշին Գասպարյան կարդաց շնորհավորական հեռագիրներ Կալիֆոռնիո նահանգապետ-կառավարիչ Գուդվին Նայթեն, Լոս-Անջելոսի քաղաքապետ Նորիս Փոլսոնեն, նահանգային ծերակուտական Ջիմի Ռուզվելտեն և ուրիշ անձնավորություններե։

Սրտաբուխ նվիրատվություններե գոյացավ 17 000 դոլլար (առիկա հանգանակություն չէր, այլ պարզ նվիրատվություն)։ Քառաձայն երգչախումբը ժողովուրդին հրամցուց Համբարձում Պերպերյանի «Եկեղեցին Հայկական»-ը և Ռոսինիի «Իմֆլամմատուս»-ը։ Մեներգներ ըրին պր. Արման Թոքաթյան և օրիորդ Ջեկլին Շահբազյան։ Պր. Արա Սևանյան ջութակի վրա նվագեց քանի մը կտորներ։ Գալֆայան սրբազանի աղոթքով վերջ գտան նաև օր մը տևող հոգեպարար արարողությունները։

Հոյակապ տաճարին կողքին կան մեծ սրահ մը, բասկետբոլի խաղավայր, կիրակնօրյա վարժարան, գրադարան, հյուրերու մասնավոր սենյակներ, հովիվին սենյակը և շատ մը սրահներ, որոնք կգործածվին ժողովներու և այլ հանդիսություններու համար։ Եկեղեցիին շուրջ խմբված երիտասարդաց կազմակերպությունը ունի երկու բաժին՝ կրտսերներ և երեցները, որոնք ամեն շաբաթ կունենան իրենց հանդիպումները։ Պիտի վերսկսի նաև հայկական վարժարանը մոտ ատենեն։ Մեծ է խանդավառությունը և ժողովուրդը կգնահատե և կքաջալերե ամեն ձեռնարկ։ Նոր եկեղեցին արժած է մոտավորապես 300 000 դոլլար. արդիական, բայց նույն ժամանակ հայկական ոճի դրոշմը ունեցող այս գեղակերտ Աստուծո տունը բովանդակ Լոս-Անջելոսի ժողովրդին (հայութենե զատ) ուշադրությունը գրաված է, մանավանդ որ տեղական հինգ օրաթերթերը և ավելի փոքր օրաթերթերը օծումին նկարագրականը ընելե զատ, տպեցին նաև նկարներ։

Այս եկեղեցին մեծ գրավական մըն է Ս. Էջմիածնի անսասանության և հայ ժողովուրդին հավատքին։

(Բեյրութ, «ԶԱՐԹՕՆՔ» օրաթերթ, կիրակի, 26 հունվարի 1958 թ.)



# ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

*Հունվարի 19-ին մեծ հանդիսությամբ կատարվել է ԱՄՆ-ում Սան-Ֆրանցիսկոյի հայոց նորակառույց Ս. Հովհաննես եկեղեցու օծումը, ձեռամբ Կալիֆոռնիայի հայոց նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյանի և մասնակցությամբ գերաշնորհ Տ. Վարդան արքեպիսկոպոս Գասպարյանի, Ֆրեզնոյի հայոց Ս. Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Տերվիշյանի, Կալիֆոռնիայի թեմի ամբողջ քահանայից դասի և դպրաց դասի, ժողովրդական խանդավառ մթնոլորտի մեջ։*

*Եկեղեցու շինության համար ծախսվել է մոտ 325 000 դոլլար։*

*Վեհափառ Հայրապետը Սան-Ֆրանցիսկոյի հայոց Ս. Հովհաննես եկեղեցու օծման առթիվ ուղարկել է հայրապետական կոնդակ և հեռագիր, որոնք ընթերցվել են սուրբ պատարագի ընթացքում և ստեղծել մեծ խանդավառություն ու ոգևորություն։*

*Սան-Ֆրանցիսկոյի հայոց Ս. Հովհաննես եկեղեցու օծման առթիվ շնորհավորական հեռագիր է ստացվել նաև ԱՄՆ-ի Նախագահ պր. Էյզենհաուերից, որը կարդացվել է հունվարի 19-ի երեկոյան, եկեղեցու օծման առթիվ կազմակերպված ճաշկերույթին, 100 հյուրերի ներկայության։ Պր. Նախագահի հեռագրում ասված էր.*

«Ս. Հովհաննես Հայաստանեայց Առաքելական եկեղեցվո անդամներուն և բարեկամներուն կուղարկեմ ողջույններ իրենց Մայր եկեղեցվո օծման և Ազգային տան բացման առթիվ: Այս սքանչելի նոր շենքեր կկանգնին իբրև խորհրդանշան ձեր ավանդության, ազատասիրության ու հավատքի երկար դարերու կյանքին: Հոն, Ձեր եկեղեցվո մեջ, դուք պիտի գտնեք ներշնչում ու ճառագայթմություն ձեր ծառայության առ Աստված և Ձեր նմաններուն: Շնորհավորություններ և լավագույն ցանկություններ: **ԴՈՒԱՅՏ Դ. ԷՅԶԵՆՀԱՈՒԵՐ»:**

*Ս. Հովհաննես եկեղեցու օծման և սուրբ պատարագի արարողության առաջին մասը մինչև «Ողջույն» հեռուստատեսությամբ սփռվել է Կալիֆոռնիայում։*



# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱԴԵՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

## ԶՎԱՐԹՆՈՑԻ ՇՈՒՐՋԸ*

### 8) ՎԱՐՊԵՏԱՆԻՇԵՐԸ

*Զվարթնոցի վրա, ինչպես մատնանշել է Թորամանյանը, բանել են շատ վարպետներ, որոնք եկեղեցու քարերի վրա քանդակված թողել են իրենց վարպետանիշերը[76]։ Այս վարպետանիշերից մի քանիսը, օրինակ 3-րդը, 12-րդը, 13-րդը և այլն հունարեն տառերի նման են (H, A, Г և այլն), մի քանիսն էլ հիշեցնում են հայերեն տառեր, օրինակ 5-րդը, 24-րդը, 25-րդը (Ա, Գ, Յ և այլն)։ Կան այնպիսիններն էլ, որոնք կարող են թե՛ հունարեն կամ թե՛ հայերեն տառեր համարվել, օրինակ 17-րդը, 26-րդը (Ս, Ռ)։ Սրանից կարելի է եզրակացնել,— և այս անհնարին չէ ամենևին,— որ Զվարթնոցի վրա աշխատած լինեն թե՛ հույն և թե՛ հայ քարտաշ ու որմնադիր վարպետներ։*

*Սակայն բացի այն նիշերից, որոնք կարող են տառեր համարվել, մնացածն իրոք պայմանական վարպետանիշեր են կամ թե, ինչպես Թորամանյանն է ասում, բանվորական նշաններ են։*

*Մեր ճարտարապետության պատմության դիտակ Թ. Թորամանյանը, հիշատակելով եվրոպական երկու ուսումնասիրողների— Վոգյուեի ու Դիեռլաֆուայի աշխատությունները Սիրիայի ու Պարսկաստանի շենքերի վրա պատահած վարպետանիշերի մասին և մեջ բերելով վերջիններիցս մի քանի տասնյակ նմուշներ, «որոնք ոչ մի այբուբենի չեն պատկանում»[77], հավանություն է տալիս նաև նրանց բացատրությանն այն մասին, թե ինչ նպատակի էին ծառայում այս վարպետանիշերը։*

*«Մեծամեծ շենքի ճարտարապետների քարտաշների միաբերյալ գործերը զանազան մասերի բաժանելով, յուրաքանչյուր մասը հանձնում էին առանձին կարող վարպետների, որոնց պարտականությունն էր թե՛ նույն մասի պատը շինել և թե՛ քարերը տաշելով տեղը շարել. այս միջոցին յուրաքանչյուր վարպետ իր շինած պատի վրա տաշած քարերի նշանները փորագրելուց հետո շարում էր պատի մեջ։ Գործը ամբողջանալուց հետո չափում էին յուրաքանչյուր հանձնառու վարպետի շինած պատերը և հաշվում էին նրանց նշաններով տաշված քարերը և ըստ այնմ տալիս էին ընդհանուր աշխատավարձը»[78]։*

*Թորամանյանի հիմնական թեզիսը, թե Զվարթնոցի քարերի վրա փորագրված նշանները վարպետանիշեր են, միանգամայն համոզիչ է։ Բայց նշանների այս բացատրությունը, որ նա տալիս է Վոգյուեին ու Դիեռլաֆուային հենված՝ ընդունելի չէ։ Վարպետանիշերի արվելու պատճառն աշխատավարձը հաշվելու հարմարություն ստեղծելը չէ։ Զվարթնոցի նման մի շենք չէր ավարտվում մեկ տարում, այլ երկար տարիների ընթացքում։ Մեկ տարվա մեջ գլուխ էր բերվում նրա մի համեմատաբար փոքրիկ մասը միայն։ Այս համեմատաբար փոքրիկ մասի մեջ յուրաքանչյուր առանձին վարպետի շինած, որ կառուցվում էր բոլորի աչքի առջև և որի մասին կարող էին մտաբերելով վկայել վերակացուից սկսած մինչև քար ու կիր ավող բանվորը, դժվար չէր հաշվարկի ենթարկել։ Այն ժամանակ էլ կային կավիճ ու ածուխ, որոնցով ամեն մեկը կարող էր պայմանական նշաններ դնել իր քանդակածի, տաշածի կամ շարածի վրա՝ չշփոթելու համար։ Եվ ինչ կարիք կար հատկապես քանդակելով վարպետանիշեր դրոշմելու քարերի ճակատին։ Մեր օրերում անգամ շենքեր են*

* Շարունակված ամսագրի 1958 թ. №№ Ա-ից և Բ—Գ-ից։

76 Թ. Թորամանյան, «Զվարթնոց եկեղեցու քարերի նշանները», «Տեղեկագիր», Բ, էջ 6։

77 Նույն տեղում, էջ 4։

78 Նույն տեղում։

ընծայում, ու ավելի շատ, արագ, և ոչ ոք չի տեսնում, թե ո՛ր վարպետն ինչ գործ է աշխատում, թե ո՛ր վարպետն ինչ գործ է ավարտում, թե ո՛ր վարպետն ինչ գործ է ատինում, որ գրագիտությունը շատ թույլ էր ակեր Հնում, որ գրագիտությունը շատ թույլ էր և մարդկանց հիշողությունն ավելի սուր, այլև մարդկանց հիշողությունն ավելի սուր, այսպիսի չփոթությունն անհնարին էր։ Ոչ, վարպետանիշների թանդակման պատճառն աշխատավարձը հաշվելու նկատառումները չէին։

Ի՞նչն էր հապա։

Ինչպես որ հիմա հեղինակը ու որաշ գրում է իր գործի տակ, որ իմացվի, թե ով է հեղինակը, կամ թե նկարիչը իր անունը դնում է կտավի մի անկյունում, որ իմացվի, թե ով է նկարել, այնպես էլ արհեստավորները, վարպետները հնում շահագրգռված էին, որ ճանաչվեր իրենց ձեռքի գործը։ Քանդակած վարպետանիշը նրանց յուրօրինակ ստորագրությունն էր, նրանց գործարանային մարկան։ Այս վարպետանիշերի մնացորդները տեսնում ենք ոչ միայն հնում, այլև նույն իսկ մեր օրերում, ոչ միայն քարտաշների, այլև դարբինների մեջ, ոչ միայն նրանց մոտ, որոնք բանում են աշխատավարձով, երբ կարող էին լինել հաշվապահական նկատառումներ, այլև նրանց մոտ, որոնք իրենց արդյունքը ծախում են իբրև ապրանք։

Բերեմ ինձ հայտնի օրինակները։

Տողերիս գրողի ծննդավայրում՝ Մակվում դարբնությունը մեկ տոհմի՝ Միրաքյան տոհմի ձեռքին էր։ Միրաքյաններից բացի ուրիշ դարբին չկար։ Հայրս՝ Հայրապետ Բաբեյան Ավդալբեգյան, Մակվի հայերի «միլլաթբաշի»-ն (ազգապետը), որ նույնպես դարբին էր և ամենահռչակված վարպետը թե՛ Մակվում ու թե՛ հարևան գավառներում, նույնպես Միրաքյան էր մոր կողմից, նա Միրաքի տղա Աղեի աղջիկ Զավոյի որդին էր, և իր արհեստը սովորել էր իր պապի՝ Աղեի մոտ։ Բուն Միրաքյան դարբին բնտանիքներն էին Միրաքի Գալուստի, Միրաքի Վարդանի, Միրաքի Մաթոսի ու Միրաքի Արզումանի ընտանիքները։ Եվ ահա այս բուն Միրաքյան դարբին ընտանիքներից յուրաքանչյուրն ուներ իր հատուկ վարպետանիշը, որ փորված էր պողպատյա «սումբա»-ի վրա։ Այս «սումբա»-ի փորագրված ծայրը գնելով պատրաստած առարկայի— բահի, մանգաղի, խոփի և այլ արտադրանքների վրա՝ մուրճով խփում էին «սումբա»-ի գլխին, և վարպետանիշը տպվում էր արտադրանքի վրա։ Տեղացիներին ու հաճախորդներին հայտնի էին այս վարպետանիշերը, և նրանք վերջիններից եզրակացնում էին, թե ո՛ր յավ կամ վատ արտադրանքը ո՛ր վարպետինն է պատրաստել։ Գնորդը, որ գիտեր, թե որ վարպետանիշն է լավ վարպետինը, ընտրում էր վերջինիս արտադրանքը, և նրան այլևս խաբել չէր կարելի՝ մի ուրիշ վարպետի ձեռքի գործ առաջարկելով։

Մակվի բուն Միրաքյան դարբին ընտանիքների վարպետանիշները սրանք էին.



1 2 3 4

Սրանցից առաջինը Մաթոսենցն էր, երկրորդը՝ Վարդանենցը, երրորդը՝ Գալուստենցն ու չորրորդը՝ Արզումանենցը[71]։

Մենք կարծում ենք, որ քարի գործում վարպետանիշերը նույն նշանակությունն են ունեցել, ինչ որ ունեին երկաթի գործում. նրանց կոչումը մեկ է— վկայել, թե ո՛ր վարպետի գործն է, և ուրիշ ոչինչ։

Թորամանյանը նշելով, որ Հայաստանի տարբեր վանքերում պատահում են երբեմն նույն վարպետանիշերը՝ փորձում է եզրակացություններ անել վարպետների նույնության վերաբերմամբ։ Այս շատ հրապուրիչ հեռանկարներ է բաց անում հայ ճարտարապետության պատմության համար։ Բայց այստեղ էլ հարկավոր է մեծ զգուշություն, որովհետև երկու տարբեր վարպետներ իրարից անկախ կարող են ընտրած լինել նույն վարպետանիշը։ Բերենք մի օրինակ էլի դարբինների միջավայրից։

Ղամարլուի մոտերքում մի գյուղ կա Այասլու անունով։ Այասլուն ուներ մի նշանավոր դարբին, որից հայրս 90—900-ական թվականներին գնում էր «մարանդիներ» (տեղական պատրաստության դերանդիներ՝ համեմատաբար կարճ ու շատ լայն շեղբով)։ Այդ դարբինին տեսել եմ աշակերտ ժամանակս, անունը մոռացել էի։ Հարց ու փորձ անել տալով իմացա, որ Այասլուի մանգաղ ու մարանդի շինող հայտնի վարպետի անունն էր մուխսի Հովհաննես Սահակյան։ Նրա «մարանդիները» հղկված էին Մակվի գավառի գյուղերում։ Ինչպես այսօր հիշում եմ, որ երբ Երևանից վերադառնալիս հորս հետ անցնում էինք Մակվի գյուղերով՝ թուրք երկրագործները մեծ հետաքրքրությամբ հարցնում էին, թե հայրս «Այասլուի մարանդի» բերել է թե ոչ։ Նրանց հայտնի էր Այասլուի դարբնի վարպետանիշը։ Եվ վերջինս, երիցուկ (ромашка) ծաղկի նման մի նշան, բոլորովին նման էր Միրաքի Մաթոսենց վար-

[71] Մակվի Միրաքյանների վարպետանիշերի գծվածքն ստացել եմ Մակվի Քիլիսե Թափա գյուղի բնակիչ քաղաքացի Վասիլ Միրզոյանից, որը Միրաքյան Մաթոսի ու Արզումանի թոռն է և որը պատմի հատակում նշան անգամ փորել է փչել նրանց դարբնոցներում։

պետանիշին։ Հիմա մտածում եմ նույնիսկ, որ Այսալուփ դարբնի հռչակն է թերևս եղել պատճառ, որ Մաթոսենք կպել են այն կարգի վարպետանիշից։ Ճիշտ է իմ այս կասկածը, թե ոչ, դժվարանում եմ պնդել, բայց փաստը մնում է փաստ. Այսալուփ դարբին մուխսի Հովհաննեսն ու Մակվի դարբին վարպետ ընտանիքներից մեկը՝ Միրաքի Մաթոսենք ունեին միևնույն վարպետանիշը»։

Նույնը կարող էր պատահել նաև քարի գործում։ Տարբեր ճարտարապետների ու քարտաշների վարպետանիշերի նույնությունը հնարավոր է։ Այս նույնությունը կարող է լինել կա՛մ պատահական նմանություն, կա՛մ դիտավորյալ նմանեցում։ Ուսումնասիրողը ճիշտ եզրակացություն կարող է հանել այն ժամանակ միայն, երբ վարպետանիշերի նույնության ուղեկից լինի վիմական արտադրանքի որակի, ուրեմն և կատարման նույնությունը։

Վերջում ասենք, որ անկախ այն հանգամանքից, թե ինչ նշանակություն են ունեցել վարպետանիշերը, սրանց բազմաքանակ լինելը Զվարթնոցում ուշագրավ է նրանով, որ ցույց է տալիս, թե այս եկեղեցու վրա իրենց շնորհն ու ճարտարությունն են թափել մի քանի տասնյակ որակավորյալ քարգործներ։

## 9) ՀՈՎՀԱՆ ՈՒ ՀՈՎՀԱՆ ՄԱՐԴՊԵՏԱԿԱՆ

Այս բոլոր քարգործ վարպետներն անշուշտ աշխատել են մի գլխավոր ճարտարի կամ ճարտարապետի ծրագրով ու ցուցումներով։

Ո՞վ է Առապարի եկեղեցին հոյակերտող արվեստագետը. ո՞վ է ճարտարապետը Զվարթնոցի, որն, ըստ Թորամանյանի՝ «հանճարի հանդուգն և հոյակապ սլացք մըն էր»[80]։

Դեռևս 1905 թվականին Թորամանյանն ուշադրություն էր դարձրել հետևյալ պարագայի վրա՝ գրելով.

«Զույգ որմնասյուներում յուրաքանչյուր խոյակեն վեր, աղեղներու միացած մասին վրա քանդակված են եկեղեցիի շինության ժամանակակից աշխատավոր եկեղեցական և աշխարհական անձերու բարձրաքանդակ պատկերները՝ բանալի, բահ, բրիչ կամ այլ գործիքներ բռնած ձեռքերնին։ Մասնավորապես ուշագրավ է պատկեր մը, որուն գլխի վեղարը ցույց կուտա, թե եկեղեցական մըն է, որը մեկ ձեռքով բահ և մյուս ձեռքով բրիչ բռնած է, և որու գլխուն շուրջը գրված է «Յօհաննա» անունը»[81]։ Թորամանյանից հետո Մեսրոպ վարդապետն էլ է նշել, թե «Մարդակերպ բարձրաքանդակներից մեկի վրա կա... «Յօհանա» անունը» և հավանորեն քանդակվածի զգեստից գուշակելով եզրակացրել է, թե սրանով «իմանում ենք... տէր Յոհան վարդապետի անունը»[82]։

Թորամանյանի ու Մեսրոպ վարդապետի այս նշածը նորից հրապարակ հանելով՝ Գ. Լեոնյանն այս Հոհանի վրա է դնում իր մատն՝ ի դեմս սրա տեսնելով Զվարթնոցը կերտող արվեստագետին։

«Ուրիշ տեղեր չը որոնենք,— ասում է,— Զվարթնոցի ճարտարապետին...։ Նա իր ամբողջ հասակով կանգնած է եկեղեցու ճակատից թափված բեկորներից մեկի վրա, բարելյեֆ՝ մուրճ և բահը ձեռքին, անունն էլ հայերեն տառերով փորագրված՝ Յոհան. Նրա հետ են ուրիշ, նման բեկորների վրա իր օգնականները, ճարտարները, 7-րդ դարի հայ կառուցող բանվորներ, նույնպես մուրճ և այլ շինարար գործիքները ձեռքերին բռնած. ուրիշ ո՞վ կարող էր արժանանալ այդպիսի բարձր պատվի»[83]։

Այնուհետև Լեոնյանը բացատրություններ է տալիս, թե ինչու՞ Յոհանը քանդակված է եկեղեցական տարազով. Նրա ասելով կա՛մ Հոհանն աշխարհական էր և նրան պատված լինելու համար քանդակել են հոգևորականի տարազով, ինչպես ավելի ուշ ժամանակներում էլ պատկերել են ուրիշ աշխարհիկ անձանց, և կա՛մ հոգևորական է իր իսկ տարազով։

Նրա այս վերջին բացատրությունների դեմ ոչինչ առարկել չի կարելի. Նրանք հավանական են։ Զվարթնոցի ճարտարապետի բարձրաքանդակ նկարն ու անունը գտնելուց հետո Լեոնյանը նույնի անձնավորությունը բացատրելու նպատակով հետևյալ ենթադրությունն է անում. «Գուցե կարելի է, նույնիսկ, այդ մարդուն նույնացնել Ներսեսի նախագահությամբ Դվինում կայացած ժողովին մասնակցող Հոհան վարդապետի հետ»[84]։

Թե ո՞վ էր վերջինս, մինչև հիմա պարզված չի եղել։

Փորձենք լուսավորել այս աղոտացած դեմքը։

«Կանոնագրքի» մեջ սրա լրիվ տիտղոսն է՝ «Տէր Յովհաննէս Ոստան և Մարդպետական եպիսկոպոս»[85]։ Սրա ստորագրությունը դըր-

80 Թորոս Թորամանյան, «Հայ ճարտարապետություն— Զվարթնոց եկեղեցին», «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1905 թ. № 5, էջ 197։

81 Նույն տեղում, էջ 193։

82 Մեսրոպ վարդապետ, «Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիները», էջ 78։

83 «Տեղեկագիր», Ա., էջ 208։

84 Նույն տեղում։

85 «Կանոնագիրք Հայոց», խմբագրեց Աբսեն վրդ. Կլոնյան. Թիֆլիս, 1911 թ., էջ 129։

ված է բոլոր ժողովական եպիսկոպոսների ստորագրություններից առաջ ու Ներսես Շիրակացու ստորագրությունից անմիջապես հետո։ Այս ցույց է տալիս, որ նա իր ժամանակի ամենահեղինակավոր դեմքերից մեկն էր։ Օրմանյանն իրավամբ սրան նույնացնում է այն Յովհաննես Մարդպետական եպիսկոպոսի հետ, որը, նախքան Եզրի՝ հույներին արած գիջումը, այսինքն նախքան Կարնի միաբանությունը, Եզր կաթողիկոսի ու Սյունյաց հռչակավոր Մաթուսաղա եպիսկոպոսի հետ գրել է դավանաբանական նշանավոր նամակն առ թագավորն Հերակլ վասն հավատոյ»[86]։ Օրմանյանը դարձյալ կարծում է, թե այս թուղթը գրված է Կարնի միաբանությունից (432—433 թ.) հետո, այն ժողովից հետո, որտեղ Եզրն ու կուսակիցները համոզվեցին և պարտվեցին Հերակլից ու հույն դավանաբաններից ընդունելով, թե «ոչ գոյ ի նոսա թիւրութիւն ինչ վասն հաւատոյ», և թե «նոքա (յոյնք) բուն արմատք են, և մեք (հայք) ոստք մի ի նոցանէ բուսեալ»[87]։ Պատմական ու ժամանակաբանական կանխակալ կարծիքները թույլ չեն տվել Օրմանյանին, որ սա ճիշտ գնահատի Եզր կաթողիկոսի, Հովհաննես Մարդպետական ու Մաթուսաղա Սյունյաց եպիսկոպոսների՝ Հերակլի գրած թուղթն ու ըստ այնմ ստույգ որոշի նրա գրության ժամանակը։ Այս թղթի վերջում կարդում ենք. «Դիր հաւատոյ խոստովանութեան, զոր մեծանձնութեան ձերոյ արարեալ առ նուաստութիւնս մեր՝ տեսանելով մեր քննութեամբ գտեալ ըստ ամենայն հարցն ճշմարիտ և ուղիղ խոստովանութեամբ առ սուրբ միասնական երրորդութիւնն բարեպաշտեալ, զոր ընկալաք և ընդունիմք»։

Առաջին հայացքից թվում է, թե համերաշխությունը կատարյալ է։ Սակայն այս տպավորությունը վայրկենական է։ Անմիջապես հետո սկսվում է գլխավոր առարկությունը՝ «Բայց զժողովն Քաղկեդոնի խոստովանեալ էր (ձեր— Թ. Ա.) և կարգեալ ընդ երիս ժողովսն»,— բողոքում են հայ դավանաբանները և սկսում խիստ հերքումներ մեջ բերել, որոնց հաջորդում է անկասկածելի ու անսքող վերջաբանը. «Առաջին և վերջին հերձուածողս նզովեալ եմք և նզովեմք. բայց զժողովն (ակնարկը Քաղկեդոնին է վերաբերում— Թ. Ա.), որ բաժանեալ բնութիւնսն պահէ, և ոչ տայ ամել Աստուած խաչեցեալ... ոչ կարեմք ընդունիլ և ո՛չ ընդ այնոսիկ, որ փոքրկացուցանեն զմարմին և զարիւն Տեառն՝ հաղորդել. զի ոչ ունիմք այդպիսի սովորութիւն»[88]։

Պարզ երևում է, որ այս թուղթը գրված է Հերակլի ուղարկած «Հաւատոյ խոստովանութեան» գրից հետո։ Ի՞նչ կարիք ուներ Հերակլը Կարնի միաբանությունից հետո նորից մի նման թուղթ ուղարկելու։ Երկրորդ. Կարնում Եզրն ու կուսակիցներն ընդունել էին Քաղկեդոնի ժողովն ու հաղորդվել կայսեր հետ. այլևս ի՞նչ միտք ուներ բամականց նորից գրել, թե «ժողովն ոչ ընդունիմք և ընդ յոյնս ոչ կարեմք հաղորդիլ»։ Երրորդ. եթե ընդունենք, որ այս թուղթը գրված է Կարնի միաբանությունից հետո, ապա պետք է հետևցնենք, որ Եզրը հրաժարվել էր իր բռնած ընթացքից, դարձի եկել։ Այդ ժամանակ ինչո՞վ պետք է բացատրել Եզրի հազարամյակներ տևող համբավը, թե նա ցմահ քաղկեդոնիկ է եղել։

Այս դժվարությունները վերանում են, երբ անկանխակալ հայացքով ենք նայում իրողությանը։ Թուղթը գրված է Կարնի միաբանությունից առաջ, երբ հայ դավանաբանների մեջ դեռ կարծիքների տարաձայնություն չէր մտել, երբ Եզրը դեռ չէր խախտվել և նրա հետ համերաշխ էին հայ եկեղեցու ամենանշանավոր տեսարանները։ Եվ Եզրը Հերակլին պատասխանում է այս տեսարաններից ամենանշանավոր երկսի հետ, որոնք բոլորից ընդունված անվիճելի հեղինակավոր դավանաբաններն էին։

Ովքե՞ր էին սրանք։ Բոլոր մատենագիրները միաձայն տալիս են երկու անուն՝ Յովհան և Մաթուսաղա։ Ուրիշ անուն մեջտեղ չի գալիս։ Մաթուսաղան Սյունյաց վարդապետարանի մեծ էր։ Իսկ Հովհա՞նը— Հայոտնի Մայրավանեցին կամ Մայրագոմեցին, որը Կարնի միաբանությունից հետո դառնում է Եզրի ամենակատաղի թշնամին։

Պատմագիրները մի այլ նշանավոր դավանաբան Հովհաննես Մարդպետական կամ Ոստան և Մարդպետական եպիսկոպոս անունով չեն հիշում[89]։

Ի՞նչ պետք է եզրակացնել սրանից։ Այն, որ «Ոստան և Մարդպետական եպիսկոպոս» ստորագրությունը նշանավոր Հովհաննես Մայրագոմեցու պաշտոնական տիտղոսն էր, և ուրեմն Մայրագոմեցին է Մաթուսաղայի հետ Հերակլին թուղթ գրողը և նա է Ներսես

86 Ստեփաննոս Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911 թ., ԻԹ, էջ 119։—Հմմտ. Օրմանյան, «Ազգապատում», § 468, էջ 696, § 480, էջ 712—713։

87 Ստեփաննոս Օրբելյան, ԻԸ, էջ 117։

88 Ստեփաննոս Օրբելյան, ԻԹ, էջ 120, 130։

89 Օրմանյանը խիստ դիպուկ գրում է. «Այդ միայ-ցին խոսված Հովհան մը միայն Մայրագոմեցին է» («Ազգապատում», § 494, էջ 733), բայց իր այս կռահումից բխող եզրակացությունը չի հանում։

*Ծինոզի օրոք Դվնի ժողովի ցանկի առաջին եպիսկոպոսը*[90]։

*Եթե ճիշտ լիներ Լեոնյանի թեզիսը, թե Զվարթնոցը շինել է Դվնա ժողովին մասնակցող Հովհաննես Ոստան և Մարդպետական եպիսկոպոսն, ապա դուրս կգար, որ է դարի ամենանշանավոր հայ տեսաբանը նաև հայ ամենատաղանդավոր ճարտարապետն է եղել։ Այս դեպքում հայ արվեստի պատմությունը, հանձին Մայրավանեցու, կունենար իր Լեոնարդո դա Վինչիին։*

*Սակայն Լեոնյանի թեզիսը հանդիպում է նորանոր առարկությունների։*

## 10) ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻՆ ՉԷ ԶՎԱՐԹՆՈՑԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

*Զվարթնոցի շինության հանգամանքների ու ժամանակաբանության ճշտումը դեռ ավարտված չէ։ Զվարթնոցի շինության թվականներ կարելի է դնել 641—661, եթե ընդունենք, որ տաճարի կառուցումն սկսվել է Ներսեսի կաթողիկոսանալու տարիներում՝ շարունակվելով նաև նրա փախուստի շրջանում։ Կարելի է ընդունել 641—652, եթե ճիշտ համարենք Մովսես Կաղանկատվացու այն տեղեկությունը, թե Կոստանդին կայսրը, որ Հայաստան էր արշավել 652-ին, ներկա է եղել Զվարթնոցի օծման ու բացման հանդիսին։ Կարելի է հաշվել 645—652, եթե ընդունենք, որ եկեղեցին շինված է Դվնա ժողովից հետո, երբ Ներսեսն էլ Եզրի պես սկսել էր հայտնապես թեքվել հույների կողմը (Դվնի ժողովում, 645 թ., դեռ նրա հետ է Հովհան Մայրավանեցին. այս նշան է, որ դեռ կուրսի փոփոխություն չկա) և ի տրիտուր ստացել է նաև ազանձ՝ Զվարթնոցը շինելու համար։ Վերջապես կարելի է շինության թվականներ հաշվել 645—661, այսինքն Ներսեսի հոմափառության ամբողջ ժամանակաշրջանը։ Սրանցից ամենից ընդունելին մեզ թվում է 645—661 թվականները տեղ միջոցը, և ահա թե ինչու։*

*Անհավանական չէ, որ Զվարթնոցը շինված լինի բյուզանդացիների ազանձով ու թելադրությամբ. Զվարթնոցից առաջ տեսնում ենք նույն շրջանում մի նախադեպ էլ. մոտ մի տասնամյակ առաջ Դավիթ Սահառունի կյուրապաղատը, հունասեր հոսանքի աշխարհիկ պարագլուխը, Հերակլի հրամանով շինել էր Մրենի եկեղեցին. «Ի ամին յայսմիկ առուրս կայսրն Հերակլ զԴավիթ Սահառունի կուրապաղատ արարեալ՝ իշխան Հայոց կացուցանէր. որ մեծաւ ճոխութեամբ և յաղթութեամբ բազմաւ fաղաfավարէր զիշխանութիւնն ամս Դ և ի հրամանէ նորուն շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար, որ ի քաղաքագեղն Մրենս»*[91]։

*Կայսեր հրամանով եկեղեցի շինելն անշուշտ կարող էր գլուխ գալ նաև կայսեր նյութական օժանդակությամբ. եկեղեցական շինարարությամբ Բյուզանդիան ուզում էր ակնառու ու շոշափելի կացուցանել տարբեր իշխանությունների համեմատության միջոցին իր տիրապետության առավելությունը։ Նույն քաղաքականությունը շարունակվում է նաև Ներսեսի օրով։ Հետնագույն ժամանակի պատմագիր Կաղանկատվացու վկայությունը, թե Կոստանդինը կոչված է եղել եկեղեցու բացման հանդիսին և ներկա է եղել*[92] *ընդունելի չէ, որովհետև ժամանակակից Սեբեոսը, որ մանրամասն նկարագրում է Կոստանդնի Դվնում արածները, լռում է կայսեր Զվարթնոցում եղած լինելու մասին։*

*Եվ Զվարթնոցն ավարտված չէր էլ կարող լինել, եթե սկսվել էր 645-ից հետո։ Ըստ Հ. Օրբելու, Անիի մայր եկեղեցին շինվել է 12 տարում, Թագարանի տաճարը՝ 7 տարում, Մրենինը՝ մոտ 25 տարում, Գագկի եկեղեցին Անիում՝ 14 տարում, Բագավանինը՝ 9 տա-*

---

*90 Հայ եկեղեցու նորագույն պատմագիրներից մեկը՝ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, «Հովհան Մանդակունի ու Հովհան Մայրագոմեցի» ուսումնասիրության մեջ բերում է Փոտ պատրիարքի թղթից մի հատված, որից երևում է, թե հունական աղբյուրների համաձայն Մայրագոմեցին դեռ կենդանի է եղել Ներսես Գ-ի կաթողիկոսության միջոցին («Ճոզակաթ», էջ 111)։ Կարապետ վարդապետը անհավանական է համարում, որ Հովհանը «կենդանի լիներ Ներսես Շինողի ժամանակ («Ճոզակաթ», էջ 111)։ Նա այս եզրակացության է հանգում՝ չընդունելով, որ ոչ միայն Եզրի, ոչ միայն Քրիստափոր Բ-ի, այլև Կոմիտաս կաթողիկոսի օրերում հուշակավոր դավանաբանն անուն ու դեր ունեցած հոգևորականը կենդանի մնար նաև Ներսեսի օրոք, այն է՝ քառասուն տարի անց։ Այս շատ թույլ առարկություն է։ Նշանավոր գործիչների երկարակեցությունն ու բազմամյա հեղինակավորությունը անհնարին բան չէ ամենևին (հիշենք հենց օրինակ Կլեմանսոյին Ֆրանսիայում, Լև Դեյլին՝ Ռուսաստանում, իսկ հայերից՝ հենց Օրմանյանին)։ «Կնիք հավատոյ» գրքի ներածության մեջ Կարապետ վարդապետը մի քիչ մեղմացնում է իր ժխտական դիրքը գրելով. «Եթե Մայրագոմեցին սրա (Ներսես Գ-ի) օրով կենդանի լիներ, ամենապատկառելի զառամյալ հասակի մեջ պիտի լիներ («Կնիք հավատոյ», էջ XCVII)։ Քերովբե Պատկանյանն էլ է ընդունում, որ Ներսես Տայեցու ժամանակ Մայրավանեցին դեռ կենդանի էր («Ղևոնդ պատմիչ», ծանոթություններ, էջ 178)։*

91 Դրասխանակերտցի, էջ 80։

92 Մովսիսի Կաղանկատուացւոյ «Պատմութիւն Աղուանից», Թիֆլիս, 1912 թ., Գ, ժԵ, էջ 363—364։

բում և այլն[93]։ Հայ ճարտարապետության գլուխ-գործոցն անշուշտ երկար ու երկար տարիների արգասիք է եղել։

Այս նախապատրաստական տեղեկություններից հետո վերադառնանք դարձյալ ճարտարապետի անձնավորության հարցին։

Դրասխանակերտցին ստույգ հիշատակում է՝ «Անաստաս (եպիսկոպոս, ապա կաթողիկոս—Թ. Ա.) ի գեղջէն Ակոռոյ, որ ի Մասեաց ոտին... սեննկապան լեալ մեծին Ներսեսի՝ և վերակացու շինուածոյ հրաշակերտ եկեղեցւոյն զոանէր հրամանաւ Ներսեսի. մինչ էր նա ի հալածանս ի գաւառին Տայոց»[94]։ Եթե պատմագիրը գիտե Զվարթնոցի շինության պարագաներն այդքան մանրամասն և հիշատակում է վերակացու Անաստասին, նա անշուշտ առիթը չէր փախցնի հիշելու, թե հրաշակերտ եկեղեցու «ճարտարապետը» Հովհան Մայրավանեցին էր, մի մարդ, որ, ըստ Դրասխանակերտցու, «էր յայնմ ժամանակի փիլիսոփայ կատարեալ և Աստուածային գրոց գիտութեան բանիբուն»[95]։ Այնուհետև, եթե Զվարթնոցը հունադավանության կոթող էր, նրա ճարտարապետը չէր կարող լինել հակաքաղկեդոնիկ Մայրագոմեցին կամ որ նույնն է, Ոստան և Մարդպետական եպիսկոպոսը։ Վերջապես երրորդ ու ամենածանրակշիռ առարկությունն այն է, որ եթե Զվարթնոցը 652-ին դեռ ավարտված չէր, և նրա կառուցումը շարունակվում էր Ներսեսի փախուստի տարիներում՝ 653—659 թվականներին էլ, ապա Մայրավանեցին չէր կարող լինել նրա ճարտարապետը, որովհետև այս նշանավոր տեսաբանը հիշյալ շրջանից շատ առաջ մեռած էր արդեն։

Այս մասին ունենք Սեբեոսի անառարկելի վկայությունը, որի վրա ուշք չեն դարձրել բանասերները։

Նա պատմում է, թե ինչպես 652 թվականին Դվինի Ս. Գրիգոր եկեղեցում, Կոստանդին կայսեր ներկայությամբ, «քարոզեցաւ ժողովն Քաղկեդոնի..., և մատեաւ պատարագ հռոմերէն ի հռոմ երիցուէ», և թե «հաղորդեցաւ թագաւորն և կաթողիկոսն և ամէն եպիսկոպոսանին», ապա ավելացնում է. «Իսկ մահուն երկիւղի ամենեքեան զհրամանս հաղորդութեանն կատարէին՝ մանաւանդ զի մնացեալ էին նորանելիքն՝ որք էին հիմնաւորագոյնքն»[96]։

Հայ հոգևորականների թուլությունն այստեղ բացատրվում է նրանով, որ մեռել էին նրանց տեսաբան պարագլուխներն անհողդողդ։

Ովքե՞ր էին սրանք։ Դարձյալ Հովհանն ու Մաթուսաղան։ Վերջինիս մահվան թվականը վերջնականապես ստուգված չի կարելի համարել, բայց ստույգ է, որ Սյունյաց այս եպիսկոպոսը 652-ի մոտերը մեռած էր արդեն։ Ըստ Օրմանյանի՝ Մաթուսաղայի նախորդ Դավիթ եպիսկոպոսը ձեռնադրվել էր 607-ին։ Ըստ Օրբելյանի՝ Դավիթը Սյունյաց աթոռը վարել է 27 տարի, իսկ Մաթուսաղան՝ 18 տարի[97]։ Ըստ այսմ՝ 607+27+18=652։ Եթե Դավթի 27-րդ տարին կամ Մաթուսաղայի 18-րդ տարին լրիվ տարի չհամարենք, ապա Մաթուսաղայի մահվան թվականը կարող է մեկ տարով էլ հետ գնալ՝ ընկնելով 651-ին։ Սակայն այս թվականը կարելի է և անհրաժեշտ է էլ ավելի հետ տանել։ Տեսանք, որ Օրմանյանը ճիշտ չգնահատած լինելով Եզրի, Հովհան Մայրագոմեցու ու Մաթուսաղայի՝ Հերակլին գրած թուղթն՝ այն դնում է Կարնի միաբանությունից (633—634 թ.) հետո, այնինչ այս վավերագիրը գրված է ավելի առաջ և նրա մեջ Մաթուսաղան արդեն եպիսկոպոս է։ Եթե Կարնի ժողովն ընդունենք 634-ին և Մաթուսաղային թեկուզ մեկ տարի առաջ եպիսկոպոս ձեռնադրված, ապա 633+18=651։ Կարնո ժողովը 633-ին դրած դեպքում մեկ տարի հանելով ու 18 տարի գումարելով կունենանք 632+18=650։ Բայց ինչն է ստիպում Մաթուսաղային անպայման մեկ տարի առաջ եպիսկոպոս եղած կարծել։ Ըստ Օրբելյանի նա ձեռնադրվել է Եզրից[98], սա կաթողիկոս է եղել 631 կամ 630 թվականին[99]։ Ըստ այսմ, Մաթուսաղայի մահվան ամենավաղ թվականները կարող են լինել՝ 631—1+18=648, կամ՝ 630—1+18=647։

Այս հաշիվներով ստանում ենք Մաթուսաղայի մահվան ժամանակի եզրերը միայն, որ են 647—652 թվականները։

Այսպիսով ճշտվում է Սեբեոսի ասածը, թե «հիմնավորագույն»-ներից մեկը՝ Մաթուսաղան մեռած էր 652 թվականին։ Սրանով հաստատվում է մյուս «հիմնավորագույն»-ի՝ Հովհան Մայրավանեցու մասին ասածն էլ. վերջինս էլ մեռած էր Դվինի միաբանությունից առաջ։

Մայրավանեցու մահը 652 թվականից առաջ դնելը վերջնականապես անհնարին է դարձնում նրան Զվարթնոցի ճարտարապետ հռչակելը։

93 Н. Орбели, „Багаванская надпись" 639 г. и другие арм. ктит. надписи VII в. („Христианский Восток", т. II, вып. 1, СПБ, 1913 г., էջ 117—118).

94 Դրասխանակերտցի, էջ 90։

95 Նույն տեղում, էջ 77։

96 Սեբեոս, Գ. ԼԵ, էջ 229։

97 Ստեփանոս Օրբելեան, ԻԸ, էջ 112, 119։

98 Նույն տեղում, ԻԸ, էջ 118։

99 Օրմանյան, «Ազգապատում», § 460, էջ 685 և Օրբելու հիշված հոդվածը, էջ 111։

## 11) ՆԵՐՍԵՍ ՇԻՆՈՂ

*Զվարթնոցի վրա եղած պիտի լինեն մի շարք, հավանորեն 16, բարձրաքանդակ նկարներ, որոնցից մոտ կեսն է գտնված։ Անհնարին չէ և կարող է պատահել, որ չհայտնաբերված նկարների մեջ լիներ մի երկրորդ նկար էլ, փորագրված անունով։ Ասվածից հետևում է, որ չի կարելի պնդել, թե Հովհանը Զվարթնոցի գլխավոր ճարտարապետն էր։ Բայց որ նա ճարտարապետներից մեկն էր, այս շատ հավանական է, թեև դժբախտաբար մենք դեռ չենք կարողանում նրա ինքնությունը բացահայտել։*

*Վարպետանիշերի ու քարգործների, Հովհան Մարդպետականի, Հովհան Մայրագոմեցու, Հովհան ճարտարապետի մասին այսքան ասելուց հետո, մենք ժամանակն ենք համարում մատնանշելու մի քանի փաստեր, որոնց հարկ եղած մեկնաբանությունը տալուց հետո, Հովհանի հարցն արդեն երկրորդական տեղ է բռնում Զվարթնոցի կառուցման պատմության գործում, որովհետև կարծես թե անակնկալ բացվում է դաղտնիքի վարագույրը, և մենք մեր հանդեպ տեսնում ենք Զվարթնոցի գլխավոր արվեստագետին, որի գործով հիացած են իրազեկ մասնագետները, և որը բացառիկ նշանավոր տեղ է գրավում հայ արվեստի ու մասնավորապես հայ ճարտարապետության պատմության մեջ։*

*Ներսես Գ-ի շինած եկեղեցիներն ընդամենը երեք են թվով— Դվինի Ս. Սարգիսը, բուն իսկ Խոր Վիրապինն ու Զվարթնոցը։ Եկեղեցական պատմագիրներից Օրմանյանն է, որ մտորել է, թե ինչու հատկապես այս կաթողիկոսն է Շինող կոչվում. քչե՞րն են եղել հայ հոգևորականների ու աշխարհականների մեջ, որոնք մի քանի եկեղեցիներ կամ վանքեր են շինել։ Եվ նա յուրովի այս բացատրությունն է տվել. «Անտարակույս, ուրիշ շատ մը ավրված կամ քանդված եկեղեցիներու նորոգության ձեռնարկեց (Ներսես Գ) վասնզի մեկ-երկու շինությամբ չէր կրնար Շինող մականունը ստանալ»*[100]*։*

*Օրմանյանն էլ, ինչպես տեսնում ենք, Շինող մականունը շինարար իմաստով է հասկացել։ Կարևորը նրա բացատրությունը չէ, այլ նրա սկզբնական տարակույսը Շինող մականվան նկատմամբ։*

*Եվ իրոք։ Ինչո՞ւ է Ներսես Գ-ը միայն Շինող կոչվել։ Մի՞թե չի կարելի այս մականվանն ուրիշ բացատրություն տալ։*

*Հայկազյան Նոր բառգիրքը չունի «շինող» բառը։ Փոխարենն ունի «շինիչ», որ բացատրված է այսպես. «որ շինէ, շինող»։ Սակայն նույն Բառգիրքն ունի «շինողական» ու «շինողութիւն» բառերը։ Առաջինը բացատրված է հունարեն* δημιουργικός, δημιουργικὸν *բառերով և իբրև վկայություն բերված են մեր հին թարգմանություններից հետևյալ խոսքերը. «Որ առ շինողական արհեստն աշխատին» ու «զբժշկականէն ասեմ և զշինողականէն»։ Հունարեն «դեմիուրգ» նշանակում է վարպետ, արհեստավոր, և այս երկու վկայությունների մեջ էլ խոսքը շինողական արհեստի մասին է։ Հաջորդ «շինողութիւն» բառը բացատրված է «արուեստ շինելոյ, ճարտարապետութիւն»՝ դեմը դնելով տաճկերեն* «հափրճըլըգ, մէյմարլըգ» *բառերը*[101]*։ Արձեռն Բառարանը «շինողական արհեստ» ու «շինողութիւն» բառերի դիմաց դրել է միայն «ճարտարապետութիւն» բառը՝ կողքին շարելով տաճկերեն* «հափրճըլըգ, տիվարճըլըգ, մէյմարլըգ» *բառերը, որոնք նշանակում են «վարպետություն, որմնադրություն, ճարտարապետություն»*[102]*։*

*Որ հայերենում «շինող» բառը, բացի ընդհանրապես «շինարար» կամ «շինել տվող» իմաստից՝ հին հայերենում ունեցել է նաև հունարեն «դեմիուրգ»-ի, տաճկերեն «մէյմար»-ի, այն է՝ ճարտարապետ վարպետի իմաստ, սրա ամենափայլուն օրինակն է Ագաթանգեղոսի հետևյալ հատվածը։ «Եւ ինքն Գրիգորիս (Լուսավորիչ) զլար ճարտարապետութեան շինողացն ի ձեռն առեալ՝ զերանելեացն (կուսանաց) վկայական հանգստարանացն զհիմունսն յօրինէր»*[103]*։*

*Այս նշանակում է. «Եւ ինքը Գրիգորիոսը ճարտարապետների (կամ վարպետների) արհեստի լարը ձեռքն առնելով՝ երանելիների վկայարան-հանգստարանների հիմքերն էր կերտում»։*

*Ակներև է, որ «շինող» նշանակում է ոչ միայն «շինել տվող», այլև «վարպետ», ճարտարապետ։*

*Ներսեսը կոչվում է Շինող։ Արդյոք այս մականունը չէ՞ր կարող նրան տրված լինել այն պատճառով, որ իր Զվարթնոցի վրա հենց նա ինքն էր վարպետություն արել՝ գլխավոր ճարտարապետը հանդիսանալով։ Կարող էր, և Հովհաննես Դրասխանակերտցին բացորոշ վկայել է այս մասին, բայց նրա պարզ ասածին հարկ եղած ուշադրությունը չդարձնելով՝ Զվարթնոցի բուն ճարտարապետին անտեսել ենք մինչև օրս։*

---

100 Օրմանյան, «Ազգապատում», § 479, էջ 711։

101 «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», Բ հատոր, Վենետիկ, 1837, էջ 478։

102 «Արձեռն Բառարան», Բ տպագրություն, Վենետիկ, 1865, էջ 835։

103 Ագաթանգեղոս, § 758, էջ 393։

«Թեղեցիկ խմն մոլութեամբ,— ասում է պատմիչը,— դնէ ապա հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տանն Աստուծոյ, ըստ անուանակրութեան Սրբոյն Գրիգորի՝ յանձն առնելով զկատարումն իմաստութեան ՇԻՆՈՂԻՆ Քրիստոսի»[104]: Ներսեսը հիմնում է Առաքելի Ս. Գրիգորի եկեղեցին՝ ինքն ստանձնելով վարպետի, ճարտարապետի գործը մի գեղեցիկ մոլությամբ:

Նույն իրողությունը պատմիչը հատկապես նորից շեշտում է մի այլ հատվածում. «Բայց հայրապետն Ներսէս պարապ անձին գտեալ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն զոր ինք իսկ էր շինեալ, շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր» և այլն[105]:

Դրախանակերտցու ասույթյան հատուկ շեշտին այլ իմաստ չի կարելի տալ: Նա կարող էր ուրիշ բառերով ասել՝ թե իր խոսքը վերաբերում է այն եկեղեցուն, որը Ներսեսը շինել էր Առաքելում. բայց նա այս չի ասում, այլ հիշեցնում է, որ Զվարթնոց եկեղեցին հենց ինքը Ներսեսն էր շինել, այն Ներսեսը, որի մասին վերևում ասել էր, թե իմաստուն կերպով իր վրա էր առել «շինող»-ի, վարպետի գործը՝ մի գեղեցիկ մոլությամբ հանդիսանալով ճարտարապետ ի Քրիստոս:

Այս աչքով նայելիս նոր իմաստ է ստանում ժողովրդական պատմությունն այն տեղեկությունն էլ, որ վերևում տեսել ենք և որն ասում էր՝ «երկասիրաբար յարդարեալ շինել (Ներսես Գ կաթողիկոս) զսուրբ Շողակաթն ի Նոր Քաղաքս: Այս հատվածում էլ պարզապես կամ սովորական ձևով չի ասված, թե շինում է Շողակաթ եկեղեցին, այլ շեշտում է «երկասիրաբար յարդարեալ շինէ» նաև: Եվ այսպես հենց, որ խոսքը գալիս է Զվարթնոցի շինարարության, ապա Ներսեսի այս հոյակերտ ձեռնարկության մեջ ունեցած մասնակցությունն անպատճառ առանձնապես ընդգծվում է. մի ընդգծում, որ չի կարելի բացատրել սոսկ նրանով, որ նա էլ եղել է

մի նախաձեռնող, ինչպես շատ ուրիշները: Մենք կարծում ենք, որ հիշյալ ընդգծումները հաստատում են Ներսես Տայեցու շինողական-ճարտարապետական հատուկ ու գովելի մոլությունը: Եվ իր գործով հափշտակված ճարտարապետի մոլությամբ միայն կարելի է բացատրել, որ Ներսեսը իր շինած եկեղեցու խոյակների վրա անգամ դնում է իր անվան տառերն, իսկ Զվարթնոցի ճակատին հունարեն փորագրել է տալիս իր անունը նույնիսկ առանց «կաթողիկոս» տիտղոսի. թե՝ «Ներսեսն է շինել, հիշեցեք», կամ՝ «Ներսեսի շինածն է, հիշեցեք»:

Նա այս անում է ճարտարապետների համար ընդունված արձանագրական շաբլոնի համաձայն, որ տեսնում ենք շատ տեղ, բայց մեր դեպքին ամենից նման ու հարմար է գալիս Որից Մանկանց վանքի ճարտարապետի արձանագրությունը, որ գրված է Ներսես Շինողի հիշյալ արձանագրից մոտ 1 000 տարի հետո, 1664 թվականին. «Շինաւղ և վարպետ եկեղեցւոյս ուստայ Սարգիսն յիշեցէք ի Քրիստոս»[106]:

Որից Մանկանց վանքի ճարտարապետը մի այլ տեսակի մոլությամբ իրար կողքի շարել է իր արհեստավորական կոչումը երեք համանիշ բառերով՝ «շինող, վարպետ, ուստա»:

Զվարթնոցի ճարտարապետն իրեն հիշել խնդրում է առանց իր արհեստավորական կոչումը շեշտելու: Բայց պատմությունը պահել է նրա արհեստավորական կոչումը, բաղմեցնելով կաթողիկոս կոչման կողքին: Եվ ինչպես Գրվըլջիխեի 985 թվականի արձանագրության մեջ մի այլ կրոնավոր հիշվում է թե՝ իր հոգևորական աստիճանով ու թե՝ արհեստավորական կոչումով. «Սամէհան ճարտարապետ արեղայ»,[107], ճիշտ նույն կերպ էլ Զվարթնոցի ճարտարապետի անունը պահված է նրա թե՝ հոգևորական աստիճանի ու թե՝ արհեստավորական կոչման հիշատակությամբ, այսպես՝ «Ներսէս ՇԻՆՈՂ կաթողիկոս»:

104 Դրասխանակերտցի, էջ 83:

105 Նույն տեղում, էջ 88:

106 «Վիմական Տարեգիր», էջ 189, արձանագր. 1 664:

107 Նույն տեղում, էջ 9, արձանագրություն:

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

# ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ*

## «ՆԱՅԵԱՑ ՍԻՐՈՎ» ԵՎ «Ի ՔԷՆ ՀԱՅՑԵՄՔ» ԵՐԳԵՐԸ

*Ներսես Շնորհալու այս երկու երգերը՝ «Նայեաց սիրով» և «Ի քէն հայցեմք», երգվում են ամբողջ Մեծ պահոց օրերին, «խաղաղական ժամու» երեկոյան ժամերգության։*

*«Նայեաց սիրով» երգն ունի ԲՁ ձայն և բաղկացած է 10 տնից։ Տների առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Ներսեսի երգ» բառերը։*

*Այս երգով երեկոյան ժամավորը օրվա աշխատանքից հետո փառաբանում է գթած Հորը՝ Աստծուն, որ գիշերվա խաղաղություն պարգևի, որ Իր երկնային հրեշտակների բանակով պահապան լինի իրեն, փրկի խավարի մեջ շրջող դևերից, որպեսզի, ցերեկ թե գիշեր, հավատացյալները անլռելի ձայնով փառք տան երկնային Հորը.*

*«Նայեաց սիրով, Հայրդ գթած,*
*Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.*
*Եւ զբանակս հրեշտակաց*
*Տուր պահապան մեզ՝ տկարացս.*
*Փրկեա զանձինս ի փորձանաց,*
*՝Ի խաւարի շրջող դիւաց.*
*Զի ի տուընջեան և գիշերի*
*Տացուք քեզ փառս անլռելի»[11]։*

*Ըստ Շնորհալու, ցերեկն ստեղծված է աշխատանքի ու գործի, իսկ գիշերը՝ հանգստի ու քնի համար։ Սակայն բանաստեղծը խնդրում է Տիրոջից՝ մարմնի աչքերով միայն քնել, իսկ հոգու աչքերով՝ արթուն լինել.*

*«Որ արարեր զաւր գործոյ,*
*Եւ զգիշեր ի հանգիստ քնոյ,*
*Տուր ի ննջել աչաց մարմնոյ,*
*Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ»։*

*Երգի հաջորդ տան մեջ Շնորհալին խնդրում է, որ Տիրոջ սիրո կրակը բորբոքվի մեր հոգիների մեջ, մաքրի մեր սրտի խորհուրդները և փայլեցնի գիտության աստվածային լույսը, մահվան քնից արթնացնի և մեր մտքերը երկնային բոցով վառի, լուսավորի.*

*«Սիրոյ քո հուր արկեալ յերկիր*
*Բորբոքեսցի ի հոգիս մեր.*
*Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ,*
*Զլոյս գիտութեան քո փայլեսցէ,*
*Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ,*
*Զմիտս բոցով քո վառեսցէ...»։*

*Շնորհալու այս երգի մեջ ևս կան դավանաբանական բնույթի տողեր, ինչպես օրինակ.*

*«Սուրբդ սրբոց Երրորդութիւն,*
*Զմեզ մաքրեա քեզ բնակութիւն...»։*

*Երգի վերջում Շնորհալին Աստծուց խնդրում է, որ կյանքի վերջին գիշերը, երբ հնչի Գաբրիելյան փողը, մեզ արժանի դարձնի Տերը լսելու այդ ուրախ կանչի ձայնը և դասի մեզ աջակողմը՝ այսինքն արդարների շարքը, որ իմաստուն կույսերի պես միշտ պատրաստ լինենք անշեջ լապտերներով դիմավորելու երկնավոր Փեսային, երբ Նա անակընկալ կերպով գա.*

---

* Շարունակված ամսագրի 1957 թվականի № Բ-ից և 1958 թվականի №№ Ա-ից և Բ—Գ-ից։

11 «Ձայնքաղ շարականի», էջ 476։

«Գուշման փողոյն Գաբրիէլի,
Որ ի վերջնումն գիշերի,
Լսել արա զմեզ արժանի,
Եւ աջակողմն օդեաց դասի.
Անշէջ վառեալ լոյս լապտերաց,
Ըստ իմաստուն հինգ կուսանաց.
Զի ընդ փեսայիդ ի յառագաստ
Հարսունք հոգւով մտցուք ի փառս»։

Այստեղ էլ ձեռագրերում վերջանում է Շնորհալու «Նայեաց սիրով» երգը, սակայն Շնորհալու տպագիր բոլոր շարականներում այս գեղեցիկ երգի վերջում ավելացված են երկու տուն երգեր։ Դրանք Շնորհալու գրածը չեն և հավանաբար հետագա դարերում են ավելացվել։ Ահա այդ տներից մեկը.

«Հայածեա՛ ի մէնջ, Տէր, նշանաւ խաչի քո,
Զընդդիմամարտ և վաներևոյթ զազանն.
Եւ մի՛ տար յապականութիւն զքո
ժառանգութիւնս»։

Այս տունը չի կապվում երգի բովանդակության և ընդհանուր գաղափարի հետ։ Հասկանալի չէ նաև, թե խոսքը ո՛ր «աներևույթ գազանի» մասին է — սատանայի՞, մեղքի՞, թե ուղղակի գազանի մասին է։

Այնուհետև երկրորդ տան մեջ անծանոթ հեղինակը դիմելով Մարիամ Աստվածածնին, ասում է.

«Բարեխօսեա վասն մեր, Աստուածածին
Մարիամ,
Որ ծնար զՏէր Աստուած, որ հովուէրն
զԻսրայէլ,
Ամենազօր և սքանչելի փառօքն իւրովք»։

Այս երկու տուն երգերը «անարվեստ» են և հասարակաց աղոթքի ու քարոզի նման տողեր են, որոնց տուն համարելն էլ իհարկե ճիշտ չէ, որովհետև տունը չափածոյի օրենքներ ու գույն ունեցող մի երևույթ է, որոշ տողերից, իմաստից, չափից ու տաղաչափությունից կազմված։

Մյուս խաղաղական երգի՝ «Ի քէն հայցեմք»-ի մեջ Շնորհալին իր երգն ուղղում է «գթությունների և միխիթարությունների Հոր Աստծուն»։ Այս անգամ երգիչը հայցում է ոչ թե պաշտպան, որ իրենց պահպանի ու փրկի խավարի մեջ գնացող դևերից, այլ ուղարկի մխիթարություն «ի տրտմութեանց մեղաց», այսինքն՝ ազատի տխրությունից, որն առաջ է գալիս մեղքից և տա ուրախություն, որը հետևանք է բարի, արդար գործերի։ Այս ամենը Տերը կկատարի ոչ միայն երգչի խնդրանքով, այլ Ս. Աստվածածնի և բոլոր արդարների աղաչանքներով ու միջնորդությամբ.

«Ի քէն հայցեմք, Հայր գթութեանց
Եւ Աստուած մխիթարութեանց.
Ի տխրական գիշերային մերձեալ ժամուս,
Մխիթարեա՛ զմեզ ի տրտմութեանց մեղաց
Եւ շնորհեա՛ զուրախութիւն գործոց
արդարութեան.
Աղաչանօք Սուրբ Աստուածածնին և
ամենայն արդարոց»։

Հոր հետ խոսելուց հետո, այս անգամ բանաստեղծը իր աղոթքն ուղղում է Որդուն՝ Հիսուսին, թե երբ փառավոր կերպով գաս դատելու խաչի թշնամիներին, քո Մոր բարեխոսությամբ ների՛ր մեր հանցանքները և պահի՛ր քո խաչի հովանու տակ.

«...Յորժամ գաս փառօք Հօր դատել
զթշնամին խաչի քո,
Ներեա՛ յանցանաց մերոց բարեխօսու-
թեամբ Մօր քո և Կուսի...»։

Շնորհալին պաղատում է նաև Ս. Հոգուն, որ «նորափետուր զարդարի մեր ննջեցյալներին»։ Ինչպես երևում է, «Ի քէն հայցեմք»-ը ուղղված աղոթք է, խնդրվածք է Ամենասուրբ Երրորդության։

Արվեստի տեսակետից «Ի քէն հայցեմք»-ը կարծես չունի «Նայեաց սիրով» երգի թափը, ուժգնությունն ու գեղեցկությունը։ Այս գործը ավելի շուտ նման է արձակի, քան թե երգի կամ բանաստեղծության։

Ըստ ձեռագրերի[45], «Ի քէն հայցեմք»-ի նախավերջին տունն է «Զկենդանագիր անարատ ծնողի քո» բառերով սկսվող տունը, իսկ տպագիր շարականներում՝ «Հաղորդս արա», որից հետո էլ մի տուն՝ «Ի նստիլ քո յատենի դատաստանի»։ Իմաստի ու ձևի տեսակետից էլ այդ երկու տները ամբողջի հետ համապատասխանում են ու երգին խորթ չեն։

«Նայեաց սիրով»-ին երկու տների ավելացումը, որի մասին ասվեց, և «Ի քէն հայցեմք»-ի վերջին երկու տների տեղափոխության փաստի մեջ համոզվելու համար, մեր կողմից նայվել են 5—6 տպագիր և ներքոհիշյալ ձեռագիր երգերը, ուր «Նայեաց սիրով»-ին ավելացրած 2 տները չկան և «Ի քէն հայցեմք»-ի տների տեղափոխությունը կատարված չէ։ Ահա՛ այդ ձեռագրերը. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր №№ 8874, 2961, 2090, 3179, 824, 3438 և այլն։

Տեղին է այստեղ նշել, որ Շնորհալուն վերագրվող տպագիր շարականները համեմատված են Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում գտնվող Շնորհալու շարականների հետևյալ ձեռագրերի հետ. №№ 1553, 5274, 3484, 1558, 4084, 6987, 8540, 9053, 424, 3438, 370, 1576, 1577, 1585, 1589։

[45] Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 2961, էջ 126։

## ՇՆՈՐՀԱԼՈՒ՝ ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

*Ավագ շաբաթվա, Քրիստոսի մատնության ու խաչելության վերաբերող շարականներից է նաև Շնորհալու «Արծաթսիրութեամբն մոլեալ» շարականը։ Այս օրհնությունն ունի ԲՋ ձայն և կազմված է երկու փոքրիկ համախմբից, բաղկացած 5 տնից։ Այս շարականն իր թե՛ բովանդակությամբ և թե՛ ձևով ավետարանական պատմում է, որտեղ հեղինակը հանգիստ, գրեթե արձակ գրվածքի ձևով պատմում է, որ արծաթասեր, մատնիչ Հուդան երեսուն արծաթով հրեաներին է մատնել իր Վարդապետին։ Հուդան պայմանավորվել է հրեաների հետ, թե որին որ ես համբուրեմ, նրան էլ բռնեք։ Գեղեցիկ է Լրբորդ տան մեջ հետևյալ հուզիչ պատկերավոր տողը․*

*«Ով համբոյր նենգութեան, նշան և աւիթ մահու»[16],*

*Մատնությունից հետո Ս. Հոգին հեռացավ Հուդայից, նա մերկացավ հոգով և նմանվեց սատանային՝ «զգեցաւ զսատանայ»։*

*Օրհնության երկրորդ հատվածում տրվում է մատնության գիշերը, երբ Փրկիչը ամբողջ ժամանակ Ձիթենյաց լեռան վրա աղոթել է և խնդրել Աստծուց՝ «Հայր, անցո յինէն զբաժակս...»։*

*Ըստ Կիրակոս Գանձակեցու, Շնորհալին գրել է նաև «Աւագ շաբաթին երեք աւուրցն» շարականները, այսինքն Ավագ երկուշաբթի, Ավագ երեքշաբթի և Ավագ չորեքշաբթի օրերին վերաբերող օրհնությունները՝ «Անեղն ի Հօրէ», Օրհնութիւն ԲՋ (Ավագ երկուշաբթի), «Իմաստուն կուսանքն», Օրհնութիւն ԲԿ (Ավագ երեքշաբթի), «Որ յաթոռ փառաց», Օրհնութիւն ԳՋ (Ավագ չորեքշաբթի)։*

*Ավագ երկուշաբթի օրվա «Անեղն ի Հօրէ» Օրհնության մեջ փառաբանվում է «ի Հօրէ ծնեալ Որդին»-ն՝ Հիսուսը, «երկնային և երկրաւոր զուեթիւն»-ը, կոչ է արվում բոլոր արարածներին՝ փառք տալ «Արարչին արարածոց»։ Այս Օրհնության գլխավոր գաղափարի համար հիմք է հանդիսացել Հին Կտակարանի «բանիւ Տեառն երկինք հաստատեցան», «ասաց և եղեն» խոսքերը։ Անեղն Ինքը Քրիստոսն է, որ ծնվել է երկնավոր Հորից և եկել է աշխարհ՝ վերացնելու մեղքը։ Շնորհալին դուրս չի եկել աստվածաշնչական պատմումի շրջանակներից։ Շարականը գրված է պարզ և պատկերավոր է։*

*Երեքշաբթի օրվա օրհնության «Իմաստուն կուսանքն»-ի նյութը վերցված է Ավետարանի տասնութ իմաստուն և հիմար կույսերի առակից և օգտագործվել է այլաբանորեն։*

*Այս կույսերից հինգը իմաստուն են. իրենց լապտերների մեջ ժամանակին յուղ են լցնում և վառ լապտերներով են դուրս գալիս երկնավոր փեսայի առաջ. իսկ հինգը՝ հիմար են, ժամանակին ձեթ չեն լցնում իրենց լապտերների մեջ և դրա համար էլ անպատրաստ եղան դիմավորելու Փեսայի գալստյան, որովհետև լապտերները հանգան։*

*Դրա համար էլ Շնորհալին խրատում է, որ մենք պետք է հոգևոր յուղ պատրաստենք, որպեսզի կարողանանք վառած լապտերներով դիմավորել Փեսային՝ Փրկչին.*

*«Վասն որոյ և մեք պատրաստեսցուք իւղ հոգևոր,*
*Զի մտցուք ի յառագաստ անմահ փեսային վառեալ լապտերօք»[17],*

*Չորեքշաբթի օրվա Օրհնության նյութն էլ քաղված է ավետարանիչներ Մատթեոսի ԻԶ 6 և Մարկոսի ԺԴ 3 գլուխներից։ Այստեղ տրված է այն դեպքը, երբ Հիսուսը Բեթանիայում նստած էր բորոտ հիվանդությամբ տառապող Սիմեոնի տանը, որտեղ և օծվեց մեղավոր կնոջ կողմից՝ «Որ կենարար թաղման քո զուշակ պիւղոյն ծանուցեր օծմամբն»։ Այնուհետև խոսվում է Քրիստոսի մարդկության և վերջում՝ Հուդայի արծաթսիրության և մատնության մասին։*

*Սահակ վարդապետ Ամատունին վկայում է, որ Շնորհալին, բացի Ավագ երեքի ցույակի, գրել է նաև «Այսօր ի կատարումն» հետևակ շարականը («Կանոն Մեծի Ուրբաթին»), շաբաթ օրվա «Կենդանին յաւիտենից» և «Կուսածին մարմնով Քրիստոս» հայանի օրհնությունները[18],*

*«Այսօր ի կատարումն» հետևակ շարականն ունի ԴՋ ձայն և բաղկացած է ութ տնից, որոնք բոլորն էլ սկսվում են «այսօր» բառով։ Այս հետևակ շարականը համարյա կրկնում է «Այսօր անճառ» սքեմի գաղափարները։ Այստեղ էլ, իհարկե, ոչ «Այսօր անճառ»-ի արվեստով պատմվում է, որ Վերջին ընթրիքի ժամանակ պարզվեց Հուդայի նենգ դեմքը և նա դուրս վռնդվեց փոքրիկ հոտի՝ աշակերտների խմբի կողմից։ Ինքը՝ Քրիստոսը, որպես Գառն Աստուծո կամավոր դիմել է դեպի մահ, աշխարհի մեղքերը վերացնելու համար.*

16 «Ձայնքաղ շարական», էջ 216։

17 Նույն տեղում, էջ 204։

18 Սահակ վարդապետ Ամատունի. «Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ», Էջմիածին, 1911 թ., էջ 92։

«Ուստի և Դու Գառն Աստուծոյ,
Կամաւ դիմեալ ի մահ խաչի
Առ ի քաւել զմեղս աշխարհի...»[49]:

Այնուհետև երգում է հեղինակը, թե Քրիստոսը, որը Ինքն էր զորացնում երկնավորներին և երկրավորներին, այսօր Ինքը զորության կարիք է զգում և այն ստանում է հրեշտակներից: Եվ վերջապես այսօր երկնային անմարմին հրեշտակների բազմությունը զարհուրած, զարմանում է Փրկչի խոնարհության վրա, որ կամավոր կերպով Իրեն մատնում է մեղավորների և չարագործների ձեռքը:

Արժեքավոր են նաև Շնորհալու «Կենդանին յափտենից» և «Կուսածին մարմնով» շարականները, որոնք սխալմամբ միացվել են Ս. Սահակին վերագրվող «Պարգևատուն ամենեցուն» հայտնի Օրհնությանը և դրվել են շարակնոցում այդ Օրհնության տակ, որպես նրա հատվածներից մեկը:

Այս երկու շարականների հեղինակը Շնորհալին է և սխալ է, որ մինչև օրս էլ դրանք համարվել են «Պարգևատուն ամենեցուն» շարականի մասերը և հետևապես վերագրվել Ս. Սահակին: Սահակ վարդապետ Ամատունին իր «Հին և Նոր պարականոն կամ անվավեր շարականներ» ուսումնասիրության մեջ, հենվելով ձեռագրերի և Սարգիս Երեցի Տոնացույցի ու շարականների ցուցակի վրա, գրում է. «Ըստ Սարգիս Երեցի Շնորհալին գրել է նաև Մեծի Ուրբաթու «Այսօր ի կատարումն» հայտնի հետևակ շարականը. և շաբաթ օրվա «Կենդանին յափտենից» և «Կուսածին մարմնով Քրիստոս» հայտնի Օրհնությունները, որոնք բաղդրությամբ գրված են «Պարգևատուն ամենեցուն» Օրհնության տակ: Այս մասին Սարգիս Երեցը գրում է իր Տոնացույցում. «Եր. Թաղման Տն. շարականներ իւրն և զնորերն ասա» Թ. 234ա»: Իսկ այս նորերն են վերոհիշյալ երկու շարականները, որոնք գրել է Շնորհալին, ինչպես ուժեղ չափով ազդվելով Ս. Սահակի «Պարգևատուն ամենեցուն» Օրհնության շարականից»[50]:

Համեմատենք մի երկու օրինակով Ս. Սահակի և Ներսես Շնորհալու շարականները՝ ազդեցությունն ու նմանությունը ցույց տալու համար:

Ս. Սահակի «Պարգևատուն ամենեցուն» շարականի առաջին տան մեջ կարդում ենք. «Այսօր խնդրի պարգև ի Պիղատոսէ... ճառանի պատիւ ի Յովսէփայ»[51]:

Շնորհալու «Կենդանին յափտենից» շարականի առաջին տան մեջ կարդում ենք. «Այսօր խնդրի որպէս մեռեալ ի Պիղատոսէ... յանձն առնու պատիւ ի Յովսէփայ»:

Ս. Սահակի «Պարգևատուն ամենեցուն»-ի երկրորդ տան մեջ՝ «Այսօր դնի ի նոր գերեզմանի և զանձն անմահութեան կնքի մատանեաւ Քահանայիցն»:

Շնորհալու «Կուսածին»-ի առաջին տան մեջ՝ «Այսօր դնի ի կոյս գերեզմանի և լուծիչն երկանց զժոխոց մատանեաւ կնքի Քահանայիցն»:

«Պարգևատուն»-ի երրորդ տան մեջ՝ «Զոր օրհնեն զօրք երկնից երգով, պահպանի ի զինուորաց»:

«Կուսածին»-ի երկրորդ տան մեջ՝ «Որ սատէն զԻսրայէլ անօրէն՝ պահպանի ի զինուորացն» և այլն:

Շնորհալին այս երկու շարականներում էլ, ինչպես սիրում է նա սովորաբար, երգում է Քրիստոսի մարդեղությունը, խոնարհությունը, նախահորն ու մարդկությանը իր մեղքերից ազատելու համար կամավոր հանձն առած խաչելությունն ու չարչարանքները:

Շնորհալու Ավագ շաբաթվա շարականների մեջ, իր ձևով ու բովանդակությամբ, ինչպես հիշվել է, «Այսօր անճառ»-ը մի անզուգական պոեմ է, գրված մեծ թափով ու արվեստով: Այնուամենայնիվ մնացածներն իրենց արվեստով պակաս արժեքավոր շարականներ չեն: Ինչպես երևում է, Ավագ շաբաթվա շարականները երգել են մեր երկու մեծ հայրապետները՝ Ս. Սահակ Պարթևն ու Ներսես Շնորհալին:

## ԱՎԱԳ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՌ ՁԱՅՆ

Այս օրհնությունը բաղկացած է մի քանի փոքրիկ պատկերներից, ամեն մեկը երեք տնից: Երգի հենց սկզբից բանաստեղծը կոչ է անում.

«Երգեցէք Տեառն երգ նոր ձայնիւ
ցնծութեամբ,
Որ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ
փրկել զարարածս»[51]:

Ապա դիմում է ժողովրդին.

«Նայեցարուք ժողովուրդք ի սքանչելիս
փրկութեան մերոյ,
Որ մարդասիրապէս բանն որպէս ցօղ
խոնարհեալ յերկիր.
Տուք օրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ»[52]:

---

49 «Ձայնքաղ շարական», էջ 213:

50 Սահակ վարդապետ Ամատունի, «Հին և Նոր պարականոն կամ անվավեր շարականներ», էջ 92:

51 «Ձայնքաղ շարական», էջ 225—226:

52 Նույն տեղում, էջ 263:

Բանաստեղծի ուրախ զգացումների և ցնծության պատճառը Քրիստոսի Հարությունն է։ Նա Իր անարատ բազուկները տարածեց խաչի վրա և մարդկությանը հովանավորելու, փրկելու համար առավ Իր թևերի տակ.

«Որ զանարատ բազուկս Իր
Միածինն տարածեաց ի վերայ խաչին.
Եւ զբաժանեալ որդիսն Ադամայ
Ժողովեաց ընդ թևօքն Իւրովք»։

Շատ շարականների մեջ, նրանց թվում և Շնորհալու մոտ, շարականների հիմնական միտքը խարսխվում է Փրկչի մարդեղության խորհրդի վրա, մարդկությանը Ադամի մեղքերից փրկելու համար հանձն առնված կամավոր խաչելության և մահվան վրա։ Քրիստոս Իր մահվամբ վաստակել է անիմանալի, անմահ կյանքը և Իր խաչով խաղաղություն է հաստատել երկրի վրա և երկնքում.

«Կեանք ի կենաց և յոյս յարութեան,
Որ արարեր խաչիւ քո խաղաղութիւն
յերկինս և յերկրի.
Տուր մեզ, Տէր, զքո զխաղաղութիւնդ,
Որպէս սրբոց քոց առաքելոց...»։

Բայց Օրհնության մեջ միշտ չէ, որ երևվում են հարության շարականներին հատուկ ուրախ, ցնծալից զգացմունքները։ Տեղ-տեղ այդ կենսախինդ տրամադրությունների փոխարինում են մեղքի պատճառելիք տխուր զգացմունքներ և մտքեր։ Այստեղ փոխվում է շարականի աշխույժ, ուրախ բնույթը և դառնում ինքնաձաղկման, ապաշխարության կարգի մի երգ։ Բանաստեղծն իրեն համեմատում է Հովնան մարգարեի հետ, որ երեք օր կետ ձկան փորը մնալուց հետո, Աստուծո կամքով ազատվեց։ Բանաստեղծն էլ ընկված է չար վիշապի, այսինքն՝ մեղքի ժանիքով և դրա համար աղերսագին դիմում է նա Փրկչին, որ Նա Իր փրկարար խաչով ազատի իրեն չար վիշապի ժանիքներից և մեղքի ալեկոծ ծովի ահեղ ալիքներից.

«Ընդ Յովնանու անձն իմ ծփեալ յալիս
մեղաց ծովու...
Որ փրկեցեր զմարգարէն յորովայնէ
կիտին,
Ապրեցո և զըմբռնեալս ի ժանեաց
Չար վիշապին կենարար խաչիւդ»։

Օրհնության վերջում երգիչը աղերսանքով դիմում է Աստվածամայր Մարիամին, որ բարեխոսի առ Միածինն յարուցեալ ի մեռելոց», փրկելու համար իրեն հավիտենական կրակից։

Ընդհանրապես այս օրհնությունը գրված է թափով և ջերմ զգացմունքներով, կան աչքի ընկնող պատկերներ. գրվածքի լեզուն պարզ է ու մատչելի։ Օրհնության համար հիմք են ծառայել Հին ու Նոր Կտակարանների համապատասխան պատմումները։

Հարության կանոններում Շնորհալին ունի 5 շարական, որոնցից մեկին՝ վառ ձայնի Օրհնության ծանոթացանք։

Բացի այդ, Շնորհալին ունի 4 շարական ևս, որոնցից երկուսը՝ Օրհնություն և երկուսն էլ Ճաշու շարականներ են։ Օրհնություններից մեկն ունի վերջ ձայն, «Նորոգող կզգիք», իսկ մյուսը՝ վառ ձայն, «Յարեաւ Տէրն ի գերեզմանէն» վերնագրերով։ Մնացած երկուսը Ճաշու «Գովեստ»-ներ[53] են, 3-ական տնից բաղկացած պատկերներով։ Ըստ Ճաշու մի «Գովեստ»-ի՝ Փրկիչն Իր հարությամբ նորոգել է տիեզերքը, մարդկությունն ու Նրա կյանքը։ Ահա սրա համար էլ բանաստեղծը ուրախ զգացմունքներից ցնծում է և այդ ուրախությանը ուզում է մասնակից դարձնել ամբողջ նորոգված ժողովրդին, որ դան ու նոր օրհնություն երգեն՝ Փրկչի հարության համար.

«Նորացուցէք զօրհնութիւնս յարուցելոյն
ի մեռելոց,
Որ նորոգեաց զտիեզերս նոր օրհնութիւն
օրհնեսցուք.
Եկայք, ժողովուրդք, նոր օրհնութիւնս
երգեսցուք»[54]։

Մյուս «Գովեստ» կոչված Ճաշու շարականի մեջ գովերգվում է Քրիստոսի անմահ թագավորությունը. Նա անմահ է, Իր հարությամբ տիեզերքին պարգևել է կենդանություն, Իր խաչելությամբ ու մահվամբ լուծել, ոչնչացրել է մահը, այսինքն՝ անմահություն է բերել մեղապարտ ադամորդուն։ Քրիստոսը կատարելով Իր փրկարար գործը, համբարձել է երկինք և նստել Իր Հոր աջ կողմը.

---

53 Մեր շարակնոցում կան Ճաշու 6 շարականներ, որոնցից երկուսի հեղինակը Շնորհալին է, իսկ մնացած չորսի հեղինակներն անհայտ են։ Դրանք կոչվում են «Գովեստ» կամ «Յիսնանց» շարականներ։ «Գովեստ» կոչվում են նրա համար, որ նախքան սրանց երգելը ասում են «Գովեա Երուսաղէմ» բառերով սկսվող սաղմոսը. դրա համար էլ կոչվել են սաղմոսի առաջին բառով՝ «Գովեստ»։ «Յիսնանց» (հիսուն) էլ ասում են այն կարգի Հարության շարականներին, որոնք երգվում են Զատկից մինչև Հոգեգալուստ կամ Պենտեկոստե (հունարեն՝ 50 օր), որովհետև այդ երկու մեծ տոների միջև ընկած է 50 օր։

54 «Ձայնքաղ շարական», էջ 229։

«Որ յարեար ի մեռելոց կենդանութեանց
պարգեւատու՝

Քրիստոս անմահ՝ Թագաւոր.
Որ մահուամբ զմահ լուծեր,
անմահութիւն մեզ շնորհեցեր.
Որ ի լերկինս համբարձար և ընդ աջմէ
Հօր նստար՝

Աթոռ փառաց Բանդ Աստուածո»[55].

«Յարեաւ Տէրն ի գերեզմանէն». Օրհնու-
թյան մեջ նկարագրվում է, թե Քրիստոսի
հարության ժամանակ բնության մեջ ինչ
երևույթներ են տեղի ունեցել։ Փրկչի հարու-
թյան ժամին ուժեղ երկրաշարժ է լինում,
ժայռերն ու քարերը պատռվում են, աշ-
խարհը ցնցվում է ինչպես խաչելության
ժամանակ, երբ Քրիստոսը խաչի վրա մա-
հանում էր։

Այնուհետև երկնից այնպիսի ուժեղ և
շլացուցիչ լույս է ճառագայթում Քրիստոսի
գերեզմանաքարին, որ գերեզմանի պահա-
պանները զարհուրում են.

«Ընդ յառնել Փրկչին մերոյ երկիր
շարժեցաւ, վէմք պատառեցան.
Ճառագայթեալ լոյսն ի վերայ վիմին
զարհուրեցոյց զպահապաննա»[56].

Քրիստոսի հարությունից հետո հրեշտակ-
ների դասը շրջապատում է գերեզմանը և
տեսնում, որ Տերը հարություն է առել։ Իսկ
ատմածասեր կամ յուղաբեր կանայք, ո-
րոնք եկել էին անուշահոտ խնկով ու յուղով
Տիրոջ մարմինն օծելու, զարմացան, որ Տե-
րը չկար...

«Զատուածային գերեզմանաւն բոլորեալ
դասք հրեշտակաց
Տեսանէին զՏէրն յարուցեալ
ի գերեզմանէն...
Աստուածասէր կանայք եկին
ի գերեզման Փրկչին
Անույշ իւղօք և խնկօք՝ յօծանել
զմարմինն տէրունական...»։

Գերեզմանաքարին նստել էր լուսազգեստ
մի հրեշտակ. նա ավետեց յուղաբեր կա-
նանց, թե տիեզերքի Փրկիչը հարություն է
առել.

«Լուսապայծառ հրեշտակն նստէր ի վերայ
վիմին,
Եւ աւետարանէր կանանցն՝ Յարեաւ
Փրկիչն տիեզերաց»։

Այս վերջին շարականը գրված է թափով ու
վառ երևակայությամբ։ Այստեղ բանաստեղծ
ճնորհային Փրկչի հարության գեպքն ու նրա
նկարագիրը արտահայտել է աշխույժ, թարմ
պատկերներով, յուրատիպ ու հետաքրքիր։

55 «Ձայնքաղ շարական», էջ 229։
56 Նույն տեղում, էջ 242։



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՄԱՅՐԱՎԱՆՔ

(Ախտայի շրջան)

## § 1

Երևանից դեպի Սևան տանող խճուղիով անցնող ուշադիր ուղևորը, Շամիրամի սարը (Քյոթան դաղ) շրջանցելուց հետո, ձախ կողմում, հեռվում բարձրացող Թեղենիս (Ալիբեկ) լեռան հարավային լանջն ակոսող ձորի մեջ կնկատի մի մենավոր հուշարձան, որն իբրև մի դիտարան հսկում է ճանապարհից ցած տարածվող ընդարձակ սարահարթի վրա։ Դա պատմական Մայրավանքն է, որը է դարից սկսած, մեր գրականության մեջ հիշատակվում է նաև Մայրագոմ անունով։

Այս վանքի անունը սերտորեն կապված է Հովհան վարդապետ Մայրավանեցու կամ Մայրագոմեցու կյանքի և անվան հետ, և պետք է ասել, որ միայն այս կապակցությամբ է հիշատակվում մեր պատմության մեջ։ Այդ իսկ պատճառով, նախքան հուշարձանի նկարագրությանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում համառոտ նկարագրել այդ, իր ժամանակի ականավոր գործչի, մեր կարծիքով նաև մեծ հայրենասերի մասին այն, ինչ որ հայտնի է մեր պատմագիրներից։

Հովհան Մայրավանեցին է դարի կրոնական, գրական և, մենք կավելացնեինք՝ նաև քաղաքական ականավոր գործիչներից մեկն էր։ Նա հայտնի է իր դավանաբանական, մեկնողական, կրոնա-բարոյախոսական գրվածքներով և ճառերով։ Ըստ Ստեփանոս Տարոնեցի՝ Ասողիկ կոչված՝ պատմագրի, նա գրել է երեք գիրք. «Երատ վարուց», «Հաստատարմատ» և «Նոյեմակ»։ Նրա լեզվի մասին պատմաբան Լեոն այսպես է գրում. «Նշանավոր կրոնական գործիչը գիտեր գրել այնպիսի մի ընտիր հայերենով, որ երկար ժամանակ նրա գրությունները համարվում էին 5-րդ դարի գործ»[1]։

Որքան էլ արժեքավոր լինի Հովհան Մայրավանեցու գործունեությունը գրական և վարդապետական (քարոզչական) ասպարեզում, նրա մեծագույն արժանիքն այն է, որ նա բյուզանդական քաղաքականությանը կամա թե ակամա ենթարկված Եզր կաթողիկոսի վարքագծի դեմ դիրք բռնեց։ Թեև Հերակլ կայսեր և Եզր կաթողիկոսի փոխհարաբերությունները ըստ երևույթին լոկ կրոնական, դավանաբանական բնույթ էին կրում, սակայն հենց այն հանգամանքը, որ դավանաբանական այդ պայքարն ի մասնավորի հայության ազգային գոյությունն էր վտանգում, այդ հարցը կրոնականից վերածվում էր նաև մասամբ քաղաքականի։

Պատմությունից հայտնի է, որ բյուզանդական կայսրները, սկսած Հուստինիանոս մեծից (527—577), իրենց հսկա կայսրությունը ներքուստ ուժեղացնելու, միաձույլ դարձնելու նպատակով, ձգտում էին իրենց տիրապետության ներքո գտնվող քրիստոնյա ժողովուրդներին քաղկեդոնիկ դարձնել։ Այդ

[1] Լեո, «Հայոց պատմություն», հատ. Բ, Երևան. 1947 թ., էջ 340։

նպատակին հասնելու համար, նրանք որևէ միջոցի առաջ կանգ չէին առնում։ Բյուզանդական կայսրության ժողովուրդների թվում էին նաև հայերը, որոնք իբրև մարտական ուժ, մեծ կարևորություն ունեին։ Սակայն հայերն ունեին իրենց Ազգային Եկեղեցին, որը դավանանքով տարբեր էր կայսրության պետական կրոնից, ուստի և ամեն կերպ դիմադրում էին կայսրների հիշյալ քաղաքականությանը, որովհետև Քաղկեդոնը ընդունելով, իբր ազգություն կդիմազրկվեին և կկորցնեին իրենց գոյությունը։ Ծայր առին բացարձակ և քողարկված հալածանքները, հայության ընդվզումին վերջ տալու և ընդդիմադրության ուժը թուլացնելու նպատակով։ Այս քաղաքականությունը պարզորեն բնորոշվում է այդ ժամանակի պատմիչ Սեբեոսի կողմից Մորիկ կայսեր վերագրված մի նամակից, հասցեագրված պարսից Խոսրով Փարվեզ թագավորին։ Բերենք այդ քաղվածքը. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են [հայք], կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ՝ աստ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին, և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ։ Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի»։ Այստեղ նշանակություն չունի այն հանգամանքը, թե իրոք այդպիսի բովանդակությամբ նամակ է գրված եղել, այլ կարևոր է այն, որ հայերի մեջ տարածված է եղել բյուզանդական քաղաքականության այդպիսի լուսաբանությունը։ Բնական է, որ նման պայմաններում հայության առաջավոր, ազգասեր մարդիկ, ինչպիսիք էին Թեոդորոս Ռշտունին և Հովհան Մայրավանեցին, որը Կոմիտաս կաթողիկոսի կողմից տեղակալ էր նշանակված, իսկ Եզրի ժամանակ Դվինի Ս. Գրիգոր եկեղեցու փոխակալ, դեմ դային այս անգամ Հերակլ կայսեր կողմից Հայ Ազգային Եկեղեցու ինքնուրույնությունը վերացնելու նկրտումներին և գավերին։ Կարնո ժողովում Եզր կաթողիկոսն ու Հերակլ կայսրը Հայ և Հույն եկեղեցիների միության հարցում հասնում են որոշ հասկացողության։ Երբ կաթողիկոսը Հերակլ կայսեր հետ բանակցելուց հետո նոր էր վերադարձել դեպի Կարին կատարած իր ճանապարհորդությունից, Հովհանը, պախարակելով կաթողիկոսի արած քայլը, նրան չի դիմավորում։ Եզրը, որն ըստ Սեբեոսի «...էր այր խոնարհ և հեզ, որ ոչ կամէր զոք ցասուցանել...», նրան բռնությամբ իր մոտ է բերել տալիս, պախարակում, նույնիսկ ծեծում (ըստ Հովհաննես Դրասխանակերտցու վկայության՝ «Ապա հրամայէ Եզր մուրգածի տանջել զպարանոց նորա և զկզակս»)։ Սակայն արժե այստեղ մեջ բերել Սեբեոս պատմագրի նկարագրությունը Եզրի և Հովհանի ընդհարման, դրա հետևանքի, և ի միջի այլոց Մայրավանքը Մայրագոմ անվանելու մասին, որը պատմիչը կատարում է գեղեցիկ ու պարզ ոճով և վիպական մանրամասնություններով։ «...Սա (Եզրը) հանդիպեալ Հերակլի ի Կարնոյ քաղաքի, ոչ տանելով ընդ իւր զՅովհան՝ փակակալ Սրբոյն Գրիգորի, որ յայնմ ժամանակի կատարեալ էր աստուածային գիտութեամբ, այլ զոմն կիսակատար գիտութեամբ ընդ իւր առնոյր։ Եւ հասեալ ի ժողովն՝ խնդրէ ի նմանէ Հերակլ ձեռնարկ հաւատոյ։ Իսկ նորա իբրև տգէտ գոլով աստուածային գրոց՝ խաբեալ խորամանկութեամբն յունաց՝ նզովեալ զամենայն հերձուածողս բաց ի ժողովոյն Քաղկեդոնի, հաստատեալ նոցա ըստ օրինաց՝ մեծապարգև փառօք դառնայր, զնորը ժառանգեալ փոխան հաւատոյն։ Որոյ ընդ առաջ ելեալ նմա ուխտ եկեղեցւոյն, իսկ Յովհան ոչ ել, և մեղադրեալ Եզրի՝ ծանուցանէ նմա. որոյ ասացեալ օքաւ լիցի ինձ հաղորդել այնմ, որ քակեաց զցանկ հաւատոյս։ Եւ ապա բռնութեամբ մուծեալ ի սենեակն՝ ասաց Եզր զի ընդվզեալ և խրոխտացեալ ոչ տեսանես զմեզ։ Եւ նա ասէ «խրոխտումն ոչ գոյ յիս, այլ ջատագով ճշմարտութեան կամիմ լինել, բայց դու յիրաւի կոչեցար Եզր, զի յեզր հանեալ տրոհեցեր զհայաստանեայս, քակեալ զսահմանս հաւատոյ հարցն և խրամատեալ զառաքելական զցանկն՝ կործանեալ ի մարդադաւան տոմարն Լևոնի։ Եւ զայս ասացեալ գնաց յերեսաց նորա անարգանօք։ Եւ երթեալ բնակեցաւ ի Մայրոյ վանս. ուստի հալածեալ զնա Եզրի՝ կոչէ զանեգին Մայրագոմ, և զՅովհանն՝ Մայրագոմեցի։ Իսկ նորա գնացեալ ի Գարդման՝ անդ կատարէ զկեանս իւր առաքելական հանդիսիւ»[1]։

§ 2

Շատ անգամ եմ անցել Երևանից Սևան տանող ճանապարհով, և ամեն անգամ, Ֆանտան գյուղն անցնելուց հետո, երկար նայել եմ Թեղենիսի լանջին, անտառային բացատում ցցված հուշարձանին և ձգտել այցի գնալու պատմական այդ վայրը, որի անունն անքակ կապված է մեծ հայրենասերի, հալածական իմաստուն ծերի՝ Հով-

[1] «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Ս. Պետերբուրգ, 1879 թ., էջ 169։

ման Մայրավանքցու հիշատակի հետ։ Վերջապես, անցյալ տարի, օգոստոս ամսվա սկզբներին, ինձ հաջողվեց իրագործել երկարամյա իղձս։

Հուշարձանն այցելելու համար պետք էր գնալ Ախտայի շրջանի Սոլակ գյուղը, որը գտնվում է Հրազդանի ձախափնյա ժայռերի գլուխը ծակող տափարակի վրա։ Հուշարձանը գտնվում է գյուղից հյուսիս, գետի աջ ափին և այդտեղից այնքան պարզ և մոտիկ է երևում, որ թվում է թե 1—2 կիլոմետրից հեռու չէ, այն ինչ իրականում հեռավորությունը 5—6 կիլոմետր է։

գերեզմանոցը պատկանելիս է եղել նույն ձորում գտնվող մի գյուղի, որի հետքերը թերևս հնարավոր լինի հայտնաբերել շրջակա քարակույտերի մեջ։ Այդ առթիվ պրպտումներ անելը մեր ծրագրում չկար. բացի այդ, պետք էր շտապել, քանի դեռ զով էր, ժամ առաջ դիմացի սարալանջը բարձրանալու։ Մոտենում ենք Հրազդանին, որը ներկայումս այդ տեղում մի խղճուկ վտակ է։ Այժմ գետի հունով հոսող ջրերն ամբողջովին բխում են գետափնյա աջ ու ձախ կողմերի ժայռերի տակից, այնինչ բուն գետի ջուրը, Ախտայից ցած վերջերս կառուցված հուժկու ամբարտակին դեմ առնելով, փոխել է իր դարավոր ընթացքը, և Սոլակից վերև, ստորերկրյա ժայռերի մեջ փորված ջրանցքով գնում է բանեցնելու այդ գետի ափերին կառուցված հիդրոկայաններից հզորագույնի՝ Գյումուշհէսի մեքենաները։



ՄԱՅՐԱՎԱՆՔ— ՏԵՍԱՐԱՆԸ ՎԱՆՔԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ։

Գյուղից Մայրավանք կարելի է գնալ միայն ոտով կամ գրաստով։ Ուղեկցիս հետ, լայն ու քարքարոտ ճանապարհով, իջանք ձորը։ Կամուրջին չհասած, ճանապարհի աջ կողմում, ժայռերի և քարակույտերի մեջ, նկատվում են բազմաթիվ գերեզմաններ։ Տապանաքարերը մեծավ մասամբ տափակ են. շատ քչերի վրա, քարամամուռի շերտի տակ, նկատվում են տապանագրեր, առանց թվագրությունների։ Ըստ երևույթին գերեզմանները շատ հին չեն, մոտավորապես ԺԷ—ԺԸ դարերի։ Հավանական է, որ այդ

Անցնում ենք փայտե կամուրջը։ Դիմացը՝ աջ ափին, ցցված է մի մեծ բազալտե ժայռ, որի երեք կողմից բխում են բազմաթիվ մեծ ու փոքր սառնորակ աղբյուրներ։ Դեպի հուշարձանը տանող ճանապարհը ժայռը շըր-

ռանցնելով ձախ կողմից, թեքվում է դեպի արևելք և գետափին զուգահեռ, սարի փեշերով անցնելուց հետո, կտրում է վանքի կողքից իջնող ձորի հեղեղատը և վերջինիս ձախ ափով, բազմաթիվ ճյուղավորությունների բաժանվող կածանով բարձրանում վերև։ Հեղեղատից սկսվում է ճանապարհի ամենադժվար և այցելուի համար տաժանելի մասը, մոտ մեկ կիլոմետր տարածությամբ։ Ժայռերն անցնելուց հետո բազմաթիվ շավիղները միանալով կազմում են մի լայն ու քարքարոտ ուղի, որն անցնում է վերևից դահավէժ դեպի գետն իջնող լեռնաբազկի սեռի վրայով։ Հասնելով վերևում սարալանջը ծածկող անտառի փեշերին, ճանապարհը թեքվում է դեպի ձախ և աստիճանաբար կորցնում է իր թեքությունը։ Սկզբում անտառի ծառերը խղճուկ են ու ցանցառ։ Գնալով անտառը խտանում է, ծառերի տակ և բացատներում գետինը ծածկվում է թարմ կանաչով և ծաղիկներով։ Քիչ անց ճանապարհը, այժմ իբրև մի լայն կածան, հանգիստ և անզգալի թեքությամբ բարձրանում է վեր, վանքի խոր ձորի ձախ ափով։ Ճանապարհի այս մասը, մոտ մեկուկես կիլոմետր երկարությամբ, հիանալի է։ Ծառերի զով ստվերները և հավասարած թարմ կանաչն այնքան գրավիչ են, որ մարդ մեծ ցանկություն է զգում այդ տեղից չհեռանալու, և ակամա դանդաղեցնում է քայլերը։ Հանկարծ անտառային ծառերի շղթան կտրվում է, ահա և Սուրբ վանքը։

§ 3

Հուշարձանը գտնվում է մոտ 70—80 մետր տրամագիծ ունեցող մի թեք բլրակի ամենաբարձր կետում, հարավ-արևմտյան անկյունում, որը կարծես կախված է ցածում ընկած խոր ձորի վրա։ Բացատը ծառերից և կանաչից զուրկ մի հողամաս է, չորս կողմից առնված անտառի կանաչ շրջանակի մեջ։ Դրա արևմտյան մասը բարձր է, իսկ արևելյան մասը մի ցածր գոգավորություն է կազմում, որը, ինչպես երևում է ճաքճքված տիղմաշերտից, անձրևների և ձյան հալոցքի ժամանակ վերածվում է մի լճակի։

Վանքի արևմտյան կողմում ընկած ձորակը, դուրս գալով բացատի սահմաններից, կրկին խրվում է անտառապատ լեռան կողերի մեջ և խորանում դեպի հյուսիս։ Հուշարձանից մոտ 150 մետր հեռու, ձորի աջափնյա ժայռերի տակից մի սառնորակ փոքր աղբյուր է բխում։ Հուշարձանի տեղանքի նկարագրությունը վերջացնելու համար, մնում է ավելացնել, որ այդ տեղից, իբր մի բարձր դիտանոցից, անտառապատ սարալանջերի անկյունավոր կտրվածքի միջից, հիանալի տեսարան է բացվում, դիմացը Հրազդանի ձախափնյա ընդարձակ սարահարթն է ընկած, աջ ծայրին մշուշապատ Շամիրամի սարը, իսկ ցածում, Հրազդանի ձորափին, պարզ երևում է Առյակ գյուղը, իր հեռուները տարածվող կոլտնտեսային ոսկեգույն արտերի կիսաշրջանի կենտրոնում։ Չի կարելի ժխտել, որ հուշարձանի տեղն ընտրողը իրոք ճաշակի տեր մարդ է եղել։

§ 4

Պետք է խոստովանել, որ առաջին իսկ հայացքից հուշարձանի տեսքը հիասթափություն պատճառեց։ Մինչ սպասում էինք տեսնելու մեր հնագույն վանքերից մեկը, որը, ինչպես այս հոդվածի սկզբում ասված է, հիշատակվում է է դարի սկզբին վերաբերող պատմական անցքերի կապակցությամբ, տեսնելու այն տաճարը, որի մեջ աղոթել և արցունք է թափել հալածական մեր հայրենասերը՝ Հովհան Մայրավանեցին, մտածելով իր Ազգի և Եկեղեցու ճակատագրի մասին, մեր աչքի առաջ էր մի հուշարձան, որը, արտաքինից իսկ դատելով, 6—7 հարյուրամյակ հետո էր կառուցվել։ Պարզ էր, որ մեր տեսածը Հովհանի եկեղեցին չէր, այլ հետագայում նրա տեղում շինվածը։ Մնում էր մխիթարվել, որ ներկայիս հուշարձանը, չնայած իր մեծապես փոխված արտաքին տեսքին, մի զգալի կոթող է, պարզ՝ արտաքինով և գեղեցիկ՝ իր կատարողական արվեստով։

Դատելով մեր տեսածից, դժվար է ասել, թե արդյոք հնում այստեղ մի վանք է եղել, մեր ներկայիս հասկացողությամբ. այժմ սոսկ մի եկեղեցի է, առանց կրոնական տիպի որևէ այլ կառուցվածքների։

§ 5

Այժմ անցնենք հուշարձանի նկարագրությանը։

Եկեղեցու շենքը դրսից քառակուսի է, երկարությունը, 8,40, իսկ լայնությունը՝ 7,13 մետր։ Պատերի հաստությունն է 0,80 մետր։ Արևելյան պատի մեջ (դրսից) աբսիդը և խորանները իրարից բաժանող միջնորմների գծով, կան երկու անկյունաձև նիշեր[3], որոնց գագաթները զարդարված են

3 Հ. Վ. Ալիշանի «Այրարատ»-ում (Վենետիկ, 1890 թ., էջ 270) բերված այս հուշարձանի հատակագծում, հյուսիսային և հարավային պատերի մեջ ցույց են տրված երկուական նիշեր ևս, որը ճիշտ չէ։

կիսակոնաձև փորվածքների պսակով։ Արտաքին զարդարանքները (զարդաքանդակ) շատ սակավ են և պարզ։ Դրանք են՝ մուտքի շրջանակը, կողքերից փոքրիկ կիսասյուներ և դրանց գագաթները միացնող ու ճակատաքարը վերևից գոտկող կիսագլան։ Արևելյան պատի վրա, ցածի խորանների կարճ ու նեղ լուսամուտների գլխին պսակներ, վերին խորանների կլոր ու փոքր լուսանցքների շուրջը՝ երկշարք կիսագլանաձև

Կիսասյուներն առնված են կիսագլանների (ճակատի անկյուններում) և անկյունաձև կտրվածքների շրջանակների մեջ։ Արևմտյան պատից մինչև ելուստ տարածությունը 1,32 մետր է, իսկ ելուստից մինչև խորանի ճակատը՝ 2,47 մետր։ Գմբեթը դրված է ելուստների և աբսիդի ծայրերի անկյունների վրա։ Աբսիդը խորը չէ։ Բեմը ցածր է և խորանների ճակատի գծից դուրս դրված։ Բեմի երկու կողմից, դուրս ընկած մասում,



ՄԱՑՐԱՎԱՆՔ.— Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՔԻՑ։

շրջանակներ, որոնցից հարավայինը խաչաձև է, իսկ հյուսիսայինը՝ ութանկյուն։ Գմբեթի թմբուկը միջակ բարձրության է և գլանաձև։ Միակ մուտքը արևմուտքից է, 1,88×1,12 մետր կտրվածքով։

Ներսից եկեղեցին խաչաձև է։ Հյուսիսային և հարավային պատերին կից տեղավորված են 1,5 մետրանոց ելուստներ, որոնց հաստությունը 0,77 մետր է։ Ելուստների ճակատներին դրված են մեկական հաստ կիսասյուներ, գլանաձև խոյակներով։

բարձրանում են երեքական նեղ աստիճաններ։ Աբսիդի երկու կողմից կան երկհարկ խորաններ։ Ցածի խորանների մուտքը 0,80 մետր լայնություն ունի։ Վերին խորանների մուտքերը աբսիդի եզրերին, բեմի հատակից բարձր և նեղ են։ Ներսից պատերը սրբատաշ են, հատակը՝ սալապատ։ Լուսամուտները նեղ են ու կարճ, բացառությամբ աբսիդի արևելյան պատի մեջ, սեղանի վրա բացվածի, որը համեմատաբար ավելի լայն է ու երկար։ Չհաշված խորանների լու-

[illegible] եկեղեցին լույս է ստացել թվով ութ լուսամուտներից, որոնցից չորսը պատերի վերին մասում, չորսն էլ գմբեթի թմբի՝ գլխավոր ճակատներին։ Պարզ է, որ եկեղեցին ներսից շատ աղոտ լուսավորություն է ունեցել։ Հուշարձանը շինված է մոխրագույն բազալտ քարից։

Մայրավանքում, բացի եկեղեցուց, իբրև կրոնական տիպի հուշարձաններ, կան չորս հատ փոքր և միջակ չափերի պարզ խաչքարեր։ Դրանցից մեկը եկեղեցու ներսում, սեղանի սալաքարի տակ, իբրև վեմքար է ծառայում։ Մնացած երեքը դրսում են. մեկական եկեղեցու հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան անկյունների մոտ, իսկ երրորդը, որն ամենամեծն է, տեղավորված է տափարակի հարավ-արևելյան անկյունում, որտեղ անտառով Սոլակ տանող ճամփան է սկսվում։

Ավելի հարուստ է եղել վանքը քաղաքացիական տիպի շենքերով, որոնց փլատակները երեք կողմից շրջանցում են եկեղեցին՝ հարավից, արևմուտքից և հյուսիսից։ Հատկապես ընդարձակ տեղ են գրավում հյուսիսային կողմի ավերակները, որոնց մեջ տեղտեղ երևում են սրահների և սենյակների հիմնապատերը։ Այդ շենքերի ավերակներն ապացույց են, որ վանքը մի ժամանակ բազմանդամ միաբանություն է ունեցել, նաև խոշոր տնտեսություն։

## § 6

Ներկա դրությամբ այս հուշարձանը ցավալի վիճակի մեջ է։ Քանդված է,— գմբեթի վեղարն ամբողջովին։ Թափված կամ հանված են երեսպատ քարերը,— գմբեթի թմբուկի վերին շարքերը՝ մեծավ մասամբ, տանիքինը՝ ամբողջովին, պատերի վերին շարքերը և հատկապես անկյունների քարերը։ Հուշարձանի պատերի տակ թափված քարերից միայն մի քանի հատ են մնացել։

Այն փաստը, որ հուշարձանի վրա որևէ ճեղքվածք չի նկատվում, ապացույց է, որ վերոհիշյալ վթարումների պատճառը երկրաշարժները չեն եղել։ Ինչպես երևում է, քարերը վաղուց են քանդվել, որովհետև թարմ հետքեր չկան։ Միաժամանակ պետք է նշել, որ հուշարձանը հարգի է շրջակա գյուղերի հավատացյալների կողմից, դա ուխտատեղի է։ Դրան ապացույց են, ներսում՝ սեղանի վրա իրար վրա թափված բազմաթիվ ասեղնագործ նվերները և դրսում՝ եկեղեցու շրջապատում շինված մատաղի օջախները։

## § 7

Հուշարձանի, ավելի ճիշտ՝ վանքի անունը, ինչպես տեսանք Սեբեոսի պատմությունից, դեռ Է դարից հայտնի է եղել իբրև Մայրովանք, որը հետագայում դարձել է Մայրավանք, ինչպես երևում է վանքի ներսում եղած ՈՀԳ (1224) թվագիր արձանագրությունից, առաջացել է դրա տեղի անունից։ Ըստ հիշյալ արձանագրության, այդ տեղը կոչվել է «Տափակ մայրոյ»։ Այստեղ «տափակ» բառը պետք է հասկանալ «տափ» կամ «տափարակ» իմաստով, որով կստացվի «մայրի ծառի (անտառային մի բարձր ծառ) տափարակ»։ Այնուհետև, ըստ Սեբեոսի վերոհիշյալ վկայության, Եզր կաթողիկոսը Հովհանին անպատվելու միտումով, վանքի անունը կոչել է «Մայրագոմ», իսկ Հովհան վարդապետին՝ «Մայրագոմեցի»[4]։

Մայրավանքի ներկայիս հուշարձանը՝ եկեղեցին՝ ինչպես երևում է ստորև բերվող արձանագրությունից, Ս. Աստվածածնի անունն է կրում, և այդպես էլ ընդունված է ժողովրդի կողմից։

## § 8

Մայրավանքի հիմնարկման ճիշտ ժամանակի մասին որոշակի որևէ բան ասել դժվար է, որովհետև ոչ մատենագրական տեղեկություններ կան դրա մասին և ոչ էլ նախնական շենքից որևէ հետք է մնացել, որի ոճից կարելի լիներ եզրակացություններ անել։ Սակայն Սեբեոս պատմագրի նկարագրած պատմական իրադարձությունները, որոնց կապակցությամբ հիշատակվում է Մայրավանքի անունը, հիմք ընդունելով, կարելի է մոտավոր ենթադրություն անել։ Ըստ Լեոյի[5], Եզրի և Հերակլի հանդիպումը եղել է հունվարին, 633—634 թվականին, որից հետո Եզրը վերադարձել է Հայաստան, ընդհարվել Հովհանի հետ և վերջինս գնացել է Մայրավանք։ Ուրեմն այդ ժամանակ Մայրավանքն արդեն գոյություն ուներ և ըստ երևույթին նոր շինված վանք չէր։ Այսպիսով Մայրավանքի շինության ժամանակն ընկնում է Զ դարի վերջերին, կամ ամենաուշը՝ Է դարի սկզբին։

Ինչ վերաբերում է ներկայումս գոյություն ունեցող շենքի շինարարությանը, դրա ժամանակը, դատելով հուշարձանի ոճից՝ ԺԳ դարի է։ Մոտավոր ճշտությամբ, մեր կարծիքով, այդ շենքի կառուցումն սկսվել է 1223—1224 թվականներին։ Մեր այս ենթա-

[4] Հանգուցյալ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը իր «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության մեջ (I հատ., էջ 381), գրում. «Մայրագոմեցի անունն (Հովհանի) ավելի հին է», առանց իր այդ հայտարարությունը հիմնավորելու։

[5] Լեո, «Հայոց պատմություն», Երևան, 1947 թ., II հատ, էջ 310։

*գրությունը հիմնվում է եկեղեցու ներսում, արևմտյան պատի հյուսիսային կեսի մեջտեղում տեղավորված մի մեծ քարի վրա փորագրված արձանագրության վրա։ Բերենք այդ արձանագրությունից կարևոր քաղվածքը. «Ես Յովհաննես, ծառա Քրիստոսի էտու զիմ հոգոյ արդիւնքն, զոր ստացեալ էի յարդար վաստակոց, ի սուրբ Աստուածածինս ի Տափակ Մայրոյ... Ա մատուռս Յովհանիսի է։ Ի թ. ՈՀԳ»։*

*Այստեղ ուշագրավ է երեք հանգամանք. Նախ՝ արձանագրության մեջ շեշտված է «մատուռս», ուրեմն Հովհաննեսը նկատի է ունեցել որոշ «մատուռ» կամ խորան։ Երկրորդ՝ քարի մոտ որևէ խորան չկա, այլ դա (քարը) տեղավորված է խորաններից ամենահեռավոր՝ արևմտյան պատի մեջ։ Երրորդ՝ արձանագիր քարը, հուշարձանի պատերի մեջ դրված քարերի համեմատությամբ, արտասովոր մեծություն ունի, նրա երկարությունը 1,52 մետր է։ Բնականաբար առաջանում են հետևյալ հարցերը.— Ո՞ր խորանի մասին է խոսքը, ինչո՞ւ այդ արձանագրությունը նկատի առնված խորանի մոտ չէ, և ի՞նչպես է պատահել, որ այդ արձանագիր քարը տեղավորվել է խորանից հեռու մի տեղում։ Այդ հարցերից առաջինը թեև մեզ հետաքրքրող խնդիրների լուծման համար այնքան էլ կարևորություն չունի, սակայն կաշխատենք պատասխանել դրան։ Մեր կարծիքով նվիրատու Հովհաննեսը նկատի է ունեցել աջ դասի (հյուսիսային կողմի) ցածի խորանը, որովհետև այդ դասի խորանները նախապատվություն ունեն, ինչպես այդ նկատված է նաև այլ հուշարձաններում, իսկ դրանցից հատկապես ցածի խորանը, որի մուտքը բացվում է անմիջապես եկեղեցու մեջ։ Այդ կարծիքը հաստատվում է վերը հիշված այն հանգամանքով, որ արձանագիր քարը եկեղեցու հյուսիսային կիսում է տեղավորված, դրան ավելացրած նաև այն փաստը, որ հիշյալ խորանն արձանագրություն չունի, մինչդեռ վերևինը վերապահված է ոմն Աստվածատուրի, որի արձանագրությունը (№ 2) փորագրված է վերին խորանի մուտքին կից՝ պատի վրա։*

*Վերը բերված հարցերից երկրորդը և երրորդը ավելի կարևոր են, որովհետև շոշափում են հուշարձանի շինարարության ժամանակի խնդիրը։ Նկատի ունենալով արձանագիր քարի արտակարգ մեծությունը և տեղադրությունը, գալիս ենք այն եզրակացության, որ այդ քարը նվիրատու Հովհաննեսը հատկապես ընտրել է իր արձանագրությունը վրան փորագրելու համար, դեռ պատի մեջ չշարված վիճակում, տաշել և արձանագրությունը փորագրել է տվել, որպեսզի այդ պատրաստ վիճակում տեղավորվի ցածի խորանին կից հյուսիսային պատի մեջ, որի երկարությունը՝ 2,47 մետրը՝ հարմար էր այդպիսի մի մեծ քարի համար։ Սակայն, ըստ երևույթին, մինչև այդ քարի պատրաստվելը շենքի շարվածքը բարձրացել է ցածի խորանի սահմանից, ուստի և ստիպված են եղել այդ քարը տեղավորել արևմտյան պատի հյուսիսային մասում։ Խորանին կից հյուսիսային պատամասի մեջ. ցածի խորանի բարձրության գծից վերև չեն տեղավորել, որովհետև այդ դեպքում արձանագրությունը կարող էր համարվել վերին խորանին վերաբերող։*

*Արձանագրված քարը շինարարության ընթացքում դրված կարծիքին ի հաստատություն պետք է ավելացնել և այն, որ հակառակ դեպքում (այսինքն արձանագրությունը շինարարության վերջանալուց հետո փորագրելու դեպքում) այդ կարվեր խորանի, կամ դրան կից հյուսիսային պատի վրա։*

*Ելնելով այս եզրակացությունից, արձանագրության թվագիրը (ՈՀԳ=1224 թ.) մենք ընդունում ենք հիշյալ քարի տեղադրության ժամանակը ցույց տվող, հետևապես հուշարձանի շինարարության սկզբի կամ երկրորդ տարին։ Իհարկե, սա մի կարծիք է իր ամբողջ հիմնավորությամբ, որն արվում է վերապահությամբ։*

*Ինչ վերաբերում է շինարարությունն ավարտելու ժամանակին, այդ առթիվ չենք երկարացնում, ենթադրությունների թիվը չավելացնելու համար։*

## § 9

*Հաջորդ հարցը շինողների ով լինելուն է վերաբերում։ Քանի որ այդ մասին այլ տվյալներ չկան, մնում է եզրակացնել, որ հուշարձանը շինված է վանքի միջոցներով և հավատացյալների նվերներով, որոնց թվում մենք գտնում ենք վերոհիշյալ Հովհաննեսին և վերին խորանն ստացող Աստվածատուրին։ Պետք է ասել, դատելով դրանց արձանագրությունների բովանդակությունից, որ երկուսն էլ կապ ունեն, մասնավորապես Հովհաննեսը, հուշարձանի շինարարության հետ և բավական խոշոր միջոցներ են տրամադրել վանքին, եթե ոչ մեկական խորան («մատուռ») և երկու պատարագ (տարեկան) չէին ստանա։ Դրանցից Հովհաննեսի մասին, դատելով «ծառա Քրիստոսի» խոսքից, կարելի է ասել, որ եղել է կրոնավոր, թերևս վանքի միաբաններից մեկը։*

## ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### § 10

*Մայրավանքը շատ աղքատ է վիմագրությամբ։ Եղածն ընդամենը երեք արձանագրություններ են, որոնցից երկուսը եկեղեցու ներսում և մեկն էլ դրսից՝ արևմտյան պատի վրա։ Դրանցից առաջին երկուսը իրենց աշխատություններում բերել են Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանը[6] և Հ. Ղ. Ալիշանը[7], տեղ-տեղ որոշ տարբերություններով, իսկ բնագրի համեմատությամբ՝ մի քանի շեղումներով։*

*Բերենք այդ արձանագրությունները մեր վերծանումով.*

№ 1) ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍԻ ՄԵՋՏԵՂՈՒՄ, ՄԻ ԽԱՉԱՐ ՔԱՐԻ ՎՐԱ։ ԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ (ՏՈՒՆԸ) ՆԵՐԿՎԱԾ Է ՍՊԻՏԱԿ ԳՈՒՅՆՈՎ.

1. Ես Յովհանէս ծառա Քի Լտու զիմ հոգոյ արդիւնին զ-
2. որ ստա[ցեա]լ էի յարդար վաստակոց ի Սբ Աձածինս ի Տափակ
3. մայր[ս] սպասաւոր սբ եկեղեցոյս խոստացան ի տարոջն
4. Բ [պատարագ]։ Ա։ Աձածնին տաւնին եւ։ Ա։ Սբ Սարգսին որ խա-
5. փանէ դատի յԱյ եւ իմ մեղացն պարտական է։ Ա։ մատու-
6. ռս Յովհաննիսի է ի Թ. ՈՀԴ

*Ծանոթ. 1) Անկյունավոր փակագծերի մեջ առնված տեղերում գրերը հողմահարված կամ փչացած են, վերցված են նաև 5-րդ շարքի «դատի յԱյ» բառերի գրերը։*

*2) 3-րդ շարքի սկզբում «մայրս» բառի վերջավորությունը վերցված է ... Ալիշանի վերծանության մեջ, առանց փակագծերի մեջ առնելու, ... այդ վերծանման ժամանակ ... վերջավորությունը եղծված չի եղել։*

*3) 4-րդ շարքի սկզբում եղծված բառը վերծանել ենք «պատարագ», նկատի ունենալով առաջ բերվող 2-րդ արձանագրության 11-րդ շարքում, համանման տեղում այդ բառի գործածությունը։ Շահխաթունյանը և Ալիշանը փակագծերի մեջ դրել են «այր ժամս»։*

№ 2) ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՎԻՄԻՆ, ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԿՈՂՔԻՆ, ՁԱԽԻՑ՝ ՆԵՂ ՇԵՐՏՈՎ.

1. Կամաւ ամենա-
2. կալին Այ ես Աձ-
3. առուր ի հայալ
4. արդեանց ստ-
5. ացա զմին [մ]
6. առուանն եկեղ-
7. եցոյս եւ առաջ-
8. նորդ ուխտիս Ն-
9. եւէս եւ միաբան-
10. քս հաստատեցին
11. ի տարին Բ պատար-
12. ագ զտաւն Սբ Յակ-
13. որան որ շառնէ
14. դատի յԱյ

№ 3) ԴՐՍԻՑ, ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍՅՈՒՆԻ

1. Փա. Աձ որդոմի Կոչ-
2. ս վարդապետին Գ-
3. նտրսին ամէն
4. և իւր [ծ]նողացն ամէն

*Վերջացնելով մեր այցը, արդի Թախտով հեռանում ենք այն վայրից, որտեղ հայրենիքից բաժանվելուց առաջ, հայրենասեր Հովհան վարդապետ Մայրավանեցին անց էր կացրել իր վերջին օրերը։*

6 Հովհաննես եպիսկ. Շահխաթունյան, *«Ստորագրութիւն Էջմիածնի», հատ. Բ, Էջմիածին, 1842 թ., էջ 188—189։*

7 Հ. Ղ. Ալիշան, *«Այրարատ», Վենետիկ, 1890 թ., էջ 270։*

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ԳԼԱՁՈՐԻ ԴՊՐՈՑԻ ՄԵԾ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻՆ*

*Այժմ քննենք այն մի շարք մանրանկարները, որոնք պատմում են Հիսուս Քրիստոսի տնօրինությունների մասին։*

«Ավետումն» (նկար 13).— *Այս փոքր մանրանկարի վրա Կույս Մարիամը տրված է Երուսաղեմի Տաճարի առաջ կանգնած վիճակում։ Նրա դեմքի արտահայտությունը՝ լայն բացված աչքերի հետ, ինչպես և աջ ձեռքի դրությունը՝ ափով ուղղված դեպի դիտողը, արտահայտում են զարմանք և համակերպում Գաբրիել հրեշտակի պատգամին, որը մոտեցել է Նրան ձախ կողմից։ Կոմպոզիցիայի կենտրոնում տեղավորված է աղբյուրը՝ առջևում մի մեծ սկահակ, որտեղ ջուր է լցվում, իսկ վերևում, աղբյուրի վրա, դրված է մի սափոր։ Առաջին հայացքից քննվող մանրանկարը նման է թվում նկարիչ Մոմիկի 1302 թվականի Ավետարանի «Ավետման» տեսարանին։ Սակայն ավելի ուշադիր զննման դեպքում, կոմպոզիցիաների ընդհանրության տակ բացահայտվում են նրանց տարբերությունները։* «Ջրի մոտ Կույսին օրհնող հրեշտակ»*-ի պատկերագրությունից բացի, որը պահպանել էր նկարիչ Մոմիկը, քննվող մանրանկարի մեջ ենք տեսնում մի այլ պատկերագրություն՝ «Կույսի օրհնությունը հրեշտակի կողմից տանը», այսինքն՝ Թորոս Տարոնացին տվել է երկու սխեմաների խաչաձևումը։ Նման բարդ պատկերագրություններ Թորոսը պահպանել է իր այլ ձեռագրերում։*

*Եթե Մոմիկը պատկերել է աղբյուրը ջրի գնացած Մարիամին որպես Երուսաղեմի Տաճարի Կույսի, ապա Թորոս Տարոնացին, հիմքում առնելով այդ կոմպոզիցիան, լրացրել է այն այլ տարրերով, որոնք վերաբերում են երկրորդ սխեմային։ Այդ մասին վկայում է ինչպես Կույս Մարիամի հետևից լրևացող փափուկ բարձերով աթոռը, այնպես և իլիկը, որ բռնել է Նա ձախ ձեռքում։*

*Վերը քննված մանրանկարը, չնայած իր փոքր չափերին (էջի 1/6 մասը), կառուցված է գույների հակադրությամբ (կապույտ, կանաչ, շուշանագույն, վառ-կարմիր) և նրանց բաց երանգների բծերի խաղերով ինչպես և ոսկով, և թողնում է հաճելի, նույնիսկ շատ հարուստ տպավորություն։*

«Քրիստոսի Ծնունդը» (նկար 14).— *Եթե այս մանրանկարի կոմպոզիցիան համեմատենք 1307 թվականի «Եսայի Նչեցու Ավետարան»-ի[26] նույնանման մանրանկարի հետ, չնայած նրանց պատկերագրության ընդհանրություններին[27], այստեղ ես կարելի է նկատել մի շարք փոփոխություններ, որ նկարիչը ներմուծել է ավելի ուշ շրջանի աշխատանքում։ Երկու մանրանկարների մեջ էլ գոր-*

* *Նարունակված «Էջմիածին» ամսագրի 1957 թվակաnի ՆՆ Է—Ը-ից և Թ-ից։*

[26] *Տե՛ս Սիրարփի Տեր-Ներսեսյան, «Վենետիկի Մխիթարյան հայրերի մատենադարանի ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերը» (այրում), Փարիզ, 1937*, Pl. XLVI. 103։

[27] *«Քրիստոսի Ծնունդը» և այլ մանրանկարների պատկերագրության մասին հանգամանորեն տե՛ս Սիրարփի Տեր-Ներսեսյանի հիշված աշխատության մեջ (բնագիր), Փարիզ, 1936 թ.։*



Նկար 13

ծող անձերն են հովիվները, մոգերը, կանայք, որոնք պատրաստվում են նորածին Հիսուսին լողացնելու համար և այլն։ Եթե այնտեղ հովիվները տրված են ձախից, մոգերը՝ աջից, իսկ Աստվածամայրը՝ մսուրի մեջ դրված Մանուկ Հիսուսի մոտ, խումբը իրենց դիրքով՝ դեմքով դարձած են վերջիններիս կողմը, ապա քննարկվող Աստվածածնի մանրանկարում տեսնում ենք հակառակ պատկեր։

Եթե 1307 թվականի Ավետարանի մանրանկարում մարդկային ֆիգուրաները երևում են չոպիտ, մեծ գլուխներով, ապա քննվող մանրանկարում նրանք տրված են առանց աչքի ծակող աղավաղումների, իսկ նրանցից մի քանիսը (Աստվածամայրը, Հովսեփը, երրորդը — ամենափոքր տարիքով մոգը և այլն), գրեթե անթերի են նկարի մեջ և բնական՝ իրենց դիրքով։ Այդ դիտողությունը վերաբերում է և 1323 թվականի Ավետարանի մանրանկարներին։ Սակայն «Սսայի Նշեցու Ավետարան»-ի մանրանկարը լուծված է գեղանկարչական ոճով։ Մանրանկարի գեղանկարչությունը ուժեղանում է որոշ դետալներով, որոնք վերցված են իրական կյանքից. [illegible] իրականությունից (օրինակ՝ հովվի ֆիգուրան, որը ուրախություն է արտահայտում, և երկրպագելու եկած մոգերի իրական ձիերը)։

**Քրիստոսի մկրտությունը (Նկար 15).—** Այս մանրանկարի կոմպոզիցիան փոքր ինչ տարբերվում է «Սսայի Նշեցու Ավետարան»-ի նույնանման մանրանկարից։ Անձեռոց բռնած երկու հրեշտակ-վկաներին ավելացված է երրորդը՝ վեր պարզած ձեռքերով (դա, երևի, արված է մանրանկարի աջ մասի հավասարակշռության համար՝ ձախի հետ, որտեղ դրված է Հովհաննես Մկրտիչը)։ Վերջինս պատկերված է ոչ որպես ուժեղ տղամարդ, միջին տարիքի, հրամայող ժեստով, ինչպես նա նկարված է նախկին մանրանկարում, այլ նա այստեղ հանդես է բերված որպես զառամյալ ծերունի։ Հովհաննես Մկրտիչը պատկերված է օրհնող ձեռքերով, լուծված և կորացած կերպարանքով, որը մատնում է դողացող մարմնի տկարությունը։ Սրա հետ միասին նշենք, որ նկարիչը «Սսայի Նշեցու Ավետարան»-ի մանրանկարի վրա աշխատելիս չի պահպանել Ավետարանի տեքստը. նա Հովհաննես Մկրտչին հագցրել է թիկնոց, մինչդեռ, 1318 թվականի պատկերման մեջ, նա ձգտում էր տալ Հովհաննես Մկրտչին արդեն Ավետարանի նկարագրության համաձայն. «...ունէր հանդերձ ի ստեոյ ուղտու»։ Այստեղ հետաքրքրական է նույնպես տապարի (սակրի) պատկերումը՝ կախված Հովհաննես Մկրտչի ֆիգուրայի հետևի ծառից, որը հավանաբար սիմվոլիկ նշանակություն ունի։ Թորոս Տարոնացին տապարի նկարով, հավանաբար,



Նկար 14

ցանկանում է ակնարկել այն մասին, որ Հերովդեսի ծննդյան տոնակատարության ժամանակ Հերովդիադայի աղջկա՝ Սալոմեի ցանկությամբ կգլխատեն Հովհաննես Մկրտչին (Մատթ., ԺԴ 6—11, Մարկ., Զ 17)։

«Քրիստոսի մկրտությունը» մանրանկարում համեմատաբար լավ են պատկերված Հորդանանի այլաբանությունը, որտեղ ժայռերի տեղադրությունը ֆիգուրաներին հաղորդում է որոշ հեռանկարային մտապատրանք, պլանայնություն։ Մանրանկարիչ Թորոս Տարոնացին իր այս նկարով մոտենում է հելլենիստական բնույթի բյուզանդական արպերին[28]։ Դրա համար էլ, ինչպես կարծում ենք, պատահական չէ, որ շրջանակի վերին եզրին «Մկրտութիւն Տն» հայկական տեքստի կողքին պահպանված է նաև նրա հունարեն թարգմանությունը։

«Ղազարոսի հարությունը» (նկար 16).— Այս մանրանկարի պատկերագրությունը, կապված հին-արևելյան, սիրիական սխեմայի հետ, ծագում է Զ դարում և զարգանում ԺԲ—ԺԳ դարերում։ Հատկապես այն նմանվում է Ռոսանի ձեռագրին[29]։



Նկար 15



Նկար 16

Ղազարոսի գերեզմանին մոտեցող Քրիստոսի ֆիգուրան (դերեզմանի նախարիչը հանված է մեռնողի ծառաներից մեկի կողմից) հանդիսանում է մանրանկարի կիզակետը։ Հիսուսին հետևում են աշակերտները՝ առաքյալները, նրանցից միայն մեկը՝ Հուդան, պատկերված պրոֆիլով, դնում է Քրիստոսի առջևից։

Կոմպոզիցիան կառուցված է շարժման հիման վրա, որտեղ ընդգծված է կուլմինացիոն կետը՝ Քրիստոսի ժամանումը։ Քրիստոսի դեմքի արտահայտությունը՝ գլխի ոչ շատ խոնարհված դիրքը և բարձրացրած աջ ձեռքի շարժումը օրհնող մատներով, կարծես թե խոսում են այն մասին, որ նա պատրաստվում է հրաշագործության՝ մեռյալին հարություն տալու։ Դրա հետ միասին առաքյալների դեմքի վրա արտահայտված է կասկածանքի հետ նաև սպասում, իսկ Ղազարոսի հարազատների ու ծառայի դեմքերին՝ տառապանք ու տխրություն։ Այդ վերջին զգացմունքը բացահայտորեն երևում է Հիսուսի ոտքերն ընկած Ղազարոսի երկու քույրերի դեմքերին։ «Նսայի Նչեցու Ավետարան»-ի «Ղազարոսի հարությունը» մանրանկարում շարժումը դրևթե բացակայում է. բոլոր ֆի-

[28] Տե՛ս Սիրարփի Տեր-Ներսեսյանի հիշված աշխատությունը (բնագիր), էջ 124։
[29] Նույն տեղում, էջ 125։



Նկար 17

գուրանները անշարժ են, և նրանք կարծես թե ներկայացված են քիչ թե շատ անորոշ ու անչափելի շրջապատում, առանց զգալնել տալու խորությունը։

Ինչպես լինվող, այնպես և ուրիշ մանրանկարներում ֆիգուրաները իրենց նկարներով անթերի չեն։ Նկարչի մոտ քիչ չեն նույնիսկ կոպիտ աղավաղումները. Այսպես, օրինակ, Քրիստոսի աջ ձեռքը այնքան մեծ է, որ եթե դաշ թողնի, անկասկած կհասնի ծնկների կեսից ներքև։ Սակայն այդ անատոմիական մեծ անճշտությունը անմիջապես չէ, որ աչքի է ընկնում, այլ նկատելով այն՝ ենթադրում ես, թե կարող է պատահել, այնինչ նա հողնված է գիտակցաբար, ավելի ընդգծելու համար Քրիստոսի հրաշագործող ձեռքի շարժումը։ Այս կարգի շեղումներ մենք նկատում ենք նաև Մոմիկի մոտ («Ոտնալվա»-ն)։

Նկարչի յուրահատուկ գունային դամմայում համեմատաբար գերակշռող տեղ է հատկացված շագանակագույն գույնին։ Հետաքրքրական է նշել, որ այդ մանրանկարում նկատվում է այն ռեալիստական մեսար (որը կա և 1329 թվականի Ավետարանում), որը նշված է եղել Սիրարփի Տեր-Ներսեսյանի կողմից «Սայի Նշեցու Ավետարան»-ի «Ղազարոսի հարության» առթիվ[30]։ Հարազատները և ծառաների խումբը, որոնք ընդառաջ են գալիս Հիսուսին, ձեռքերը մոտեցրել են իրենց քթերին, որպեսզի պաշտպանվեն Ղազարոսի նեխած դիակի հոտից։ Այս առնչությամբ այդ մանրանկարները կապված են մի արևելյան մոնումենտալ հուշարձանների խմբին[31]։

«Ոտնալվա» (նկար 17).— Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Վենետիկի Մխիթարյան հայրերի մատենադարանի ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի նկարազարդ հայերեն ձեռագրերը» աշխատության մեջ բերվում է պրոֆ. Միյեի կողմից «Ոտնալվա» մանրանկարի երեք տիպի նկարագրություն՝ հելլենիստական, կապադովկյան և բյուզանդական, որոնք հիմնված են գլխավորապես Քրիստոսի ձեռքի ժեստի առանձնահատկությունների վրա[32]։

Մեր մանրանկարը ավելի շատ համապատասխանում է երկրորդ՝ արևելյան տիպին, որտեղ ուժեղ կերպով արտահայտված է ռեալիստական գործունեությունը. Հիսուսն արդեն անցել է ոտնալվային, իսկ Պետրոսը դեռևս բողոքում է, թեև համաձայնել է իր վի-



Նկար 18

30 Սիրարփի Տեր-Ներսեսյանի հիշված աշխատությունը (բնագիր), էջ 125։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում, էջ 126։

*ճակի հետ. մյուս առաքյալները կանգնած են Նրա հետևում, խորքում։ Սակայն, այստեղ կա մի մանրամասնություն, որը բացակայում է կոպտականի մեջ։ Մեր մանրանկարչի մոտ Քրիստոսը ձախ ձեռքով բռնել է Պետրոսի մի ոտքը, աջով սրբում է սրբիչով, որի մի ծայրը գցած է Քրիստոսի ուսին։ Մանրանկարի մեջ համատեղված են երկու սխեմաներ՝ կոպտականն ու բյուզանդականը[33]։*

*Այս մանրանկարում Քրիստոսը պատկերված է անմորուք (կամ թե հազիվ նշմարվող մազերով ծածկված դեմքով), այսինքն՝ տրրված է այնպես, ինչպես մենք Նրան տեսել ենք Հին Կտակարանի տեսարաններում, իսկ մնացած դեպքերում Նա մորուքով է։ Մեր կարծիքով, Քրիստոսի երկակի կերպարը պատահական երևույթ չէ, այլ հին ավանդություններին հետևելու և նկարչի կողմից տարբեր պատկերագրական սխեմաները օգտագործելու արդյունք։*

*Մանրանկարը կոմպոզիցիոն տեսակետից այնքան էլ հաջող չէ լուծված, բայց այն հետաքրքիր է ինքնատիպությամբ, նորամուծություններով. բացի հիմնական՝ ներքևի մասից, որտեղ ցուցադրված է տոնալվայի*



Նկար 20

*գործողությունը, նկարչի կողմից տրված է նաև վերևի կեսը, որտեղ ճարտարապետական կառուցվածքները և ծառերը անդրադարձնում են արտաքին աշխարհը։ Այդ պահը ուժեղացվում է առաջին հայացքից աննշան թվացող, բայց իրոք յուրահատուկ երևույթով՝ պատուհանով։ Եվ մենք տեսնում ենք, ինչպես փակված աշխարհում, մի հանդարտ, հաճելի բնակարանին է նայում անցորդը, որի շնորհիվ մանրանկարի երկու կեսերը չեն կտրվում մեկը մյուսից, այլ կապված են իրար հետ։ Այդտեղ, կարծում ենք, պետք է տեսնել նկարչի փորձը՝ գիտակցաբար վերակառուցելու մտավոր տարածականության տպավորությունները։*

«Վերջին ընթրիքը» (Նկար 18).— *Այս փոքր մանրանկարի վրա (էջի 1/6 մասից փոքր), ձախակողմը պատկերված Քրիստոսը նստած է ձվաձև սեղանի առաջ, որի շուրջը տեղավորված են Նրա աշակերտները։ Տեսարանը պատկերում է այն պահը, երբ Հիսուս խոսում է Իրեն մատնելու մասին։ Առաքյալների դեմքին կարելի է կարդալ զարմանք, կասկածանք, երկընտրանք։ Ըստ*



Նկար 19

*33 Այդ հին արևելյան պատկերագրության մեջ Հիսուսը միայն լվանում է Պետրոսի ոտքերը, չկպչելով սրբիչին, որը կախված է Նրա վզից. գոգնոցի ձևով։ Բյուզանդականում Հիսուսն արդեն լվացել է Պետրոսի ոտքերը և սրբում է այն։*

որում միայն Քրիստոսն է հանգստությունը պահպանում, ի հակադրություն իրեն մատնող աշակերտի, որն ագահորեն ձգվում է դեպի ափսեի վրայի ուտելիքները։ Հուդայի դեմքը, տրված պրոֆիլով, նկարչի մտահղացմամբ, արտահայտում է չարագործություն, հանցագործություն։ Հիսուսի և Հուդայի կերպարների այդպիսի հակադիր զուգադրությունը հանդիսանում է այդ տեսարանի կոմպոզիցիայի հիմքը։

Մանրանկարի պատկերագրությունը բարդ է. այն կազմված է երկու սխեմաների՝ հինարևելյանի և բյուզանդականի խաչաձևման հիմքի վրա, ըստ որում հիմնականը հանդիսացել է երկրորդը։ Ընդհանրապես այն հիշեցնում է ԺԱ—ԺԲ դարերի վաղ շրջանի աշխատանքները։

«Քրիստոսի խաչելությունը» (Նկար 19).— Այս մանրանկարի պատկերագրությունը սիրիա-կապադովկիական է. Աստվածամայրը և նիզակակիր զինվորը տրված են մի կողմում, իսկ Հովհաննեսն ու սպունգ բռնած զինվորը՝ մյուս կողմում։ Մեր ծաղկողի մոտ ավելացված են նաև յուղաբեր կանայք։ Թորոս Տարոնացու հիշյալ մանրանկարի մեջ մտել է նաև գոթական սխեմայից մի մոտիվ։ Նրա մեջ Քրիստոսը խաչված է մի գամով։ Այդ մոտիվը հավանաբար գալիս էր ժամանակակից Կիլիկյան մանրանկարչությունից։ Քրիստոսին մոտ մարդկանց ձեռքերի ձևերը, որոնք արտահայտում են տխրություն, վիշտ և այլն, համապատասխանում են կապադովկիական սխեմային։ Ողբում են և հրեշտակները, որոնք, ինչպես և խաչի վերին մասը, դուրս են գալիս շրջանակից. Մանրանկարի սահմանների այդպիսի խախտում կա նաև մյուս մանրանկարներում («Ոտնլվա», «Վերջին ընթրիքը», «Համբարձում» և այլն), ինչպես և ավետարանիչների մի քանի նկարներում։ Թորոս Տարոնացու աշխատանքներում այս երևույթը ավելի է զարգացել նրա աշակերտ Ավագի մոտ[31]։ Դրանով խախտվում է մանրանկարի սահմանափակությունն ու փակվածությունը, որի հետևանքով մանրանկարն ստանում է որոշ տարածականություն։ Ծաղկողի կողմից ավելի լակոնիկ ձևով է պատկերված մեկ գամով «Խաչելության» կոմպոզիցիան 1323 թվականի Ավետարանում (էջ 276ա), որտեղ խաչված Քրիստոսի կողքերից տրված են միայն Մարիամն ու Հովհաննեսը, հիշեցնելով վարպետ Ռոմիկի նման մանրանկարը 1302 թվականի «Ստեփանոս Օրբելյանի Ավետարանում»։ Նկարիչ Թորոսի այդ վաղ շրջանի մանրանկարում հատուկ ուշադրություն է դարձված Աստվածամոր ֆիգուրային, որի մեկնած ձեռքերը դեպի խաչված Որդին ավելի ուժեղ է արտահայտում Մոր անհուն վիշտը։

Պետք է նկատել, որ «Քրիստոսի խաչելությունը», «Օսայի Նչեցու Աստվածաշնչում» չի տրված Երուսաղեմյան պատի ֆոնի վրա, քաղաքային պատի փոխարեն, մանրանկարի աջ մասում կա մի եկեղեցի՝ ներկայացված կողքից, որն իր ձևով հիշեցնում է հայկական տաճարային կառուցվածքները, իսկ ձախ մասում տրված է ժայռ։ Մենք կարծում ենք, որ ճարտարապետական կառուցվածքը տրված է ոչ պատահական կերպով։ Այդ բոլորը խոսում են նկարչի մտածվածության և վարպետության մասին, որը նույնիսկ հայտնի պատկերագրական սխեմաների օգտագործման դեպքում տալիս է մանրանկարի նոր և ստեղծագործական կոմպոզիցիոն լուծում։

«Տիրոջ համբարձումը» (Նկար 20).— Այս մանրանկարում Քրիստոս տրված է մեծ լուսապսակի մեջ և տանող չորս հրեշտակներով, որոնցից վերևի երկուսը փողհարում են եղջերափողերով։ Քրիստոսը համբարձվում է վեր, դեպի երկինքը, դեպի երկնային Երուսաղեմ, նստած վիճակում. աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախով ծնկների վրա պահում է Աստվածաշունչը։ Ներքևում, գետնի վրա, կանգնած է Աստվածամայրը, երկու կողմից շրջապատված առաքյալներով։ Նրանք պատկերված են սամավորված ժայռապատ սարի և ծառերի ֆոնի վրա։ Բոլոր դեմքերի ուշադրությունն ուղղված է վեր, բացի Մարիամից, որը տրված է օրանտի (աղոթողի) դիրքով։

«Համբարձումը» մանրանկարը կոմպոզիցիոն տեսակետից հաջող է։ Տեսարանի երկու մասերը (վերին և ներքին) դիտվում են ամբողջական. նրանք չեն կտրված մեկը մյուսից և այդ ոչ միայն նրանից է, որ երկինքը երկրի հարաբերությամբ տրված է որպես «սեպ», այլ շնորհիվ ազատ թռչող հինգերորդ հրեշտակի, որն ուժեղացնում է մանրանկարի երկու մասերի կապը։

«Համբարձումը» մանրանկարի պատկերագրությունը բխում է հին արևելյան օրինակներից և բյուզանդական սխեմայից տարբերվում է գլխավորապես Աստվածամոր մոտ հրեշտակների բացակայությամբ և վերևում ներկայացված հրեշտակներով, որոնք փողհարում են եղջերափողերով, իսկ Հուդան, որպես մատնիչ, հանված է առաքյալների խմբից։

(Շարունակելի)

---

31 Տե՛ս 1328 թվականի Ավետարան, 1337 թվականի Ավետարան, 1314—1358 թվականների «Օշին արքայի Աստվածաշունչը» (Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռ. № № 7650, 212 և 6230)։

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

# Մ Ա Կ Ա Ր   Ե Կ Մ Ա Լ Յ Ա Ն*

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԸ

*Մինչև այսօր սպառիչ վերլուծության չի ենթարկվել Մ. Եկմալյանի ստեղծագործական ամբողջ ժառանգությունը, որի մասին դեռևս իր խոսքը չի ասել հայկական երաժշտագիտությունը։*

*Հայկական եկեղեցական երաժշտության զարգացման պատմության մեջ Եկմալյանը կատարել է շնորհակալ աշխատանք, իբրև շարունակությունը այդ բնագավառում վաղուց սկսած բարենորոգչական աշխատանքների։ Դեռևս ԺԹ դարի առաջին քառորդից, բազմահմուտ Պապա Համբարձումի (Լիմոնջյան), ինչպես նաև նրա աշակերտների ջանքերով մշակվում էին հայկական նոր ձայնագրության սկզբունքները, շարականների ազգային խազագիտության մոռացումով պայմանավորված աղավաղումներն ու կորուստը կանխելու համար։ Ապա, ԺԹ դարի երկրորդ կեսին, Հայ եկեղեցու առաջ ծառացավ շարականները ձայնագրելով կանոնավորելու և կորստից փրկելու խնդիրը։ Այս ժամանակաշրջանումն էր, որ տաղանդավոր երաժշտագետ Եղիա Տնտեսյանը ղեկավարում էր Կոստանդնուպոլսի հայ երաժշտատեսաբանների գործունեությունը, եկեղեցական տաղերի եղանակների բազմաթիվ տարբերակները համեմատելու և դրանք ձեռագիր վստահելի աղբյուրների վրա սրբագրելու և ազգային հնագարյան մեղեդիների ձայնագրման գործում։ 1874 թվականին Նիկողայոս Թաշճյանը Էջմիածնում գլուխ բերեց Շարականի, Ժամագրքի և Պատարագի ձայնագրության շնորհակալ գործը, առանց սակայն հանդես բերելու Եղիա Տնտեսյանի օրինակելի և հիմնավոր պահանջկոտությունը այդ հարցում։ Պատարագի ձայնագրության մեջ, օրինակ, իրեն զգացնել էր տալիս հայկական երաժշտական ազգային առանձնահատկությունների տեսակետից խորթ, օտարամուտ տարրերի առկայությունը։ Թաշճյանի պատարագը վերանայվեց ու երկրորդ անգամ հրատարակվեց 1878-ին, սակայն այդ էլ բավական չեղավ հայոց պատարագը վերջնականապես կանոնավորված համարելու համար։*

*Կովկասահայության մեջ նախքան Եկմալյանը Պատարագը ներդաշնակելու աշխատանքներ կատարել են նաև Քրիստոփոր Կարա-Մուրզան և Ներսիսյան դպրոցի երաժշտության դասատու Գևորգ վարժապետ Չորեքչյանը (հետագայում Գևորգ Զ Կաթողիկոս Ամենայն Հայոց)։*

*Ապա Մ. Եկմալյանը հրապարակ եկավ իր տարիների աշխատանքի պսակով՝ «Երգեցողութիւնք Ս. Պատարագի» գործի հրատարակությամբ, որը ջերմ ընդունելության գտավ ժողովրդի կողմից։ Ռ. Ղորղանյանը Եկմալյանի այդ արժեքավոր աշխատության առիթով գրել է. «Հայ ժողովրդի մեծամասնության վերաբերմունքը դեպի այդ բազմաձայն եր-*

** Շարունակված ամսագրի 1958 թվականի Բ—Գ համարից։*

գեցողությունը հակասական էր, իսկ հոգեվորականությունը՝ շատ տեղեր նույնիսկ թշնամական։ Եվ այդ բոլորի պատճառը այնքան էլ տգիտությունը կամ ստորին ճաշակը չէին, ինչպես կարելի էր ենթադրել, այլ այն հանգամանքը, որ ներդաշնակությունը խորթ էր մեզ, մենք միշտ զգում էինք մեզ օտար եկեղեցում։ Ահա դրանով է բացատրվում հիշյալ երգեցողութեանց կարճատև գոյությունը, իսկ Եկմալյանի Պատարագը վերջին մահացու հարվածը տվեց դրանց։

...Այսքանը միայն կասենք, որ նրա պատարագի ներդաշնակությունը մեզ համար ինքնըստինքյան պատարագի ներդաշնակությունը չէ, այլ այդ ներդաշնակությամբ հայ երգի ոճը պահելը, միևնույն ժամանակ տալով նրան գեղարվեստական որոշ մշակում։

...Այդ աշխատանքով նա լուծում է արևելյան եղանակների վերաբերմամբ ներդաշնակության ամենաբարդ խնդիրները, որոնք ուրիշների համար շատ անգամ եղել են հանելուկ։ ...Եվ այդ, ապագա երաժիշտների համար, իրենց երաժշտական ամենաբարդ գործերում միշտ կլինի ուղեցույց փարոս» (տե՛ս «Թատրոն և երաժշտություն», 1916 թ., № 7)։

Որպես այդպիսին Եկմալյանի Պատարագը մեծ դեր էր կատարում նաև հայ ժողովրդի բազմաձայն երգեցողության զարգացման և ընդհանրացման գործում։ Այլ խոսքով՝ Եկմալյանի Պատարագով հարստացած Հայ Եկեղեցին հաղթանակում էր մշտապես և կանոնավոր կերպով գործող երաժշտական բազմամարդ լսարանի՝ բազմաձայնությունը տարածելու գործում։ Այս վերաբերում է մանավանդ հայկական գավառներին, որտեղ մեր ժողովուրդը մշակված ու ներդաշնակված ազգային բազմաձայն երգեր լսելու այլ հնարավորություն չուներ։ Ահա այս տեսակետից, Եկմալյանի Պատարագը ինչպես Եկեղեցուն, նույնպես և նույն չափով էլ Ազգին մատուցված ծառայություն էր։ Եվ այս զգացել ու ընդունել են մեր մշակույթի հին գործիչները։ Կարա-Մուրզան, որ 1892-ին «Մշակ»-ի № 42-ում հայ երաժշտության մեջ պատարագի ներդաշնակության մի շարք ձախողված փորձերը խիստ քննադատության էր ենթարկել, արտահայտվելով Եկմալյանի մասին, գրում էր, թե «Եկմալյանինը դեռ հայտնի չէ», որովհետև այն չէր լսել։ Իսկ 1897 թվականին ծանոթանալով Եկմալյանի Պատարագին, խանդավառված, հետևյալ նամակն է ուղարկում հեղինակին.

«Կցանկանայի այս րոպեիս Ձեզ մոտ լինել և անձամբ շնորհավորելով՝ հայտնել Ձեզ իմ թե՛ շնորհակալությունը և թե՛ այն հրճվանքը, որ ես ստացա Ձեր «Պատարագը» ուսումնասիրելիս, խմբին սովորեցնելիս, և հետվից լսելիս։ Ձեր գրվածքը թե՛ հիանալի է և թե՛ զարմանալի։ Հիանալի ներդաշնակությունն է լսվում ամեն տեղ, և զարմանալի գեղարվեստական հմտությամբ է գրված ամեն բան։ Ինքը աշխատանքը շատ մեծ է, և մեծ էլ տոկունություն եք գործ դրել, առանց որի ես համարում եմ գրեթե անկարելի այդպիսի մի խոշոր երկ այդքան ճշտությամբ լույս ընծայել։ Անձամբ շատ բան կարող էի ասել, բայց այժմ այսքանը կասեմ, որ դրանով Դուք պետք է պարծենաք, դա Ձեր գլուխ-գործոցն է։ Դրանով Դուք Ձեր հեղինակությունը անմահացրիք, և որ գլխավորն է՝ Ազգին մատուցիք այն մեծ ծառայությունը, որի ծարավը ամեն րոպե զգալի և զգալի էր լինում։ Պետք է աշխատել և ամեն ջանք գործ դնել, որ ինչքան կարելի է շատ և շուտ տարածվի այդ Պատարագը ամեն տեղ»։

Կոմիտաս վարդապետը Եկմալյանի Պատարագին նվիրված իր հոդվածում (տե՛ս «Արարատ», Էջմիածին, 1898 թ., էջ 111—117) գրում է.

«Հարգելի երաժիշտ պր. Մակար Եկմալյանը մեր երգեցողության ամայի անդաստանի մեջ ներդաշնակության անդրանիկ բուրաստանը տնկեց։ Սրտանց ուրախ ենք, որ հայերս այժմ կարող ենք պարծել, թե մենք էլ հետ չենք մնացել վսեմ գեղարվեստի և կատարելագույն երաժշտության զարգացումից»։

Արդարև Եկմալյանի Պատարագը հայկական երաժշտության այն գանձերից է, որը արժանավորապես գնահատվեց եվրոպական երաժշտական հասարակայնության կողմից, որը դրա միջոցով առաջին անգամ զգաց հայկական ազգային երաժշտական արվեստի գեղարվեստական ներգործությունն ու գեղեցկությունը։

Հետագայում, մասնագիտականորեն ծանոթանալով Եկմալյանի Պատարագին, այն բարձր են գնահատել իտալացի աշխարհահռչակ կոմպոզիտոր Ջ. Վերդին, ֆրանսիացի կոմպոզիտոր Սեն-Սանսը, Բուրգո-Դյուկուդրեն, ինչպես նաև եվրոպացի բազմաթիվ այլ նշանավոր երաժիշտներ ու երաժշտական հայտնի կազմակերպություններ։

1911 թվականի մարտի 13-ին Մոսկվայում բազմամարդ հասարակայնության ներկայությամբ կայանում է ազգային հոգևոր համերգ, որտեղ 252 հոգուց բաղկացած ռուսական երգեցիկ խումբը, սերբական, բուլղարական, ռուսական, հունական և վրացական հոգևոր մի շարք երգեր կատարելուց հետո, երգում է նաև Եկմալյանի «Գոհանամք»-ը, որը մեծ տպավորություն է թողնում բոլոր ունկնդիրների վրա։ Եվ հակառակ այն իրողության, որ հոգևոր երգի կատարումից հետո ծափ տալն

արգելվում է, Եկմալյանի «Գոհանամք»-ը արժանանում է բուռն ծափահարությունների և կրկնվում է հանդիսականների պահանջով։

Բացի Պատարագից, Եկմալյանը հորինել, մշակել և ներդաշնակել է հոգևոր այլ երգեր ևս, որոնցից են, օրինակ, «Շարական Վարդանանց», «Հրաշափառ Աստուած», «Աշխարհ ամենայն» և այլն։

Կարծես մոռացության է տրված ազգային հայրենասիրական երգերի (ինչպես օրինակ՝ «Կեցցե Զեյթունը», «Երբ որ բացվին», «Ողջույն ընդ քեզ Հայաստան», «Հերիք որդյակք», «Քաջեր դուք կանչեցեք» և այլն) հորինման, մշակման և ներդաշնակման բնագավառում Եկմալյանի կատարած աշխատանքը։

Եկմալյանի ստեղծագործական դիմանկարի լուսաբանված կողմերից մեկը՝ հայկական ժողովրդական և աշուղական երգերի ու պարեղանակների հավաքման, մշակման և ներդաշնակման բնագավառում նրա կատարած կարևոր գործն է։ Նա սկսել է հետաքրքրվել հայկական ժողովրդական երգով Գևորգյան ճեմարանում սովորելու տարիներից։ Ապա Պետերբուրգում սովորելու ժամանակ նա ներդաշնակել է Գարեգին սարկավագ Հովսեփյանի (հետագայում՝ Կաթողիկոս Կիլիկիայի) հավաքած և ձայնագրած մանկական երգերի մի ժողովածու՝ «Ենարիկ մանկականք»-ը, որի մեջ կային և հայկական ժողովրդական երգերի նմուշներ։ Հետագայում Եկմալյանը հետաքրքրվել է ժողովրդական երգերի հավաքման և ներդաշնակման հարցով, ինչպես կոնսերվատորիայում սովորելու և ուսումն ավարտելուց հետո Պետերբուրգում աշխատելու տարիներին, այնպես էլ Թիֆլիսում գտնվելու տարիներին։ Պատարագի վրա աշխատելուց բացի, նա աշխատում էր նաև ժողովրդական երգերի ուսումնասիրության և ներդաշնակման վրա։

Ստեփան Մալխասյանը, 1892 թվականին «Մշակ»-ի № 44-ում տպագրված իր «Վիեննայի երաժշտական ցուցահանդեսին առթիվ» հոդվածում արտահայտվելով այն մասին, որ Վիեննայի միջազգային երաժշտական ցուցահանդեսում հայկական ազգային երաժշտությունը պետք է հմուտ և ձեռնհաս երաժիշտների կողմից ներկայացվի, այդ գործի համար Եկմալյանի թեկնածությունը առաջարկելիս հետևյալն է գրում.

«1) Պր. Եկմալյան կատարյալ հմտություն ունի մեր եկեղեցական երաժշտության, և մեծ մասնակցություն է ունեցել ձայնագրելու այն հաստահատոր շարականը, որ տպագրվեց Էջմիածնում 1874 թվին, ինչպես վկայում է նույն հրատարակության առաջաբանը։ Նա եղել է Նիկողայոս Թաշճյանի ամենաառաջադեմ աշակերտը Կովկասում։

2) Պր. Եկմալյան լավ ծանոթ է մեր ժողովրդական երգերին, որոնք քանի տարուց ի վեր հավաքում է՝ մի լիակատար հավաքածու լույս ընծայելու համար։

3) Եկմալյան հմուտ է նաև արևելյան, մանավորապես պարսկական երաժշտության թե՛ գործնականապես և թե՛ տեսականապես։ Նա նվագում է և մի ասիական գործիքի վրա (թառ)։

4) Պր. Եկմալյան եռաձայն ներդաշնակությամբ պատրաստ ունի մեր ամբողջ պատարագը[1]։

5) Ներքո ստորագրյալս Պետերբուրգում մի քանի անգամ լսել եմ այդ շարադրությունը։ «Սուրբ Սուրբ»-ը, «Տէր ողորմեա»-ն, «Հայր մեր»-ը դեռ մինչև այժմ էլ հնչում են ականջիս...։

6) Եկմալյան քառաձայն պատրաստ ունի մոտ 12 հատ լուռ ասիական ոգով հայ ժողովրդական երգեր»։

Եկմալյանը հայկական ժողովրդական երգերի հավաքման գործով զբաղվել է մինչև իր կյանքի վերջը։ Այդ մասին է վկայում 1901 թվականի հունիսին Ախալցխայում գտնվող խմբավար Տեր-Կարապետյանին ուղղված նրա նամակը, որով խնդրում է իրեն ուղարկել Ախալցխայում երգվող ժողովրդական երգեր։

Հայկական ժողովրդական երգերի հավաքման և ներդաշնակման բնագավառում Եկմալյանի ստեղծագործական դիմանկարի լուսաբանման տեսակետից կարևորագույն նշանակություն ունեն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորում պահվող, կոմպոզիտորից մեզ հասած ձեռագրերը, որոնցում կան հայկական ժողովրդական և աշուղական մշակված ու ներդաշնակված երգերի և պարեղանակների գեղեցիկ նմուշներ։ Ներդաշնակության տեսակետից Եկմալյանի մշակած ժողովրդական երգերն ու պարեղանակները Պատարագի համեմատությամբ իրենցից ներկայացնում են քիչ այլ պատկեր։ Այստեղ կոմպոզիտորը մի կողմից շարունակելով կիրառել ակկորդների ուղղահայաց հաջորդականության սկզբունքը (դրա լավագույն օրինակներից մեկն է «Օրորոցային երգ»-ի հիանալի ներդաշնակությունը), մյուս կողմից աշխատում է ձայների հորիզոնական զարգացման վրա սևեռել ուշադրությունը։ Այս տեսակետից մի շարք երգեր, ինչպես օրինակ «Թույդ բարձր», «Անձրեն եկավ» և այլն, և դաշնամուրային մինիատյուրներից՝ «Պստի տղա»-ն, կարծես նա-

[1] Եկմալյանը այս ժամանակաշրջանում արդեն ավարտել էր Պատարագի քառաձայն ներդաշնակությունն էլ, սակայն դա հայտնի չէր Մալխասյանին։

խաղնեում են ժողովրդական երգերի ու պարեղանակների մշակման Կոմիտասյան սկըզբունքները։ Հայկական աշուղական տիպի մեղեդիներից իր վարպետ մշակմամբ և դաշնամուրային արտահայտիչ նվագակցությամբ աչքի է ընկնում «Թաղ ազբրի մոտին» երգը, որը կարելի է համարել հայկական ռոմանսի առաջին ու գեղեցիկ նմուշներից մեկը։ Նշենք և այն, որ Եկմալյանի գործունեությունը այս բնագավառում ևս, վերջին հաշվով, հանգեց պրոֆեսիոնալիզմի հիմնադրման։ Ժողովրդական երգերի ու պարեղանակների նրա մշակումները հայկական ազգային երաժշտական արվեստի զարգացման մեջ ունեցան շրջադարձային խոշոր նշանակություն, տեղ գրավելով Կարա-Մուրզայից մինչև Կոմիտասյան փառապանծ արվեստը երկարող ճանապարհի կենտրոնում։

Վերևում մեջ բերված Մալխասյանի այն պնդումը, թե Եկմալյանը լավ ծանոթ չլինելով մեր ժողովրդական երգերին, քանի տարուց ի վեր դրանք հավաքում էր, «մի կատարյալ հավաքածու լույս ընծայելու համար», շատ կարևոր մի փաստ է Եկմալյանի գիտական հետաքրքրությունների պարզաբանման տեսակետից։ Այն գալիս է հիմնավորելու կոմպոզիտորի մասին մեր ունեցած համոզմունքը, որ նա զբաղվել է նաև հայկական ժողովրդական երգերի հավաքման և ներդաշնակման շնորհակալ աշխատանքով[1], միևնույն ժամանակ հայկական երաժշտագիտության առաջ խնդիր դնելով տվյալ տեսանկյունից էլ ուսումնասիրել նրա ձեռագրերը, մանավանդ որ նրանցում, բացի հայկական ժողովրդական և աշուղական երգերի գեղարվեստական արժեք ներկայացնող նմուշներից[2], կան նաև քրդական, վրացական և ասորական ժողովրդական երգեր։ Եթե սրան ավելացնենք և այն, թե օրինակ Եկմալյանի ձեռագրերում գտնվող օրկեստրային էսքիզների հիմքում ընկած է արաբական շուրջպարային մի թեմա, և որ նա հմուտ էր նաև արևելյան, մասնավորապես պարսկական երաժշտության գործնականապես և տեսականապես, ինչպես վկայում է Մալխասյանը, ապա կհամոզվենք, թե իրավի լայնահորիզոն էր նրա գիտական ստեղծագործական հետաքրքրությունների տեսադաշտը։

Հայկական, արևելյան ու եվրոպական երաժշտության տեսական հիմունքներին քաջատեղյակ Եկմալյանը զբաղվել է նաև իր ժամանակի շատերին հուզող հայկական երաժշտության լուծման հարցով, այն քննելով ազգային ինքնուրույնության տեսանկյունից։ Պատարագի առաջաբանում Եկմալյանը արտահայտում է այն սխալ միտքը, թե հայկական երաժշտությունը պարսկա-արաբականի մի մասն է։ Մեր երաժշտական արվեստի մասին անցյալում բոլորանցած այս սխալ պատկերացումը քննադատվել և ի վերջո ջախջախվել է Կոմիտաս վարդապետի կողմից։ Այնուամենայնիվ, Եկմալյանի այդ տեսությունը (մի բան, որ գործնականում չի արտացոլվել կոմպոզիտորի ստեղծագործություններում), սխալ լինելով հանդերձ, հայկական երաժշտագիտական մտքի կազմավորման ընթացքի մի որոշ աստիճանն էր ներկայացնում իրենից այդ օրերին։

Սակայն Եկմալյանի ստեղծագործական դիմանկարի մի այլ հետաքրքրական կողմն էլ կազմում են նրա այն երկերը, որոնք քիչ են կապված հայկական ազգային երաժըշտության հետ։ Այս տիպի գործերից են 1892 թվականին հրատարակված դաշնամուրային գեղեցիկ «Նոկտյուրն»-ը, «Երգ առանց խոսքի», «Ռոմանս» (Հայնեի խոսքերի վրա) և մի շարք այլ պիեսներ, որոնք բոլոր երևույթին գրված են եղել դեռևս Պետերբուրգում ուսանելու ժամանակամիջոցում։ Այնուհետև, Եկմալյանի ձեռագրերում կա հոգևոր մի երգ՝ «Kyrie», որը գրված է չորս ձայնի համար, կրկնակի կանոնի պոլիֆոնիկ բարդ ձևով։ Ամենայն հավանականությամբ, դա Եկմալյանի հաջող աշխատանքներից մեկն է։ Եվ վերջապես, այս տիպի գործերի շարքին պետք է դասել նաև նրա օրկեստրային էսքիզները և «Վարդը» օպերա կանտատան։ Օրկեստրային էսքիզների հիմքում ընկած է արաբական շուրջպարային մի թեմա։ Սա-

[1] Շատերը թերահավատություն են հանդես բերում Եկմալյանի կողմից ժողովրդական երգի հավաքման աշխատանքների նկատմամբ, վկայակոչելով այն, թե նա երբեք չի շրջել հայկական գավառները։ Բայց ախր Եկմալյանը հաճախ էր գնում իր ծննդավայրը՝ Վաղարշապատ։ 1893 թվականի ամբողջ ամառը նա անց է կացրել Էջմիածնում, Գևորգյան Ճեմարանի երգչախմբին Պատարագը սովորեցնելու համար։ Այս և նման առիթներով նա չէ՞ր կարող Էջմիածնում և մոտակա գյուղերում ժողովրդական երգեր ձայնագրել։ Հետո՝ նա հաճախ երգել էր տալիս Ներսիսյան դպրոցի հայկական այլևայլ գավառներից եկած աշակերտին, ձայնագրելով նրանց իմացած գեղջկական խաղերը։ Եվ վերջապես՝ Եկմալյանը կարող էր այս կամ այն գավառում աշխատող ծանոթ խմբավարներից խնդրել, որ իրեն ուղարկեն տեղում տարածված ժողովրդական երգեր, ինչպես այդ վկայում է, օրինակ, խմբավար Տեր-Կարապետյանին ուղղված նամակը։

[2] Պետք է ասել, որ ժողովրդական երգերը հավաքելիս, Եկմալյանի նախորդները ընտրություն չէին կատարում, ձայնագրելով պատահածը։ Իսկ աշուղական երգերի ձայնագրման և մշակման խնդիրը սկզբունքային նշանակություն ունեցող հարց է։ Եկմալյանը առաջին հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորն էր, որ նախաձեռնեց այդ գործը։

կայն, դատելով ներդաշնակությունից և գործիքավորման համար պատրաստված նախագծից, այդ ստեղծագործությունը իրենից պիտի ներկայացներ արևելյան թեմաներով գրված, բայց ըստ էության եվրոպական տիպի երաժշտական երկ։ «Վարդը» օպերա-կանտատայից մեզ հասած հատվածներում կան երաժշտական արտահայտչական պոլիֆոնիկ միջոցների վարպետ կիրառումներ։ Նրա վերոհիշյալ «Kyrie» ստեղծագործությունը նույնպես վկայում է Եկմալյանի կողմից պոլիֆոնիկ ձևերին տիրապետելու մասին։ «Նոկտյուրն»-ը, իր համեմատաբար պարզ ֆակտուրայով, հանդես է բերում Եկմալյանի հմտությունը դաշնամուրային գրության բնագավառում։ Կոմպոզիտորի ստեղծագործական այս և նման հնարավորությունները հանդես չեն եկել, կամ քիչ են հանդես եկել ազգային երաժշտության հետ ուղղակի կապ ունեցող նրա երկերում։

Եկմալյանն ունեցել է նաև խմբավարական-մանկավարժական բեղուն գործունեություն։

Ներսիսյան դպրոցի երգեցիկ խմբի հետ ազգային հայրենասիրական երգերից բաղկացած կամ այդպիսի երգեր էլ պարունակող ծրագրերով Եկմալյանի տված համերգների մասին մեր ծանոթությունները դեռևս քիչ են։ Այդ երգչախումբը կատարո՞ւմ էր արդյոք Եկմալյանի ներդաշնակած ժողովրդական երգերը։ Հավանաբար. բայց այս հարցն էլ կարոտ է հետագա լուսաբանման։ Այնպես որ, մենք այստեղ նորից պետք է նշենք Եկմալյանի Ներսիսյան դպրոցի երգչախմբի հետ Պատարագի կատարողական կազմի վրա նրա տարած աշխատանքը և այդ աշխատանքի պատմական նշանակությունը հայկական խմբերգային երգեցողության զարգացման մեջ։

Շատ հետաքրքիր կլիներ համեմատել Եկմալյանի երաժշտական-հասարակական գործունեությունը նրա ժամանակակից Քրիստափոր Կարա-Մուրզայի նույնպիսի գործունեության հետ։ Եկմալյանն ու Կարա-Մուրզան ըստ էության տարբեր, բայց իրար լրացնող ու ամբողջացնող միջոցներով ձգտել են հասնել (և փաստորեն հասան) մի ընդհանուր նպատակի։ Այն ժամանակ, երբ կազմակերպչական բացառիկ տաղանդի տեր Կարա-Մուրզան շրջելով քաղաքից քաղաք, գավառից գավառ, երբ նույնիսկ 15—20 օրում գյուղացիներից կազմված երգեցիկ խմբերով բազմաթիվ համերգներ էր տալիս, պրոֆեսիոնալիզմի՝ վրա շեշտը դնող խստապահանջ Եկմալյանը իր գործունեության տալիս էր ավելի ու ավելի «հավաքված» ու «խորացված» բնույթ։ Այն ժամանակ, երբ Կարա-Մուրզան հայ ժողովրդի մեջ բազմաձայնությունը տարածելու համար, մանավանդ գավառներում, կատարման տեսակետից այնքան էլ խստապահանջություն հանդես չէր բերում, Եկմալյանը, խմբերգային կատարման տրադիցիաներ դեռ նոր ստեղծող հայ ժողովրդի մեջ այդ գործը սկզբից ևեթ դնում էր բարձր պրոֆեսիոնալիզմի հիմքերի վրա։ Եվ երբ Ներսիսյան դպրոցի երգչախումբը, Եկմալյանի տարիների աշխատանքով, հասել էր գեղարվեստական-կատարողական նախանձելի մակարդակի, կոմպոզիտորը ծրագրում էր հայաշատ այլ քաղաքներում և հայկական գավառներում աշխատելու համար խմբավարներ պատրաստել, մանավանդ 1896 թվականից սկսած, երբ հայաբնակ շատ վայրերից դիմում էին նրան, խնդրելով Պատարագը սովորեցնելու և ղեկավարելու համար խմբավարներ ուղարկել։ Բայց նա այնքան լուրջ վերաբերմունք էր ցույց տալիս դեպի այդպիսի աշխատանքը, որ Ներսիսյան դպրանոցում մեկ տարվա ընթացքում օգնական երկու դասատուների հետ շաբաթական 32 ժամ պարապմունքներ անցկացնելով ուսանողներին դասավանդում էր երաժշտական թեորիա, երաժշտության պատմություն, դաշնամուր և սոլֆեջիո։

1897-ին «Նոր դար»-ի № 135-ում տպագրված իր «Նամակ»-ում Եկմալյանը գրում է.

«Ներդաշնակած պատարագի երգեցողության ճաշակը ժողովրդի մեջ մտցնելով, զանազան տեղերից եկեղեցյաց երեսփոխաններ դիմում են ինձ՝ խնդրելով, որ իմ աշակերտներից ցույց տամ հարմար անձինք, որպեսզի խմբապետություն անեն եկեղեցիներում։ Որովհետև քառաձայն և եռաձայն խումբ պատրաստելու և ղեկավարելու համար առանձին մասնագիտական ուսում և վարժություն է պահանջվում, որոնք չեն տրվում Ներսիսյան դպրոցի ծրագրով, ուստի ես չեմ կարողանում բավարարություն տալ հիշյալ խնդիրներին։ Բայց միևնույն ժամանակ զգալով հետզհետե աճող պետքը բանիմաց խմբապետների, ինքս մտադիր եմ առաջիկա սեպտեմբերից մասնավոր պարապմունք սահմանել, այդպիսի խմբապետներ պատրաստելու համար։ Ուստի սրանով առաջարկում եմ պ. պ. երեսփոխաններին, որոնք ցանկանում են իրենց եկեղեցիներում քառաձայն խումբ ունենալ, ընտրել հարմար մարդիկ, եվրոպական և հայկական ձայնագրության ծանոթ և բավարար ձայնով, և ուղարկել ինձ մոտ՝ խմբապետության պատրաստելու»։

(Շարունակելի)